



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ.....	2
ՍԱՐԴԱՐԱՊԱՏԵԱՆ ԼԻՆԵԼ-ՉԼԻՆԵԼՈՒ ԴԱՍԵՐԸ ՄԻՇՏ Ի ԶՕՐՈՒ ԿԸ ՄՆԱՆ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	5
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ «ԱՐԱՐԱՏ» ՌԱԶՄԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆ, ՊԱՏՄԱԲԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԳԷՏ ԱՐՄԷՆ ԱՅՎԱԶԵԱՆԻ ՀԵՏ.....	5
ԿԻՊՐԱՀԱՅ	10
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 111-ԴԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՆԻԿՈՍԻՈՅ ՄԷՋ	10
ՎԱՐԴԳԷՍ ՄԱՀՏԵՍԵԱՆ ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՀՌՉԱԿՈՒԱԾ.....	13
ԿԻՊՐՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ Ս. ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԶԵՌՆԱՐԿ.....	14
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	16
ՀՈՐՄՈՒԶԷՆ ՄԻՆՉԵԻ ԼԻԲԱՆԱՆ. ԽԱՂԻ ՆՈՐ ՕՐԷՆՔՆԵՐ	16
ՆԱԽԱԳԱՀ ՏԱՆԸԼՏ ԹՐԱՍՓ ԿՈՂՄՆԱԿԻՑ Է ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՂՄԷ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՐԱՅՄԱՆ.....	19
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿՐԿՆՈՒԻ՞՞. ՎՐԱՅԵԱՆ-1920 ԵՒ ՓԱՇՒՆԵԱՆ-2026	22
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ.....	26
ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԼՈՔ ՄԱՅՐԵՆԻՆ ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ. ԱՐԵՒՍՏԱՀԱՅԵՐԷՆԸ ԵՒ ՄԻԶՍԵՐՆԴԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ.....	29
ՏԵՍԱԿԷՏ	34
«ԻՐԱՔԱՆՉԻՐ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ, ԱՄԵՆԱՄԵԾ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ԱՆՅԱԶՈՂ ԱՌԱԶՆՈՐԴՆ Է».....	34
ԸՍՈ՞ՂԸ... ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆՆ Է.....	34
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ Հ.Հ. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ	39
ՀԱՅԵՐԸ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ (CRITICAL THINKING) ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ.....	41
ԹՇՆԱՄԻՆ՝ ԹՇՆԱՄԻ Է՛, ՅՆՈՐ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ.....	43
ԱՅԼԱՊԷՄ՝ ՉԻՔ ՃԱՆԱՉՈՒՄ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ	43
ՀԱՅԱՍՏԱՆ ԴԷՊԻ Ո՞ՒՐ	47
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	50
ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ	50
ՏՈՒՆ՝ ՔԱՂՑՐԻԿ ՏՈՒՆ.....	54
ՆԿԱՐԷՆ ԿԱԽՈՒԱԾ ՊԱՏԳԱՄԸ	56
ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՄ՝ ՀԱԼԷՊԻ ՀԱԶԱՐԱՄԵԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ Է.....	59
ԽՈՀԱԳՐՈՒԹԻՒՆ	62
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	64

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԵԱՆ ԼԻՆԵԼ-ՉԼԻՆԵԼՈՒ ԴԱՍԵՐԸ ՄԻՇՏ Ի ԶՕՐՈՒ ԿՐ ՄՆԱՆ



Ժողովուրդներու պատմութեան մէջ կ'ըլլան հրաշագոր պահեր, երբ ճակատագրականօրէն կը խտանան պատմական հազարամեայ փորձն ու իմաստութիւնը, ապրելու եւ խիզախելու ոգին, հաւաքական ու միասնական ոյժը եւ այդ բոլորի կուտակումով

անկարելին կը դառնայ կարելի: Մահուան անդունդին կանգնած ժողովուրդը կու տայ իր ԼԻՆԵԼՈՒ պատասխանը եւ կ'ապահովէ իր տեղն ու դերը այս արեւի տակ:

Այդպիսի պահ էր Սարդարապատը: Թուրքը՝ կոտորելէ ետք արեւմտահայութիւնը եւ հայաթափելէ ետք ամբողջ արեւմտահայաստանը, անյագուրդ եւ մոլեգին ախորժակով կու գար խժոեղու արեւելահայաստանը եւս, վերջ դնելով հայութեան գոյութեան եւ յարատեւման վերջին ճիգերուն: Յիշենք թուրք ղեկավարներէն՝ Պեհաետտին Շաքիրի խոստովանութիւնը. «Հայերդ կանգնած էք մեր համիսլամական ու համաթրքական սրբազան բաղձանքների իրականացման ճամբի վրայ...Մենք տարերայնօրէն հարկադրուած ենք ոչնչացնել այն ամէնը որ արգելք է հանդիսանում մեր ազգային այդ սրբազան բաղձանքների իրականացմանը...» (Սարդարապատ, Բագրատ Ուլուբաբեան): Մա բանթորանական ռազմաքաղաքական ծրագիր էր որոշապէս:

Յատկանշական է Ս.Էջմիածինի Մայր Աթոռի Գահակալ, Վեհափառ Հայրապետի իմաստալից ու սրտագին կոչը հայ ժողովուրդին, որ կանգնած էր մահու եւ կենաց վիճին առջեւ. «Ժողովուրդ հայոց, հայրենիքը մեր ծանրագոյն վտանգի տակ է...Թուրքը՝ մեր բանական հօտի արնախում ոսոխը, նուաճել է Ալեքսանդրապոլը, շարժում է դէպի սիրտը մեր երկրի, մեր հաւատի, մեր կենսագրութեան. Գալիս է Էջմիածնի վրայ...Ես չեմ հեռանայ Հայոց Առաքելական Եկեղեցու օճախից: Եթէ հայոց զինուորութիւնն ու ինքը՝ հայ ժողովուրդը, չեն կարողանայ թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթէ ի գորտու չեն փրկելու մեր սրբութիւնները, ապա թող ես նահատակուեմ հէնց այստեղ շեմի վրայ Մայր Աթոռի...: Թուրքը չի կշտացել մեր ժողովրդի արեւմտեան կիսով, հիմա էլ այս մի կէսի վրայ է եկել անյագուրդ եւ մոլեգնած: Եւ եթէ այստեղ էլ յաղթեց, դա կը լինի ստոյգ վերջը մեր



ազգային գոյութեան: Մի՞ թէ մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օճախի կրակը, մեր ազգային գոյի հիմքերը: Իսկ եթէ եկել է վերջը, ապա ինչո՞ւ այն չընդունենք պատուով ու քաջութեամբ եւ ոչ թէ ողորմելի գեռունի պէս ոսոխի առաջ սողալով... Ինչո՞ւ ազգովին չբարձրանանք, չկանգնենք թշնամու դէմ, որ գալիս է անդրաբարձեան իր թերեւ յաջողութիւններով յղիացած եւ մեր արեան վերջին կաթիլին ծարաւի...»:

Այս ոգեշունչ խօսքերով ոտքի կ'ելլէին բոլորը՝ զօրավար ու զինուոր, աշխարհական թէ հոգեւորական, բանուոր ու ազնուական, կին թէ տղամարդ՝ միական ու միասիրտ, պաշտպանելու մեր երկրի վերջին մնացորդացը՝ արիւնարբու ոսոխի երախէն: Միաժամանակ, Արարատեան երկրի գանգերը կը դողանջէին անդադար, հայրենիքի փրկութեան համար ահագանգի տակ պահելով հող ու երկինք:

Հաւաքական ոյժի, միասնական կամքի եւ հերոսական ոգիի հրեղէն ժայթքումով իրագործուեցան Սարդարապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ-Ապարանի հերոսամարտերու փառապանծ յաղթանակները, որոնց շնորհիւ ծնունդ առաւ Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը շուրջ հինգդարեայ պետականագուրկ կեանքէ ետք: Սա ազգային վերածնունդի յոյս ու լոյս էր եղեռնագարկ, արիւնաքամ մեր ժողովուրդին համար, որ իր արեան գնով նուաճեց իր սրտաչափ տեղը համաշխարհային քարտէսին վրայ:

Սարդարապատի մէջ յաղթեց հայուն հաւաքական անբեկանելի վճռակամութիւնը ՏԵՐ կանգնելու իր հայրենեաց վերջին հողակտորին... չսպաւիհնելով որեւէ այլ ուժի, այլ միայն իր սեփական բռունցքուած ոյժին:

-Սարդարապատը ամէնօրեայ կոչ է՝ տէր կանգնելու մեր երկրին, հայրենեաց հողին, յանուն մեր լինելութեան եւ ընդդէմ հազար ու մէկ վտանգներուն, որոնք կը սպառնան այդ լինելութեան՝ ներքին թէ արտաքին...

-Մեր փրկութիւնը միայն ու միայն մեր ՀԱԻԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ, ՄԵՐ ՀԱԻԱՔԱԿԱՆ ԿԱՍՔԻՆ մէջ է, անոնցմէ բխող համազգային ճիշդ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ մէջ է, ՀԶՕՐԱՆԱԼՈՒ մէջ է: Ուրիշին վրայ յոյս դնելը դարձեալ եւ դարձեալ մեր միամիտ ԱՊԱԻՆՈՂԱԿԱՆ հիւանդութեան մէկ դրսեւորումն է, որ քանիցս մեզ հիասթափեցուցած է... Սա չի նշանակեր երբեք դաշնակիցներ չունենալ եւ հմուտ դիւանագիտութիւն չմշակել բոլոր երկիրներու հետ ալ: Բայց մեր յոյսն ու ապաւենը ՄԵՆՔ ենք վերջ ի վերջոյ:

-Բանթորանական ծրագիրը ի զօրու կը մնայ հիմա եւս: Հայ պետական-քաղաքական միտքը շեշտակի նայելու է այս իրականութեան եւ ըստ այդմ գործէ: Աշխարհաքաղաքական յարափոփոխ եւ խառնաշփոթ իրավիճակին մէջ, բանթորանական ծրագիրը կրնայ անուն փոխել, սակայն նոյնը կը մնայ ըստ էութեան: Օդին մէջ կը հնչեն շարունակ «արեւմտեան ատրպէճան», «Զանգեզուրի միջանցք» եւ նման բարբաջանքներ...: Այս ծրագրին դէմ կարելի է պայքարիլ միայն հայոց պետականութիւնը հզօրացնելով ամէն մէկս իւրովի, պետական շահը գերադաս համարելով բոլոր տեսակի անձնական, խմբակային ու հատուածական շահերէն ու նկատառումներէն:

Հարց տալու ենք վերջապէս՝



- Ի՞նչ կը մնայ Սարդարապատէն, եթէ հայ մարդը՝ փնտռելով լոկ բարօր, բարեկեցիկ կեանքը, լքէ իր հայրենեաց հողը, իր արմատները, իր ազգութիւնը եւ երեսուն խեղճ արծաթով ծախէ իր ազգային էութիւնը...

-Ի՞նչ կը մնայ Սարդարապատէն, եթէ ան ապրելով հանդերձ իր հայրենեաց հողին վրայ, կը խորթանայ անոր ոգեղէնութեան, անոր պատմութեան ու մշակոյթին, անոր ազգային-հոգեմտաւոր արժէքներուն: Այլ խօսքով՝ եթէ ան հրաժարի իր ինքնութենէն:

Ի՞նչ կը մնայ Սարդարապատէն, եթէ ան նսեմացնէ իր ազգային սրբութիւնները, խորհրդանիշերը, իր պատմական անցեալի յիշողութիւնը, իր ազգային իտէալներն ու արժէքներու համակարգը, դաւաճանէ Արարատին: Իրական Հայաստանը ուժեղացնելուն հետ միատեղ, մենք պիտի չմոռնանք երբեք մեր պատմական հայրենիքը, մեր պահանջատիրութիւնը, բայց առանց պռոշտախօսութեան, այլ՝ միշտ մտածելով ու գործելով, նոր յաղթանակներ կերտելու վճռակամութեամբ:

-Ի՞նչ կը մնայ Սարդարապատէն, եթէ հայութիւնը պառակտուի ու մասնատուի բաժանաբաժան, եւ իր նեղ անձնական, խմբակային, հատուածական շահերը գերիվեր նկատէ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ նկատառումներէն՝ Հայաստանի մէջ թէ Սփիւռքի տարածքին:

-Ի՞նչ կը մնայ Սարդարապատէն, եթէ Հայաստան եւ Սփիւռք կամ սփիւռքներ չներդաշնակեն իրենց ազգային-քաղաքական-մշակութային գործունէութիւնը նպատակասլաց կերպով եւ ռազմավարական ու մարտավարական ծրագրաւորումով չգործեն յանուն ազգի յարատեւման, յանուն հայկական պետականութեան հզօրացման, յանուն համահայկական տեսլականի իրականացման: Հայաստանի եւ Սփիւռքի տարանջատումը վերջն է մեր գոյութեան, ազգային մեր ինքնութեան յարատեւման ու զարգացման:

Համաշխարհայնացած եւ վտանգալից աշխարհիս մէջ յատկապէս, լինել-չլինելու նորանոր մարտահրաւերներու դէմ յանդիման, Սարդարապատը կո՛չ ու հրաւէ՛ր է վերստին յայտնաբերելու հայուն իրաւ հայրենասիրութեան ու հայրենատիրութեան ոգին, հայութեան հաւաքական ոյժը, վերստին արժեւորելու հայրենիքի լուսեղէն եւ ոգեղէն խորհուրդը...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ «ԱՐԱՐԱՏ» ՌԱԶՄԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆ, ՊԱՏՄԱԲԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԳԷՏ ԱՐՄԷՆ ԱՅՎԱԶԵԱՆԻ ՀԵՏ

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԹՈ՛Ղ ԼԻՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՕՐԷՆՔԸ»



— Պարո՛ն Այվազեան, աշխարհաքաղաքական արդի իրավիճակում Հայոց ցեղասպանութեան պահանջատիրութիւնը ի՞նչ դրական արդիւնքների և բացասական հետևանքների կարող է յանգեցնել: Հակաստ՝ ո՞ւմ է արդէօք Հայոց ցեղասպանութեան հիմնախնդրի զարգացումը Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեանը, և մի՞ թէ պէտք է ուրանալ արևմտահայութեան ժառանգորդ սփիւռքահայութեան ազգային իրաւունքները, ինչպէս դա արւում է արցախահայութեան նկատմամբ:

— Այդ հարցին պատասխանելու համար նախ պէտք է յստակ պատկերացնել, թէ ինչ նպատակներ էին հետապնդում Հայոց ցեղասպանութեան կազմակերպիչները՝ Արդու Համիդը և երիտթուրքերը, և համեմատել դրանք այսօրուայ Թուրքիայի և Ադրբեջանի ղեկավարութեան՝ Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ վարած քաղաքականութեան հետ:

1893–1923 թթ. տեղի ունեցած Հայոց ցեղասպանութիւնն ունեցել է չորս հիմնական փուլ, որոնց ընթացքում հայկական քաղաքակրթութիւնը բնաջնջուել է իր բնիկ տարածքի մեծ մասից՝ իւլեով աւելի քան 2 միլիոն հայերի կեանք: Մասնաւորապէս՝ շուրջ 300 000 հայ ոչնչացուել է 1894–1896 թթ., 30 000՝ 1909 թ., 1,5 միլիոն՝ 1915–1916 թթ., և շուրջ 300 000՝ 1917–1922 թթ.:

Ցեղասպանութիւնն ուղղուած էր ամբողջ հայ ժողովրդի դէմ: Այն իրականացուել է ոչ միայն Արևմտեան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանեան կայսրութեան այլ շրջաններում, այլև Արևելեան Հայաստանի այն տարածքներում, ուր հասել են թուրքական ջարդարար զօրքերն ու նրանց դաշնակից կովկասեան թաթարական զինուած խմբերը: Հետևաբար, ցեղասպանութեան զոհերի ժառանգները ոչ միայն սփիւռքահայերն են, այլև ներկայիս



Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները՝ առանց բացառութեան, քանի որ այն ուղղուած էր ամբողջ հայության դէմ: Առաւել ևս, որ Հայաստանի Հանրապետութեան բնակչութեան զգալի մասը Արևմտեան Հայաստանի և Կիլիկիայի հայութեան ուղղակի ժառանգներն են:

Աւելին, միայն Հայաստանի Հանրապետութիւնը՝ որպէս միջազգայնօրէն ճանաչուած պետութիւն, ունի իրաւունք և հնարաւորութիւն միջազգային իրաւական ատեաններում բարձրացնելու Հայոց ցեղասպանութեան հարցը:

Ո՞րն էր Հայոց ցեղասպանութեան բուն նպատակը: Այն ոչ այնքան հայերի՝ որպէս առանձին էթնոսի ֆիզիկական բնաջնջումն էր, որքան Հայաստանի ոչնչացումը՝ որպէս մի երկրի, որն ունէր անկախ պետականութիւնը վերահաստատելու ժողովրդագրական, գաղափարական, քաղաքական և մշակութային բոլոր նախադրեալները: Վերջին հաշուով, ցեղասպանութիւնն ուղղուած էր Հայաստանի պետականութեան վերականգնման հնարաւորութեան դէմ: Ըստ էութեան, հայերը բնաջնջուեցին հենց որպէս այդ քաղաքական հնարաւորութեան կրողներ:

Արևմտեան Հայաստանից և Կիլիկիայից դուրս՝ Օսմանեան կայսրութեան այլ շրջաններում հայերի ոչնչացումը նոյնպէս նպատակ ունէր վերացնել հայերի հետագայ որևէ պահանջները իրենց պատմական հայրենիքի նկատմամբ: Այսպիսով, նպատակը Հայաստանի ոչնչացումն էր, իսկ միջոցը՝ հայերի բնաջնջումը: Ոչնչացուեցին հայ ժողովրդի վերնախաւը, հասարակական կառուցուածքը, հազարամեակների պատմութիւն ունեցող կրթական, եկեղեցական և համայնքային ճիւղաւորուած համակարգերը, ինչպէս նաև այդ հողում ստեղծուած ողջ հայկական մշակոյթը: Եւ ամենակարևորը՝ ցեղասպանութեան հետևանքով հայութիւնը կորցրեց իր հինգհազարամեայ կենսատարածքի մեծ մասը:

Արդ, փոխուե՞լ է արդեօք Թուրքիայի և Ադրբեջանի քաղաքականութիւնը Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ: 1991 թ. ԽՍՀՄ փլուզումից անմիջապէս յետոյ այդ ֆաշիստական պետութիւնները որդեգրեցին նոյն հակահայկական ուղեգիծը՝ նպատակ ունենալով թուլացնել և ոչնչացնել Հայաստանը: Սկզբում իրականացուեց Ադրբեջանի ԽՍՀ տարածքում մնացած հայաբնակ շրջանների հայաթափումը, այնուհետև դատարկուեց Արցախը, ապա նման փորձեր կատարուեցին Հայաստանի Հանրապետութեան դէմ, յատկապէս Միւնիքում և ՀՀ արևելեան ամբողջ սահմանի երկայնքով:

Այս պահի դրութեամբ, յաղթահարելով հայ ժողովրդի կատաղի դիմադրութիւնը, նրանց յաջողուել է իրականացնել այդ հրէշաւոր ծրագրի առաջին փուլը. Արցախը հայաթափուել է, իսկ Հայաստանի Հանրապետութեան տարածքից բռնազավթուել է շուրջ 240 քռ կմ՝ ներառեալ ռազմավարական նշանակութեան բարձունքներ: Հայաստանի նկատմամբ քաղաքական ճնշումը աստիճանաբար աւելի ու աւելի աճում է:

Ադրբեջանը և նրան մշտապէս ուղղորդող ու թիկունքն ապահովող Թուրքիան Հայաստանից, ըստ էութեան, պահանջում են հրաժարուել ինքնիշխան պետականութեան լիարժէք իրացումից և ենթարկուել իրենց պայմաններին՝ կրճատել և, ըստ էութեան, լուծարել Հայկական բանակը, տրամադրել Միւնիքով անցնող ճանապարհներն ու հաղորդակցութիւնները, փոփոխել Սահմանադրութիւնը, վերանայել պատմութեան



դասագրքերը, հրաժարուել Հայոց ցեղասպանութեան յիշողութիւնից և Արցախ վերադարձի անքակտելի իրաւունքից, Հայաստանում բնակաւորել հարիւր հազարաւոր ադրբեջանցիներ՝ նրանց ուղեկցող թուրքական «հսկիչ» զօրքերով հանդերձ:

Այս պահանջները վկայում են, որ Թուրքիայի և Ադրբեջանի նպատակներն ու մեթոդները չեն փոխուել: Հետևաբար, Հայաստանի Հանրապետութիւնն ու հայութիւնը պետք է համախմբեն իրենց ամբողջ ներուժը՝ քաղաքական, դիւանագիտական, տնտեսական և պաշտպանական ոլորտներում, արդիւնաւետօրէն դիմակայելու համար նրանց հայասպան ծրագրերին: Ուրիշ, այլընտրանքային ճանապարհ պարզապէս գոյութիւն չունի: Յատկապէս կարևոր է յուսալի դաշնակիցների ապահովումը, որը լիովին լուծելի խնդիր է:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան վարած քաղաքականութիւնը ներկայումս փաստացի միտուած է Հայ դատի շարունակութեան դէմ: Առերևոյթ քօղարկումով փորձ է արւում ոչ միայն հայ ժողովրդի գիտակցութիւնից արմատախիլ անելու Հայոց ցեղասպանութեան յիշողութիւնն ու պահանջատիրութիւնը, պատմական Հայաստանի իրողութիւնը՝ բռնազաւթուած Արևմտեան Հայաստանով և Արևելահայաստանի յայտնի շրջաններով, այլև կասկածի տակ է դրւում Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը, սակարկւում միլիոնաւոր հայ նահատակների թիւը, պետական արտաքին քաղաքականութեամբ անգործութեան դատապարտւում Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումն ու դատապարտումը: Այդ ամէնն արւում է հետևողականօրէն՝ Արցախից սկսած մինչև Արարատ, Հայոց պատմութեան գաղափարական վերախմբագրումից մինչև Հայ Եկեղեցու կազմաքանդմանն ուղղուած քաղաքական արշաւ:

-Ինչպէ՞ս կը մեկնաբանէք այս ամէնը՝ աշխարհաքաղաքական ճնշո՞ւմ և ներքին անելանելիութի՞ւն, աշխարհաքաղաքացիութի՞ւն՝ ազգային ինքնութեան ուրացմամբ և հայրենասիրութեան ոչնչացմամբ, թէ՞ մի այլ երևոյթ:

— Թէ ինչպէս են Հայաստանի Հանրապետութիւնում իշխանութեան եկել ուժեր, որոնք բացայայտօրէն համագործակցում են թշնամու հետ՝ ի վնաս մեր պետութեան և ժողովրդի, առաւել առարկայականօրէն կը պարզուի ապագայում: Այժմ կարևորն այն է, որ ՀՀ ներկայ իշխանութիւնների քաղաքականութիւնը քայքայում է երկրի ինքնիշխանութիւնը տարբեր ուղղութիւններով: Իրավիճակը բարդ է և վտանգաւոր:

Չափազանց խօսուն էր Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օրուան յաջորդ իսկ օրը Երևանում աղմկոտ բացուստօնի կազմակերպումը: Դա, անշուշտ, թուրքական պատուէր էր՝ աննախադէպ յարձակում հայոց յիշողութեան, արժանապատուութեան, արժէքների, պետականութեան և առհասարակ հայկականութեան դէմ: Քանի դեռ ՀՀ-ում տէր ու տիրակալը կոլաբորացիոնիստական ուժերն են՝ մշակութային միջոցառումների անուան տակ իրականացուող նման վնասարարական դրսևորումները, հաւանաբար, կը շարունակուեն և նոյնիսկ կը յաճախանան:

Պէտք է գիտակցել, որ Փաշինեանն ու ՔՊ-ն սաստկացնելու են թուրքահաճոյ ուղեգիծը, իսկ առաջիկայ ընտրութիւններում վերարտադրուելու դէպքում անցնելու են Հայաստանը



թուրք-ադրբեջանական գաղութի վերածելու անգուսպ քայլերի: Հայաստանում վտանգուած են պետականութեան և ազգային ինքնութեան գրեթէ բոլոր բաղադրիչները, հայկական ամէն ինչ: Նրանք, ովքեր դա չեն գիտակցում, քաղաքականապէս մանկամիտ են:

Մեզ բոլորիս ծանր ժամանակներ են սպասուում: 2026 թուականը կարող է դառնալ վճռորոշ:

Բայց և՛ «Թէ Աստուած մեզ հետ է, ո՞վ կարող է լինել մեր դէմ» (Հռոմեացիներ 8:31):

— *Ո՞րն է Հայ Եկեղեցու դերն ստեղծուած իրավիճակում և, առհասարակ, ինչպէ՞ս էք գնահատում մեր Եկեղեցու գործունէութիւնը Հայոց ցեղասպանութեան հիմնախնդրի և հայկական ժառանգութեան պահպանման ու վերադարձման ուղղութեամբ: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպէս ազգային ինքնակայ և համաքրիստոնէական տիեզերական հաստատութիւն, ինչպէ՞ս պէտք է դիմադարձի՝ յաղթահարելու հակահայկական և հակապատմական ներքին ու արտաքին սպառնալիքները:*

— Հայոց եկեղեցին, ինչպէս անցեալում, այնպէս էլ այսօր, հանդիսանում է հայկական քաղաքակրթութեան և ինքնութեան պաշտպանն ու ջատագովը: Այդ իր կարգավիճակից բխելով՝ եկեղեցին և հայ հոգևորականութիւնը չեն կարող աչք փակել հայոց պատմութեան ամենաողբերգական էջի՝ ցեղասպանութեան և դրա հետևանքների, տարբեր ձևերով մոռացութեան մատնելու իշխանական փորձերի վրայ: Չէ՞ որ հենց Հայոց եկեղեցին ու հոգևորականութիւնն են եղել ցեղասպանութեան առաջնային թիրախներից մէկը՝ հետևողականօրէն և կանխամտածուած կերպով ոչնչացուելով: Վերջին տուեալներով՝ ցեղասպանութեան ընթացքում աւերուել և ոչնչացուել է 2538 հայկական եկեղեցի և 451 վանք, որոնք, բացի կրօնական հաստատութիւններ լինելուց, նաև կրթական ու մշակութային օջախներ էին, գրչութեան կենտրոններ, հին ձեռագրերի մատենադարան-պահոցներ... Սպանուել են հազարաւոր հոգևորականներ, ովքեր հայութեան առաւել կրթուած ու նուիրեալ սոցիալական խաւն էին, որը ազգային հաւաքական գիտելիքի ու հոգևոր-մշակութային ժառանգութեան կրողն էր: Այս պայմաններում ինչպէ՞ս կարող է եկեղեցին մոռանալ կամ ուրանալ այդ ամէնը, յատկապէս երբ մոռացութիւնն ու ուրացումը լուրջ սպառնալիք են նախնաորոշ մեր պետութեան և ժողովրդի համար: Ուրացումը ոչ միայն բարոյական խզում է անցեալի հետ, այլև՝ ազգային դիմադրողականութեան կազմալուծում, որը կարող է յանգեցնել ծանր և լիովին կանխատեսելի հետևանքների:

Ցաւով պէտք է արձանագրել, որ մեր օրերում Հայոց եկեղեցին ոչ պատահականօրէն Հայաստանի Հանրապետութիւնում զրկուած է ազատ գործելու հնարաւորութիւնից: Եկեղեցին ոչ միայն պաշտպանուած չէ, այլև ենթարկուում է բացայայտ ճնշումների և հալածանքների. կալանաւորուած արքեպիսկոպոսներ, Մայր Աթոռի և այլ տաճարների բակերում աղանդաւորական խուժան՝ նրան «պաշտպանող» ոստիկանական ուժերով, պետական ուժային և դատական մարմինների կոպիտ միջամտութիւն եկեղեցու ներքին կեանքին ու ինքնակառավարման գործընթացներին, ներեկեղեցական ու դաւանաբանական կանոնների փոփոխութիւնների պարտադրանք, պետական ամենաբարձր մակարդակներից գրեթէ ամէն օր հնչող վիրաւորանքներ, սպառնալիքներ, հայհոյանքներ և շանտաժ — ահա այն միջավայրը, որի մէջ այսօր գոյատևում է Հայոց եկեղեցին:



Այդ ամենով հանդերձ, քրիստոնէական հաւատքն ու եկեղեցին ուժեղանում են առաւելապէս հալածանքների և քաղաքական ճնշումների պայմաններում: ՀՀ ղեկավարների «հանձարեղ» գործողութիւնների արդիւնքում Հայոց եկեղեցու վարկը բարձրացել է աննախադէպ աստիճանի՝ յետխորհրդային շրջանի ողջ ընթացքում:

ՀՀ ներկայիս իշխանութիւնների հրահրած հակաեկեղեցական արշաւը ևս մէկ անգամ ապացուցում է, որ Հայաստանի Հանրապետութեան ներկայիս իշխանութեան և հայ ժողովրդի շահերը որևէ կէտում չեն համընկնում: Աւելին՝ դրանք գտնուում են ուղիղ հակադրութեան մէջ: Երբ իշխանութիւնը պատերազմ է յայտարարում սեփական Եկեղեցուն, փաստացի պատերազմ է յայտարարում իր իսկ ժողովրդին՝ նրա ազգային ինքնութեանը, պատմական յիշողութեանը և հոգևոր հիմքերին: Ամէն դէպքում, պատմական այս բախման մէջ արդար կողմը հայ ժողովուրդն է և Հայոց եկեղեցին:

— Հայագիտական ակադեմիական և ոչակադեմիական հաստատութիւններն ու կազմակերպութիւնները, ըստ Ձեզ, բաւարար աշխատանք են տանում Հայ դատի կայացման և Հայաստանի իշխող քաղաքական ուժի ապագային գործունէութեան կասեցման ու վերաճշտման ուղղութեամբ:

— Եթէ կարճ պատասխանեմ, ՀՀ ակադեմիական և բուհական հիմնարկների ղեկավարութիւնը ոչ միայն բաւարար աշխատանք չի տանում այդ ուղղութեամբ, այլև, փաստօրէն, բացայայտ կամ լռելեայն սատարում է ներկայիս իշխանութիւնների ապագային քաղաքականութեանը՝ երբևէ բողոքի ձայն չբարձրացնելով: Այնինչ ակադեմիական և բուհական հաստատութիւնների ղեկավարները նախևառաջ պէտք է լինեն գիտնականներ և հայրենասէր քաղաքացիներ, և յետոյ միայն՝ չինովնիկներ ու բիրոկրատներ: Հասարակական և բարոյական տեսանկիւնից նրանք կրում են ոչ միայն վարչական, այլև հանրային մտքի ու խղճի ձևաւորման պատասխանատուութիւն. նրանց կրաւորականութիւնը ինստիտուցիոնալ յարմարութեան (կոնֆորմիզմի) դրսևորում է, որը թուլացնում է գիտական համայնքի ինքնավարութիւնն ու քննադատական ներուժը և խոչընդոտում ժողովրդավարութեան զարգացմանը:

— Ի՞նչ հանգուցալուծումներ կարող են լինել Հայաստանի Հանրապետութեան և հայ ժողովրդի համար մօտ ապագայում:

— Օրակարգում Հայաստանի անվտանգութեան և կայունութեան ապահովումից, նոյնիսկ՝ փրկութիւնից և ազատագրութիւնից աւելի կարևոր հարց չկայ: Ինչպէս ասում էին հին հռոմէացիները՝ «Salus patriae suprema lex esto», այսինքն՝ «Հայրենիքի փրկութիւնը թող լինի զերագոյն օրէնքը»:

Հարցազրոյցը՝ Նարինէ Յովհաննիսեանի

«Քրիստոնէայ Հայաստան», 2026, ԱՊՐԻԼ Բ, ԹԻՎ 8 (700), ԷՁ 6

<https://arar.sci.am/dlibra/publication/462428>

ԿԻՊՐԱՀԱՅ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 111-ԸՆԴ ՏԱՐԵԼԻԾԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՆԻԿՈՍԻՈՑ ՄԷՋ



Այս տարի եւս, միեւնոյն հաւատարմութեամբը մեր սրբադասեալ մէկ ու կէս միլիոն նահատակներու Կտակին, կիպրահայութիւնը՝ մէկ սիրտ, մէկ հոգի, իր հոգեւորական դասուն եւ աշխարհիկ կազմակերպութեանց ու կառոյցներու, ՀՀ դեսպանութեան մասնակցութեամբ, երիտասարդական, սկաուտական, համայնքիս անդամ-անդամուհիներու խիտ շարքերով՝ ոգեկոչեց Հայոց Ցեղասպանութեան 111 –րդ տարելիցը եւ նորոգեց իր ուխտն ու երդումը հաւատարիմ մնալու անոնց սրբազան կտակին: Ներկայ էր Կիպրոսի ներկայացուցիչներու Տան խօսնակ Տիկ. Անիթա Տիմիթրիուն, ներկայ էին նաեւ Կիպրոսի պետական, կառավարական, կուսակցական, ազգային բանակի ներկայացուցիչներ, Կիպրոսի մէջ գործող տարբեր եկեղեցիներու կրօնաւորներ, Մթրովոլոսի քաղաքապետ Տիար Ստավրոս Ստավրինիտիս եւ այլ բարձրաստիճան հիւրեր:




Գլխաւոր յուշահանդէսը կայացաւ 25 Ապրիլ, 2026-ին, ժամը 7:30-ին, Ս. Աստուածածին Մայր եկեղեցոյ շրջափակին մէջ գտնուող Յեղասպանութեան Յուշակոթողին առջեւ, Երիտասարդական, Սկաուտական եւ ընդհանուր համայնքիս քայլարշաւէն ետք:

Յուշահանդէսը սկսաւ Հոգեհանգստեան արարողութեամբ մեր սրբադասեալ մեռելներու ինկելի յիշատակին: Այնուհետեւ ուղերձներ կարդացին՝ կիպրահայոց Թեմի Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեան, Կիպրոսի մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպանուհի Տիկ. Իննա Թորգոմեան, Հայ համայնքի Պետ. Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեան եւ օրուան գլխաւոր հիւրը, Սթրովոլոսի քաղաքապետ, Տիար Ստավրոս Ստավրինիտիս:

Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս արք. հայերէնով եւ յունարէնով կարդացած իր ուղերձներուն մէջ, ընդգծեց որ հայոց Յեղասպանութեան ահասարսուտ արհաւիրքէն ետք, հայեր պահեր էին իրենց հաւատքը, պատիւն ու արժանապատուութիւնը եւ հաւատարմօրէն կառչած մնացեր էին իրենց ազգային ինքնութեան, հաւատքին եւ ազգային արմատներուն: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց Կիպրոսի կառավարութեան եւ ժողովուրդին, որոնք գրկաբաց ընդունել էին հայ գաղթականները եւ իրենց հայրենիքը դարձուցեր էին նաեւ մեր հայրենիքը:



Պրն. Մահտեսեան շեշտեց որ Թուրքիան տակաւին կը ժխտէ ճանչնալ հայոց Ցեղասպանութիւնը առ այսօր: Անդրադարձաւ ներկայիս կատարուող ցեղասպանութեանց եւ անոնց սպառնալիքին: Ան խորին երախտագիտութիւն յայտնեց Կիպրոսի կառավարութեան, որ ոչ միայն պաշտօնապէս ճանչցած է հայոց ցեղասպանութիւնը, այլեւ անոր ժխտումը քրէօրէն պատժելի արարք համարելու օրինագիծ ընդունած է, միշտ ցուցաբերելով իր ամբողջական զօրակցութիւնը հայկական ցեղասպանութեան ճանաչումին եւ դատապարտումին, ինչպէս նաեւ համայն հայութեան կրթամշակութային եւ այլ կարիքներուն բաւարարման:



ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Տիկ. Իննա Թորգոմեան իր խոնարհումը արտայայտեց Օսմանեան Թուրքիոյ կողմէ գործադրուած Ցեղասպանութեան զոհ գացած մեր մէկ ու կէս միլիոն սուրբ նահատակներուն, անդրադարձաւ Ռաֆայէլ Լեմբինի կողմէ բանաձեւուած «Ցեղասպանութիւն» եզրին, որ ցեղի մը սպանդին կը միտի ըստ էութեան: Ապա ան նշեց որ Հայաստանի Հանրապետութիւնը մեծ աշխատանք կը տանի բոլոր ցեղասպանութիւններու կանխարգելումին ուղղութեամբ, կազմակերպելով տարբեր միջոցառումներ այդ գծով: Ան հուսկ շեշտեց որ ՀՀ-ը կը ջանայ ամրապնդել խաղաղութիւնը եւ կերտել իր պետականութիւնը:

Ապա իր ուղերձը ներկայացուց Սթրովոլոսի քաղաքապետը Տիար Ստավրոս Ստավրինիտիս, որ բարձր գնահատեց կիպրահայ համայնքի նուիրումը իր ազգային արժէքներուն եւ ինքնութեան պահպանման, շնորհիւ անոր վայելած պետական անվերապահ աջակցութեան, որ ցուցաբերուել էր շարունակաբար հայոց ցեղասպանութեան եւ բռնի

տեղահանումէն ետք եւ խորհրդային վարչակարգի փլուզումէն ետք ալ, երբ հայ գաղթականներու հոսք տեղի ունեցած էր դէպի Կիպրոս: Ան իր զօրակցութիւնը յայտնեց հայ համայնքի կրթական, մշակութային կեանքին Կիպրոսի հիւրընկալ ասիերուն վրայ:

Ազգային-հայրենասիրական երգերով հանդես եկաւ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ Երգչախումբը, ոգեշնչելով եւ յուզելով ներկաները:

Հուսկ, Յուշահանդէսի աւարտին, ծաղկեպսակներ զետեղուեցան Յուշակոթողին առջեւ՝ հայ թէ օտար պաշտօնական կառոյցներու եւ կազմակերպութեանց անունով, անոնց ներկայ ներկայացուցիչներու ձեռամբ անուն առ անուն, ինչպէս նաեւ՝ ծաղիկներ բոլոր ներկաներուն կողմէ մէկ առ մէկ:

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ:

ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈՑ, ԲԵԿԱՆԵՄ ՇԱՆԹԵՐ, ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱՑ:

Երան Գույումճեան

ՎԱՐՊԳԷՍ ՄԱՀՏԵՍԵԱՆ ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՑԻՉ ՀՈՉԱԿՈՒԱԾ



Հինգշաբթի, 7 Մայիս 2026-ին, կ.ե. ժամը 1:30-ին Խորհրդարանական Ընտրութիւններու Յանձնակատարին կողմէ Վարդգէս Մահտեսեան իբրեւ անմրցակից միակ թեկնածուն՝ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ հռչակուեցաւ Ներկայացուցչական Տան յառաջիկայ 2026-2031 նստաշրջանին համար: ԱԶԱՏ ԽՕՍՔը կը շնորհաւորէ զինք այս առիթով, իրեն մաղթելով համայնքային բեղուն գործունէութեան նոր յաջողութիւններ:

ԿԻՊՐՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ Ս. ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿ



6 Մայիս 2026, երեկոյեան ժամը 7:30-ին, Առաջնորդարանի «Վահրամ Իւթիւնեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ հետաքրքրական միջոցառում մը, նուիրուած Ս. Մակարայ վանքի բարենորոգման ծրագիրներուն ներկայացման: Ձեռնարկը կազմակերպուած էր Կիպրոսի Հայոց Թեմին կողմէ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս արք. Օհանեան, որ շեշտեց պատմամշակութային կարեւորութիւնը Ս. Մակարայ վանքին:

Ներկայացումները՝ խօսքով եւ լուսապատկերներով, կատարեցին գլխաւորաբար Պրն Բարսի Չարդարեան եւ Տորթ.Մեհմեդճան Սօյլուօղլու, որոնք զեկուցեցին Մակարայ վանքին բարենորոգման ուղղուած տարուելիք հնարաւոր աշխատանքներուն մասին:

Գնահատելի միջոցառում մը՝ արդարեւ, որ լուսաբանեց ներկաները մեր սիրելի վանքին բարենորոգման հետ կապուած յետագայ ծրագիրներուն մասին, բոլոր մանրամասնութիւններով:

Յատուկ շնորհակալութիւն Պրն Բարսի Չարդարեանին, որ գլխաւոր պատասխանատուն է Սուրբ Մակարայ վանքի վերանորոգման աշխատանքներու գծով տարուելիք աշխատանքներուն: **ԲՈՒՆՈՒՄ ԿԱՐԶՔԸ ԿԱՏԱՐ ԵՒ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ:**



Աւերակուած
Ս. Մաղարայ
Վանքը...
Το ερειπωμένο
Αρμενομο-
νάστηρο...
The ruined
Sourp Magar
Monastery...

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՀՈՐՄՈՒԶԷՆ ՄԻՆՉԵՒ ԼԻԲԱՆԱՆ. ԽԱՂԻ ՆՈՐ ՕՐԷՆՔՆԵՐ



✉ **ՎԱՐՈՒԺ ԹԷՆՊԷԼԵԱՆ**

29/4/2026



28 Փետրուար 2026 -ին սկիզբ առած պատերազմը չսահմանափակուեցաւ միայն Իրանի օդային տարածքով: Այն ինչ որ սկիզբը իբրեւ ամերիկեան եւ իսրայէլեան օդային վճռական յարձակում մը կը թուէր՝ ինքնամբով ծրագրուած, արհեստագիտականօրէն գերազանց եւ ռազմավարականօրէն յաւակնոտ, արագօրէն դուրս եկաւ իր նախատեսուած սահմաններէն: Անիկա չաւարտեցաւ հոն՝ ուր սկսած էր, ոչ ալ գետինը պատրաստեց այն լուծումներուն, զորս թերեւս կը փնտռէին

անոր ճարտարապետները: Փոխարէնը՝ պատերազմը տարածաշրջանը վերաճեալկերպեց նուազ տեսանելի, բայց շատ աւելի ճակատագրական ուղղութիւններով:

Այսօրուան իրավիճակը հասկնալու համար պէտք է հրաժարիլ պատերազմի առաջին օրերու ստեղծած ցնցումին վրայ կեդրոնանալէ՝ օդային ծանր հարուածներ, ենթակառոցներու քանդում եւ դեկավարութեան «զլխատում»: Այս բոլորը կը պատկանին պատերազմի առաջին փուլին: Իրական շրջադարձը տեղի ունեցաւ այն պահուն, երբ պատերազմին առանցքը Իրանի տարածքէն փոխադրուեցաւ դէպի ծով՝ յատկապէս դէպի Հորմուզի նեղուցը, ուր պատերազմը փոխեց իր բնոյթը: Անիկա դադրեցաւ զուտ զինուորական կարողութիւններու բախում մը ըլլալէ եւ վերածուեցաւ «խափանման» կարողութիւններու մրցակցութեան:

Ըստ երեւոյթին, Իրան պէտք չունէր սովորական իմաստով յաղթելու՝ ռազմական անհաւասարութիւնը փոխելու համար: Միայն անհրաժեշտ էր փաստել, որ ինք կրնայ անկարելի դարձնել բնականոն վիճակի վերադարձը: Նաւարկութեան ուղիներու խափանումը, ուժանիւթի հոսքերու անկայունութիւնը, ապահովագրական շուկաներու անդամալուծումը եւ համաշխարհային առեւտուրի խախտումները դարձան ոչ թէ երկրորդական հետեւանքներ, այլ պատերազմին բնորոշիչ յատկանիշները: Այս իմաստով, Հորմուզը դադրեցաւ պարզապէս աշխարհագրական նեղուց մը ըլլալէ, այլ դարձաւ աշխարհաքաղաքական հակամարտութեան առանցք մը՝ տարածք մը, ուր ռազմական անհաւասարութիւնը վերածուեցաւ ռազմավարական առաւելութեան: Միացեալ Նահանգները, հակառակ իր ծովային գերիշխանութեան, ինքզինք գտաւ հակամարտութիւնը կառավարելու եւ ոչ թէ անոր լուծում մը գտնելու կացութեան մը մէջ՝ հակառակ մարտանաւերու եւ օդանաւակիրներու գերազանց ներկայութեան:



Այս ընդհանուր փոփոխութեան ծիրէն ներս պէտք է տեղադրել նաեւ Լիբանանը: Եթէ Հորմուզը դարձաւ պատերազմի ռազմավարական առանցքը, Հարաւային Լիբանանը մնաց անոր ամենէն պայթուցիկ եզրը: Իսրայէլի եւ Հրճպալլայի միջեւ բախումը չէր որոշէր պատերազմին ուղղութիւնը, սակայն կը պահպանէր զայն լարուած պահելու կարողութիւնը: Մպրիլի կիսուն յայտարարուած զինադադարը, ինչպէս Միացեալ Նահանգներու եւ Իրանի միջեւ գոյացածը, լուծումի չէր առաջնորդէր: Ան ընդամենը ժամանակաւոր ընդհատում մըն էր՝ անհամատեղելի պայմաններու մէջ: Իսրայէլ կը պնդէր անվտանգութեան այնպիսի դասաւորումներու վրայ, որոնք կ'անցնէին իր սահմաններէն անդին, մինչ Հրճպալլա կը մերժէր որեւէ համաձայնութիւն, որ չի պահէր իր դիմադրութեան կարողութիւնը: Այս երկուքին միջեւ՝ լիբանանեան պետութիւնը գրեթէ կը մնար բացակայ եւ անձրկած՝ ոչ թէ որոշումով, այլ ակամայ պայմաններու բերումով:

Լիբանանի պետութեան այս բացակայութիւնը պատահական չէ: Ան կը բացայայտէ այն խոր իրականութիւնը, զոր պատերազմը դարձուց անելի տեսանելի. Լիբանան որոշ ատենէ դադարած է դասական իմաստով դերակատար ըլլալէ միջազգային յարաբերութիւններու մէջ: Խլուած է այդ իրաւունքը իրմէ. ան չի բանակցիր իր իրաւունքներուն համար, այլ ուրիշներ կը բանակցին իր անունով, բայց իրենց շահերուն համար: Թէեւ Լիբանան միշտ կը մնայ միջազգային օրակարգի վրայ եւ կարելի չէ զայն անտեսել: Հարաւի ճակատը կը շարունակէ գործել իբրեւ ճնշման գօտի՝ Լիբանանի ճակատագիրը կապելով արտաքին որոշումներու՝ Ուաշինկթընէն մինչեւ Թեհրան, եւ այժմ նաեւ միջնորդ մայրաքաղաքներու մէջ՝ ինչպէս Իսլամապատ եւ Մասքաթ: Այսպիսով պատերազմը վերահաստատեց Լիբանանի պատմական այն հակասութիւնը, թէ ան միաժամանակ լուսանցքային է, բայց անփոխարինելի, անտեսուած՝ բայց կարելոր...

Կարճաժամկէտ հեռանկարով, այս կացութիւնը հաւանաբար պիտի շարունակուի. ամենէն հաւանականը՝ ոչ յաւելեալ մագլցում, ոչ լուծում իրավիճակն է: Փոխարէնը կը յառաջանայ «կառավարելի անկայունութեան» ձեւ մը՝ պարտադրուած հաւասարակշռութիւն մը, ուր բոլոր դերակատարները կը խուսափին որոշ սահմաններ հատելէ, սակայն կը շարունակեն ճնշում գործադրել այդ սահմաններու ծիրէն ներս: Թէ՛ Հորմուզի եւ թէ՛ Լիբանանի զինադադարները կը պահպանուին, բայց միայն ձեւականօրէն: Հորմուզի մէջ լարուածութիւնը կը մնայ, նաւարկութիւնը՝ պայմանաւորուած: Հարաւային Լիբանանի մէջ՝ խախտումները կը շարունակուին: Դիւանագիտութիւնը կը շարունակուի, բայց անուղղակի՝ միջնորդներով, որոնք դժբախտաբար անկողմնակալ չեն եւ իրենց կարգին ռազմավարական շահեր կը հետապնդեն:

Այս վիճակը բնականօրէն կարելի չէ խաղաղութիւն նկատել: Անիկա պարտադրուած վիճակ մըն է, ուր հակամարտութիւնը կը շարունակուի առանց ամբողջական պայթումի:

Սակայն այս վիճակը եթէ երկարի, հետեւանքները կրնան անելի խոր ըլլալ: Շրջանային այս պատերազմը ոչ միայն անմիջական խնդիրներ կը յառաջացնէ, այլեւ անելի մեծ փոփոխութիւններու պատճառ կը դառնայ: Մեծագոյն փոփոխութիւնը հաւանօրէն ուժի եւ տիրապետութեան նոր գաղափարն է: Ըստ երեւոյթին հողատարծքի վրայ հակակշիռ ունենալը այլեւս բաւարար չէ յաղթանակ կերտելու համար: Ներկայիս ուժանիւթի, ապրանքներու կամ դրամի հոսքը խանգարելու կարողութիւնը նոյնքան կարելոր է, թերեւս անելի կարելոր: Իրանի օրինակը բարացուցական է այս առումով: Հակառակ իր կրած ծանր հարուածներուն, Իրան կրցաւ ազդել պատերազմի ընթացքին վրայ՝ թիրախաւորելով այն



համակարգերը, որոնց կը յենեին իր թշնամիները: Ասիկա յաղթանակ չէ աւանդական իմաստով, բայց նաեւ վճռական պարտութիւն ալ չէ:

Տակաւին, այս պատերազմը կը նպաստէ տարածաշրջանին մէջ մասնատուած գերիշխանութեանց բնականոնացումին: Լիբանան եզակի չէ այս առումով, բայց ան ամենէն խօսուն օրինակն է: Պետական հաստատութիւններու, ոչ-պետական զինեալ դերակատարներու եւ արտաքին զինուորական ազդեցութեան համակեցութիւնը այլեւս չի դիտուիր որպէս զարտուղութիւն մը, որ պէտք է լուծուի, այլ հետզհետէ կ'ընդունուի որպէս կացութիւն մը, որ պէտք է ընդունիլ եւ համակերպիլ: Հետեւանքը ոչ թէ պետութեան անհետացումն է, այլ անոր փոխակերպութիւնը՝ վերածուելով դերակատարի՝ միւսներուն կողքին, յաճախ առանց գերակայութեան:

Այս կացութիւնն է, զոր վերջերս լիբանանեան պետութիւնը կը փորձէ շրջել՝ վերահաստատելով պետութեան գերակայութիւնը եւ պատերազմ հռչակելու ու խաղաղութիւն հաստատելու անոր իրաւասութիւնը: Ուղղակի բանակցութիւններու դիմելու քայլերը կը մատնանշեն պետութեան կողմէ իր դերը վերականգնելու փորձ մը, թէեւ սահմանափակ եւ արտաքին պայմանաւորուած շրջանակներու մէջ:

Լիբանանի մէջ տիրող այս կացութիւնը ունի նաեւ տնտեսական կարեւոր հետեւանքներ: Լիբանանի պարագային վերակառուցումը միայն միջոցներու հարց չէ, այլ նաեւ առնչուած է անոր կարեւորութեան: Միջազգային աջակցութիւնը կը մնայ սահմանափակ, պայմանաւորուած եւ դանդաղ՝ ոչ թէ որովհետեւ կարիքները յստակ չեն, այլ քանի ռազմավարական խայծը տկար է: Լիբանանը ռազմավարականօրէն առնչուած է բախումներուն, բայց ոչ անոնց լուծման: Ան կը շարունակէ խճճուած մնալ տարածաշրջանային աւելի լայն առճակատումներու մէջ՝ գործելով աւելի իբրեւ տարածք մը, ուր արտաքին լարուածութիւնները իրենց արձագանգը կը գտնեն, քան որպէս առաջնահերթութիւն մը՝ երկարաժամկէտ ներդրումներու համար: Ըստ երեւոյթին, Լիբանան առանցքային դիրք մը չի գրաւեր տարածաշրջանային ձեւաւորուող նոր համակարգին մէջ: Ան էական չէ ո՛չ ուժանիւթի անվտանգութեան, ո՛չ ալ մեծպետական մրցակցութեան մէջ:

Կը թուի, թէ այս պատերազմը յստակ վերջաւորութիւն մը պիտի չունենայ. անիկա պարզապէս պիտի փոխէ խաղին օրէնքները: Յայտնապէս Լիբանան պիտի շարունակէ շնչել նեղ սահմաններու մէջ՝ սեղմուած արտաքին ճնշումներու եւ իր սեփական տկարութեան միջեւ: Ամբողջ տարածաշրջանը կարծէք պիտի վարժուի նոր հաւասարակշռութեան մը, ուր ոչ թէ կը վերանայ անկայունութիւնը, այլ կը դառնայ կառավարելի առօրեայ:

Հիմնական հարցը այն չէ, թէ Լիբանան պիտի վերագտնէ իր «բնականոն կեանքը», այլ պիտի կարենա՞յ դառնալ իր ճակատագիրը տնօրինող քաղաքական ուժ մը, փոխանակ ըլլալու լոկ տարածք մը, ուր ուրիշներ կը լուծեն իրենց հաշիւները: Առայժմ, նման փոփոխութիւն մը անհաւանական կը թուի: Պատերազմը չէ միացուցած ու ներդաշնակած տարածաշրջանը, չէ բանաձեւած լուծման հեռանկարներ, այլ գծած է նոր ու խիստ շրջագիծեր, որոնց մէջ Լիբանան պարտաւոր է գոյատեւելու:

Թէւ այս շրջադարձը կը մնայ դժուարին եւ մարտահրաւերներով լեցուն, պետութեան վերջին քայլերը ցոյց կու տան, որ ան կը փորձէ վերագտնել իր տեղը՝ օգտագործելով դիւանագիտական այն նեղ անցքերը, որոնք դեռ բաց կը մնան:

Այս անորոշութեան մէջ, լուստեսութիւնը կը դառնայ միակ ճանապարհը՝ այդ նեղ անցքերէն դէպի աւելի լայն հորիզոններ անցնելու համար:

Վ. Թէնպէլեան

ՆԱԽԱԳԱՀ ՏԱՆԸՆՏ ԹՐԱՄՓ ԿՈՂՄՆԱԿԻՑ Է ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՂՄԷ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՐԱՑՄԱՆ

Յարութ Սասունեան

www.TheCaliforniaCourier.com



Ամօ՛թ նախագահ Տանըլտ Թրամփին՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը վերստին յամառօրէն մերժելուն համար: Ահա թէ ի՛նչ կը պատահի, երբ բարոյական արժէքներէ եւ սկզբունքներէ զուրկ մարդը, որ դատապարտուած յանցագործ է (34 դրուագով), ինչպէս նաեւ պատասխանատու ճանչցուած է սեռային ոտնձգութեան համար, կ'ընտրուի Միացեալ Նահանգներու նախագահ:

Թրամփի ժխտումները կը հակասեն Միացեալ Նահանգներու կառավարութեան բարձրագոյն մակարդակներով Հայոց ցեղասպանութեան բազմիցս կատարուած ճանաչումներուն.

- 1951 մայիս 28-ին Միացեալ Նահանգներու կառավարութիւնը պաշտօնական փաստաթուղթ ներկայացուցած է Արդարադատութեան միջազգային դատարանին (Համաշխարհային դատարան)՝ ճանչնալով Հայոց ցեղասպանութիւնը:

- Նախագահ Ռոնըլտ Ռիյկըն յիշատակած է Հայոց ցեղասպանութիւնը իր 22 ապրիլ 1981-ի նախագահական հռչակագիրին մէջ:

- Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տունը 1975-ին, 1984-ին եւ 2019-ին ձայներու ջախջախիչ մեծամասնութեամբ որդեգրած է երեք բանաձեւեր՝ ճանչնալով Հայոց ցեղասպանութիւնը:

- Միացեալ Նահանգներու Ծերակոյտը միաձայնութեամբ (100 թեր, 0 դէմ քուէներով) 2019-ին ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը, հակառակ նախագահ Թրամփի՝ զայն խոչընդոտելու անյաջող ջանքերուն:



- Նախագահ Ճօ Պայտըն 2021, 2022, 2023 եւ 2024 թուականներու ապրիլ 24-ին հանդէս եկած է յայտարարութիւններով՝ ճանչնալով Հայոց ցեղասպանութիւնը:

- Միացեալ Նահանգներու բոլոր 50 նահանգները ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը:

- Աւելի քան 30 երկիրներ, որոնց կարգին՝ ՕԹԱՆ-ի աւելի քան տասը անդամներ, ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը:

Հակառակ այս բոլոր ճանաչումներուն՝ նախագահ Թրամփ կը շարունակէ տեղի տալ Էրտողանի կողմէ Հայոց ցեղասպանութեան ուրացման՝ արդէն վեցերորդ անգամն ըլլալով հրաժարելով գործածել Հայոց ցեղասպանութիւն եզրոյթը՝ իր առաջին պաշտօնավարութեան չորս տարիներուն եւ երկրորդ պաշտօնավարութեան առաջին երկու տարիներուն ընթացքին: Մենք նաեւ պէտք չէ մոռնանք փոխնախագահ Ճէյ. Տի. Վանսի ամօթալի քայլը՝ 10 փետրուած 2026-ին Երեւանի մէջ Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր այցելելէ ետք, «Էքս»-ի իր ընկերային ցանցի էջին վրայ կատարած հրապարակումէն Հայոց ցեղասպանութիւն եզրոյթը ջնջելը:

Քանի որ նախագահ Թրամփ կը հրաժարի արտասանել ցեղասպանութիւն բառը՝ վախնալով նեղացնել իր բարեկամ Էրտողանը, ապա ինչպէ՞ս կրնան հայերը վստահիլ իրեն՝ Հայաստանի անվտանգութիւնն ու ինքնիշխանութիւնը պաշտպանելու մէջ: Թրամփ եւ Վանս պէտք է արժանանան համընդհանուր դատապարտման՝ իրենց այս մեղադրելի վարքագիծին համար: Այսուհանդերձ, անոնց հայ աջակիցներէն ցարդ որեւէ քննադատութիւն չենք լսած: Անոնք, որոնք 2028-ի նախագահական ընտրութիւններուն պիտի քուէարկեն Ճէյ. Տի. Վանսի ի նպաստ, պիտի դառնան անոր կողմէ Հայոց ցեղասպանութեան ուրացման համախոհները:

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը եւ Հայկական համագումարը հրապարակեցին յայտարարութիւններ՝ քննադատելով նախագահ Թրամփի շարունակական մերժումը Հայոց ցեղասպանութեան ճանաչման: Հայ դատի յանձնախումբը դատապարտած է՝ «Նախագահ Թրամփի մեղսակցութիւնը Թուրքիոյ յանցագործութիւններուն կոծկման»: Հայկական համագումարը՝ «խոր մտահոգութիւն յայտնած է, որ Հայոց ցեղասպանութիւնը յստակօրէն չհաստատելը պատճառ կը դառնայ անպատժելիութեան մթնոլորտի ձեւաւորման, ճիշդ այն պահուն, երբ հայկական քրիստոնէական ժառանգութիւնը Արցախի մէջ դարձեալ կ'ենթարկուի յարձակումներու»:

Ի տարբերութիւն նախագահ Թրամփի՝ տասնեակ համաշխարհային ղեկավարներ եւ կարեւոր կազմակերպութիւններ 24 ապրիլ 2026-ին հանդէս եկան յստակ յայտարարութիւններով Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ: Անոնց կարգին էին Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինը, Յունաստանի նախագահ Կոնսթանթինոս Թասուլարը, Լիբանանի նախագահ ժոզէֆ Աունը, Շուէտի խորհրդարանը, Կիպրոսի արտաքին գործոց նախարարութիւնը, Ուրուկուէլի արտաքին գործոց նախարար Մարիօ Լուպէթքինը, Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը, Քանադայի վարչապետ Մարք Քարնին, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը, Գերմանիոյ Պունտեսթրակի փոխնախագահ Պոտօ Ռամելովը, Քալիֆորնիոյ նահանգապետ Կելին Նիւսըմը, Քալիֆորնիոյ նահանգային օրէնսդիր մարմինը, Նիւ Եորքի քաղաքապետ Զոհրան Մամտանին եւ Լոս Անճելըսի քաղաքապետ Քարէն Պասը:



Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան ապրիլ 24-ին դարձեալ հանդէս եկաւ յայտարարութեամբ, ինչպէս կ'ընէ ամէն տարի 2014-էն ի վեր: Սպասելի էր, որ ան խեղաթիւրեց պատմական փաստերը՝ յայտարարելով, թէ՛ «Բոլոր օսմանեան հպատակները խորապէս տառապած են», այդպիսով հաւասարեցնելով Հայոց ցեղասպանութեան զոհերը Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքին զոհուած թուրք զինուորներուն հետ: Մինչ Էրտողան կոկորդիլոսի արցունքներ կը թափէր, Պոլսոյ իշխանութիւնները կրկին արգիլեցին ապրիլ 24-ին Հայոց ցեղասպանութեան յիշատակի ձեռնարկները:

Աւելի յուսահատեցնող էր Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի ապրիլ 24-ի յայտարարութիւնը: Բազմիցս վիրաւորելով հայ ժողովուրդը՝ Հայոց ցեղասպանութեան իսկութեան վերաբերեալ անտեղի հարցեր բարձրացնելով, ան կը շարունակէ խեղաթիւրել պատմական փաստերը:

Ծաւալուն յայտարարութեան մը մէջ, զոր Փաշինեան հրապարակեց 24 ապրիլ 2026-ին, Երիտթուրքերը իբրեւ յանցագործներ մեղադրելու փոխարէն, ան «Մեծ Եղեռնը» նկարագրեց իբրեւ՝ «Հայ ժողովուրդը միջազգային խարդաւանքներու մէջ ներքաշելու գործելակերպի հետեւանք»: Այնուհետեւ Փաշինեան Ցեղասպանութեան տարելիցը չարաշահեց իր, այսպէս կոչուած, «խաղաղութեան օրակարգը» յառաջ մղելու համար: Խիստ մտահոգիչ պնդումով մը՝ ան յայտարարեց, որ Հայաստանը թերբնակեցուած է՝ կարծես նախապատրաստուելով 300 հազար ազրպէյճանցիներու Հայաստանի մէջ հաւանական վերաբնակեցման, պահանջ մը, որ նախապէս ներկայացուցած էր Ալիւր:

Փաշինեանի հրամանով՝ Հայաստանի Հանրային պատկերասփիռի կայանը (որ կը ֆինանսաւորուի հարկատուներուն կողմէ) ապրիլ 24-ին չհեռարձակեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.-ի կողմէ Ծիծեռնակաբերդի յուշահամալիր այցելութիւնն ու ծաղկեպսակ զետեղելու արարողութիւնը: Շարունակելով Փաշինեանի պայքարը Հայ առաքելական եկեղեցոյ դէմ՝ Հայոց ցեղասպանութեան թանգարանը իր կայքէն հեռացուց Գարեգին Բ. կաթողիկոսին Ծիծեռնակաբերդ այցելութեան մասին հրապարակումները:

Ի ուրախութիւն Ազրպէյճանին եւ Թուրքիոյ՝ Փաշինեան դատապարտեց ապրիլ 23-ի երեկոյեան Երեւանի մէջ կայացած ջահերով երթի մասնակիցներուն կողմէ թրքական դրօշակի հրկիզումը: Այսպիսով, դարձեալ Փաշինեան, Ալիւր եւ Էրտողան հանդէս եկան նոյն դիրքորոշմամբ՝ հակադրուելով հայ ազգային շահերուն:

Այնուհետեւ Փաշինեան ավելի վիրաւորեց հայ ժողովուրդը՝ ապրիլ 25-ին՝ Հայոց ցեղասպանութեան տարելիցին յաջորդող օրն իսկ, կազմակերպելով մեծ հանրային համերգ եւ տօնական ձեռնարկ:

Ինչպէ՞ս կարելի է մեղադրել օտարերկրեայ ղեկավարները՝ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ իրենց վիճելի դիրքորոշումներուն համար, երբ ինքնին Հայաստանի վարչապետը նման վիրաւորական քայլերու կը դիմէ եւ կասկածելի յայտարարութիւններ կ'ընէ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿՐ ԿՐԿՆՈՒԻ՞Ր. ՎՐԱՑԵԱՆ-1920 ԵՒ ՓՈՇԻՆԵԱՆ-2026



ա) Դրուագ 1. 24 Նոյեմբեր 1920

Հատուած Հայաստանի Հանրապետութեան նորանշանակ վարչապետ Միմոն Վրացեանի զեկոյցէն՝ իշխող Հ. Յ. Դաշնակցութիւն կուսակցութեան ներկայացուցիչներու խորհուրդի նիստին (24 Նոյեմբեր 1920): Այդ ժամանակ, քեմալական Թուրքիոյ նախաձեռնած արշաւանքին հետեւանքով Հայաստանն արդէն կորսնցուցած էր Կարսն ու Ալեքսանդրապոլը եւ կը պատրաստուէր հաշտութիւն կնքել Անքարայի կառավարութեան հետ.

«...Մենք մեծամեծ վնասներ ենք կրել անվերջ կռիւների բեմ դարձնելով մեր երկիրը և միշտ ընդհարելով մեր հարեւանների հետ:

«Մեր փորձը պէտք է բերէ մեզ այն համոզման, որ մենք պէտք է ամփոփուինք մեր ուժերի շրջանում և դուրս չգանք որոնելու նոր ազդեցութեան շրջանակներ, որոնք մեզ համար կարող են լինել նոյնքան աղետաբեր, որքան և մինչև այժմ եղածը, որովհետև արտաքին ոյժերը միշտ և ամենից առաջ իրենց շահերն ի նկատի ունին, նրանք ամեն ժամանակ աշխատում են առնել և ոչ թէ տալ: Մենք պէտք է ունենանք մեր սեփական օրինակաւոր մեր քաղաքական ծրագիրները կազմելիս աչքի առաջ ունենանք մեր սեփական ուժերը մեր սեփական բէլ արժէքաւորումները, ի հարկէ, յարմարելով ընդհանուր պայմանների, մեր պատմական սխալը եղել է այն, որ մենք մեր չափաւոր համեստ ուժերով կամեցել ենք մեծ քաղաքական ծրագիրներ իրականացնել, որի հետեւանքով եւ միշտ տուժել ենք ու ջախջախել բոլոր ճակատներում: Մեզ հարկաւոր է մի շշմեցուցիչ հարած, որ մենք



զգաստանանք, և այդ հարւածը արդէն հասել է մեզ. այժմ զգաստանալու ժամանակն է: Մակայն այդ զգաստացումն էլ չպէտք է չափազանց ծայրայեղութեան հասնի, մի բան, որը դժբախտաբար, մեր ժողովրդին յատուկ է:

«Եթէ Կիլիկիայից մինչև Շուշին շատ շատ էր մեր համեստ ուժերի համար, եթէ այդ սահմանների համար մենք շատ քիչ էինք, ապա և Նոր-Բայազետի և Երևանի շրջանների մասերից կազմւած մի փոքրիկ Հայաստանի համար շատ շատ ենք: Եւ այժմ քննադատելով մեր անցեալ գործելակերպը, չպէտք է ընկնենք չափազանցութիւնների մէջ և մեր ձգտումները յարմարեցնենք մեր ուժերին: Մեր օրայ քաղաքականութիւնը դեկավարողներից պահանջում է ունենալ մի այնպիսի քաղաքական գիծ, որ ազատ պահի մեզ արտաքին քաղաքական միջամտութիւններից, վարել մի քաղաքական գիծ, որի շնորհիւ կարողանանք պահել մեր անկախութիւնը, նուիրելու մեր ժողովրդի ստեղծագործ ուժերը խաղաղ կուլտուրական աշխատանքների համար:

«Եւ այդ կլինի այն ժամանակ, երբ մենք կկարողանանք ընդհանուր լեզու գտնել մեր հարևան ժողովրդների հետ:

«Եւ ես յոյս ունիմ, մենք կկարողանանք այդ լեզուն գտնել և կնքել անհրաժեշտ հաշտութիւնը:

«Բայց եթէ պատահի, որ մեր հարևանը չհասկանայ մեր և իր ընդհանուր շահերը և արբեցած իր պատմական յաղթութիւններից՝ կամենայ ոտնակոխ անել մեր անկախութիւնն ու մեր ժողովրդի գոյութիւնը, այն ժամանակ մենք ուժ և վճռականութիւն կունենանք պաշտպանւելու և օրհասական կոխու մղելու մեր անկախութիւնն ու մեր ժողովրդի գոյութիւնը պահպանելու համար:

«Եւ ես հաւատացած եմ, որ այդպիսի բռնաբանութիւնը մեր ժողովուրդը սթափւած կկարողանայ պատուով դուրս գալ ծանր ճգնաժամից:

«Այդպիսի բռնաբանութիւն, ես հաւատում եմ, մենք չենք մնայ մինակ...» (Ս. Ա., «Ընկեր Վրացեան զեկուցում», ՀՅԴ-ի «Յառաջ» պաշտօնաթերթ, երկրորդ տարի, No. 262, Կիրակի, 28 Նոյեմբեր 1920, էջ 3)

բ) Դրուագ 2. 24 Ապրիլ 2026

2020 թուականին Ատրպեյճանի դէմ պատերազմը կորսնցուցած եւ 2023-ին Արցախի հայաթափումը կանխարգիլել չյաջողած Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի Հայոց ցեղասպանութեան 111-րդ տարելիցի կապակցութեամբ ուղերձէն.

«Ձեր՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիների պատգամով մենք վճռականութիւն ենք դրսևորել առաւել խորութեամբ հասկանալու մեր ժողովրդի անցեալում ապրած ու պարբերաբար կրկնուող պատմութիւնը՝ ապագայում այդ պատմութեան կրկնութիւնը թոյլ չտալու, մեր այսօրը եւ գալիքը լաւը դարձնելու համար:



«Այսօր մենք հասել ենք այդ նպատակին, այդ թւում նրա շնորհիւ, որ հասկացել ենք, որ չի կարելի թոյլ տալ, որ Մեծ Եղեռնը միջազգային խաղացողների՝ մէկը միւսի դէմ պայքարի գործիք դառնայ: /.../

«Մեր ժողովրդի մեծագոյն փափաքն իրականացուած է. մենք ունենք պետութիւն եւ մենք ունենք խաղաղութիւն: Պետութիւնը եւ խաղաղութիւնն են այն երաշխիքը, որ Հայոց ցեղասպանութիւն կրկին տեղի չունենայ: Այս պատմական նպատակն իրագործելու համար մեզ անհրաժեշտ է դադարեցնել հայրենիքի փնտռտուքը մեր պետութեան, Հայաստանի Հանրապետութեան միջազգայնօրէն ճանաչուած 29 հազար 743 քառակուսի կիլոմետր տարածքից դուրս:

«Այս տարածքը փոքր չէ հայ ժողովրդի բարգաւաճման, զարգացման ու բարեկեցութեան համար: Այսօր մեր տասնեակ բնակավայրեր դատարկ են, տասնեակ բնակավայրեր եւ, ընդհանրապէս, մեր պետութիւնը՝ թերբնակեցուած: Սրա պատճառը խաղաղութեան բացակայութիւնն է եղել եւ գիտակցութեան բացակայութիւնը, որ հայրենիքը պետութիւնն է, ինքնութիւնը պետութիւնն է, անվտանգութիւնը պետութիւնն է՝ իր միջազգայնօրէն ճանաչուած տարածքներով, եւ այս գիտակցութեան վրայ հիմնուելով՝ հայ ժողովուրդը պետք է դուրս գայ գաղթի եւ պանդխտութեան տրամաբանութիւնից:

«Հայաստանի Հանրապետութիւնն իր այսօրուայ տարածքով կարող է 5 միլիոն, 10 միլիոն հայերի բնակութեան վայր լինել...

«Այսօր մենք Հայաստանի Հանրապետութիւնն առաջնորդում ենք հենց այս տրամաբանութեամբ, Իրական Հայաստանի գաղափարախօսութեամբ, հասկանալով, որ խաղաղութիւնն ու անվտանգութիւնն առաջին հերթին հարեւանների հետ կարգաւորուած յարաբերութիւններն են՝ հիմնուած միմեանց տարածքային ամբողջականութիւնը, ինքնիշխանութիւնը, սահմանների անխախտելիութիւնը եւ քաղաքական անկախութիւնը ճանաչելու վրայ:

«Այն ուժերը, որոնք հանդէս են գալիս «կորսուած հայրենիքը վերադարձնելու, պատմական սահմանների եւ արդարութեան վերականգնման» կոչերով ու տրամաբանութեամբ, Հայաստանի Հանրապետութիւնը դնում են 1878 թուականի Սան Ստեֆանոյի կոնֆերանսի ռելսերի վրայ, որի անխուսափելի վերջին կանգառը պետականութեան ու հայրենիքի կորուստն է, որովհետեւ աշխարհում իւրաքանչիւրն ունի ի՛ր պատմութիւնը, իւրաքանչիւրն ունի ի՛ր արդարութիւնը, իւրաքանչիւրն ունի ի՛ր կորուսեալ հայրենիքը: Մենք, ի վերջոյ, դուրս ենք եկել այս թակարդից, եւ Հայաստանը կրկին այդ ուղղութեամբ տանելու փորձերը մեր պետութեանն ու ժողովրդին ուղղուած հրաւեր են դէպի կառափնարան:

«Զոհերի եւ զոհողութիւնների գնով մենք գտել, վերգտել ենք մեր հայրենիքը, եւ այդ հայրենիքը Հայաստանի Հանրապետութիւնն է:

«Մեր բոլոր նահատակների զոհողութիւնների հատուցումը Հայաստանի Հանրապետութեան յարատեւութիւնն է:»



Յ.Գ. Եթէ մինչեւ այստեղ կրցաք դիմանալ ու այսքանը կարդացիք, աւելցնեմ թէ դասաւանդութեան ժամանակ անընդհատ ուսանողներուս ուշադրութեան կը յանձնեմ համոզումս ու թելադրանքս թէ պատմական համեմատութիւններու ժամանակ նմանութիւններուն չափ կարելո՞ր է տարբերութիւններուն ուսումնասիրութիւնը, յատկապէս՝ անցեալը հնարաւորինս աւելի համապարփակ պատկերացնելու համար:

Հազիւ 10-11 օր գոյատեւած Վրացեանի գլխաւորած կառավարութիւնը ստիպուեցաւ գրաւոր հրաժարիլ Սեւրի դաշնագրէն: Վրացեան նոյնաբովանդակ հրապարակումներ ունեցաւ նաեւ 1921-ին՝ երբ 45 օրով գլխաւորեց Հայաստանի Փրկութեան Կոմիտէն: Աւելի ուշ, արտարական դառնալով, սակայն, Վրացեանն ու Հ. Յ. Դաշնակցութիւնը վերադարձան Սեւրի կենսագործման պահանջին: Վերոնշեալ զեկուցումէն նուազ քան 23 տարի ետք՝ 1943-ի գարնան, Ամերիկա գտնուող Վրացեան՝ առանց նախապէս համադրելու այդ օրերուն Եգիպտոս հիմնաւորուած Դաշնակցութեան բիրոյին հետ, յառաջ քաշեց Սեւրով Հայաստանին խոստացուած տարածքները Խորհրդային Հայաստանին կցելու գաղափար-պահանջը: Եւս երկու տարի, եւ ան նոյն տրամաբանութեամբ խնդրագիր մը յանձնեց Սան Ֆրանսիսքոյի ՄԱԿ-ի հիմնադիր համագումարին: Այսօր, երեւի հատուկենտ մասնագէտներ կը յիշեն Վրացեանի ելոյթները Նոյեմբեր 1920-Ապրիլ 1921 ամիսներուն: Երբ այսօր կ'ըսենք «Վրացեան», անմիջապէս մեր միտքը կու գան իր քաղաքական-հրապարակախօսական երկար կենսագրութենէն ա՛յլ դրուագներ:

Ասկէ 23 տարի ետք՝ 2049-ին Նիկոլ Փաշինեան պիտի ըլլայ 73 տարեկան: Ի՞նչ պիտի ըսէ կամ գրէ ան այդ առեւն, ո՛չ ինքը գիտէ այսօր, ո՛չ այսօր զինք պաշտողները, ո՛չ ալ այսօր զինք տիւ ու գիշեր դատափետողներն ու անիծողները:

Եթէ այսօր կրնամ որեւէ լսարանի ներկայացնել թէ մենք հիմա ինչպէ՛ս յետմահու կը յիշենք ու կը գնահատենք Վրացեանի դերը Ի. դարու մեր պատմութեան մէջ, Փաշինեանը մահուան օրը հաւանաբար ես արդէն չըլլամ՝ տեսնելու համար թէ ինչպիսի՛ մահագրականներ պիտի գրուին իր մասին:

Զի՞նչ ցուցանէ առակս. ժողովուրդ ջան, ե՛ւ գովելու ժամանակ, ե՛ւ քննադատելու ժամանակ գուսպ եղէ՛ք: Չենք գիտեր թէ վաղը մեզ ինչ կը սպասէ:

ԴՈՎՏ. ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

24/04/2026



Համառոտաբար ուրուագծենք ցեղասպանութեան պատճառած զոհերն ու կորուստները եւ դրանց երկարաժամկէտ՝ մինչեւ այսօր զգացնել տուող հետեւանքները: **ԿԵՆՍԱՏԱՐԱԾՔԻ ԿՈՐՈՒՍՏ** Մինչեւ 1915 թ. հայ էթնոսի հինգհազարամեայ գոյատեւման տարածքն ընդգրկում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը, այսինքն՝

պատմական Հայաստանը: Աշխարհառազմավարական առումով, այս մեծ՝ աւելի քան 350,000 քառ. կմ ունեցող տարածքը նմանում է մի հսկայ բերդի, որն ունի մի շարք պաշտպանական շրջաններ, որոնցից իւրաքանչիւրն ի վիճակի է ինքնուրոյն ապահովել իր պաշտպանութիւնը: Պաշտպանական շրջաններից մէկի կամ մի քանիսի գրաւումը օտար զաւթիչի կողմից դեռեւս չէր նշանակում Հայաստանի գրաւում, քանի որ մէկ ուրիշ շրջանում կամ շրջաններում կենտրոնացած հայկական ուժերը միշտ ի վիճակի էին լինում վերախմբաւորուել ու, յարմար առիթը որսալով, հակայարձակման անցնել եւ վերատիրանալ Հայաստանի զաւթուած տարածքին:

Աւելի ուշ՝ ամենաձանր 15-19-րդ դարերում, երբ Հայաստանի պետականութիւնը կործանուել էր, իսկ հայկական զինուած ուժերը հիմնականում ոչնչացուել էին ու վերացուել ասպարէզից (մանր զօրամիաւորումներ էին պահպանուել միայն առանձին լեռնային շրջաններում), Հայաստան երկրի գոյատեւման գլխաւոր առհաւատչեան ժողովրդագրական գործօնն էր՝ նրա տարածքում հայկական տարրի մեծամասնութիւն կազմելը: Երբ մոնղոլական ու թուրքմենական արշաւանքների կամ թուրք-պարսկական պատերազմների հետեւանքով Հայաստանի որեւէ մաս աւերուում էր (երբեմն գրեթէ անմարդաբնակ դառնում), շատ չանցած Հայաստանի միւս մասերում ապաստանած հայութիւնը, կարծես մագնիսական ձգողականութիւն ունենալով հայրենի, պապենական հողի նկատմամբ, դարձեալ վերադառնում էր, միշտ յուսալով, որ հայրենիքը վաղ թէ ուշ ձեռք է բերելու ազատութիւն, անկախութիւն, տնտեսական եւ ռազմական հզօրութիւն:

Հայաստանի նահանգներն ու գաւառները սոսկ տարածք չէին, այլ հինգհազարամեայ կենսատարածք ու հայրենիք: Ցեղասպանութեան առաջին ահաւոր հետեւանքն այն է, որ հայերին օտարացրել էւ անջատել են իրենց կենսատարածքից: Ռազմավարական առումով՝ կենսատարածքի կորուստը զրկել է հայերին պաշտպանական մի քանի շրջան ունենալու նախկին հնարաւորութիւնից. մնացել է մի բոլոր Հայաստան՝ ընդամենը մի վերջին միայնակ ամբոց: Նա այլեւս նահանջելու, ուժերը վերախմբաւորելու տեղ չունի: Հայաստանն այլեւս ռազմական ոչ մի պարտութեան իրաւունք չունի: Այլապէս՝ դա կը լինի Հայաստանի ու, հետեւաբար, հայ ազգի վերջը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Անթիւ եւ անհամար են մեր մշակութային կորուստները: Դրանք ոչ միայն առանձին ու անջատ եկեղեցիներ են, ճարտարապետական զանազան անկրկնելի շինութիւններ ու



կործողներ, այլեւ՝ հինգ հազար տարուայ ընթացքում այդ հողի վրայ ստեղծուած ամրոցներ, քաղաքներ ու գիւղեր, այլեւ՝ տասնեակ հազարաւոր մատեաններ, որոնցում ամփոփուած է եղել ժողովրդի հանճարն ու գիտելիքը: Միայն մէկ խօսուն փաստ. այսօր ամբողջ աշխարհում կայ մօտաւորապէս այնքան հայերէն ձեռագիր մատեան, որքան ոչնչացուել է Եդեսնի ժամանակ:

Անգին տեղեկութիւններ ու գաղտնիքներ են ոչնչացուել, կորել-գնացել, մեզ զրկելով մեր նախնիների ստեղծած հոգեւոր ժառանգութիւնից, մեզ կտրելով նրանց մտքից ու ոգուց: Նիւթական կորուստներ Յեղասպանութեան ենթարկուած արեւմտահայութեան ամբողջ ունեցուածքի եւ գոյքի բռնագրաւումն ու թալանն ստիպեց վերապրած զանգուածներին տասնամեակներ շարունակ զբաղուել ոչ թէ ազգային հաւաքական կեանքը հարստացնող եւ ամրապնդող ստեղծագործ աշխատանքով, այլ չարքաշօրէն, անջատ-անջատ ճգնել իրենց ընտանիքների տարրական ֆիզիկական գոյութիւնն ապահովելու համար:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎՆԱՍՈՒԱԾՔ

Հոգեբանական առումով՝ կենսատարածքի կորուստը զրկել է հայերին բնական ու ձեռակերտ ազգային խորհրդանիշների հետ ամենօրեայ շփումից, դրանով իսկ վերացնելով հայ ազգի բնականոն հոգեւոր զարգացման հնարաւորութիւնը: Միաժամանակ՝ ցեղասպանութիւնը շատ հայերի մէջ առաջացրել է թերարժեքութեան բարդոյթներ, ազգի ապագայի նկատմամբ թերահաւատութիւն, որոշ դէպքերում նոյնիսկ ինքնատեացութիւն՝ ազգային շահերի եւ արժէքների մերժում եւ օտարագարութիւն:

ԺՈՂՈՎՐԴԻ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ԵՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՉՆՉԱՅՈՒՍ

Հայոց ցեղասպանութեան ընթացքում ոչնչացուեցին ոչ թէ սոսկ մարդկային զանգուածներ, այլ ժողովուրդ, որը համախմբուած եւ կազմակերպուած էր իր դարաւոր կառոյցների շուրջը: Ոչնչացուեցին համայնքները, եկեղեցիները, դպրոցները, բազմաթիւ ու զանազան հայկական կառոյցներն ու կազմակերպութիւնները, վերջապէս՝ հայ ազգի դեկավարութիւնը, ներառեալ՝ քաղաքական, մտաւորական ու մշակութային ընտրանին: Մարդկային զանգուածներն առանց իրենց համախմբող կառոյցների այլեւս ժողովուրդ չեն, այլ անհատներ:

Յեղասպանութիւնից յետոյ աշխարհով մէկ ցրուելով, սփիւռքահայութեան ընդամենը մի փոքր հատուածը կարողացաւ վերահամախմբուել ազգային նորաստեղծ կառոյցների շուրջը: Արտերկրում ապաստանած հայութեան միւս մասը ներգրաւուեց օտար կառոյցների մէջ եւ աստիճանաբար ձուլման ենթարկուեց: Խորհրդային Հայաստանում հայութիւնը նոյնպէս կազմակերպուեց ոչ-ազգային կառոյցների եւ գաղափարախօսութեան շուրջը եւ մշակութապէս զգալի չափով ապահայացաւ (յատկապէս քաղաքական եւ մտաւորական վերնախաւը):

Հայկական անանդական կառոյցների ոչնչացումն այն կարեւոր օրէկտիվ գործօններից էր, որ թոյլ չտուեց օտարութեան մէջ յայտնուած հայութեան բեկորներին կազմակերպուել սփիւռքը միաւորող մէկ միասնական կառոյցի մէջ:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ (20-ՐԴ ԴԱՐՈՒՄ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ)



Հասկանալու համար հայութեանն այսօր հետապնդող խնդիրները, անհրաժեշտ է նաև պարզօրէն պատկերացնել ոչ միայն Մեծ եղեռնի, այլև վերջին հարիւրամեակում մեզ պատուհասած շարունակական աղէտների ահաւոր հետեւանքները: Այդ աղէտների պատճառած մարդկային կորուստներն ազդել են ոչ միայն մեր ազգի քանակի, այլև նրա հաւաքական որակի վրայ (մասնաւորապէս՝ հայ զանգուածների մէջ արմատաւորելով այսպէս կոչուած «վերապրելու հոգեբանութիւնը»՝ անհատի համար իր եւ ընտանիքի անձնական շահի ամէն ինչից վեր դասումը):

1894 թ. մինչև 1922 թ.՝ չորս փուլով իրագործուած հայկական ցեղասպանութիւնը, բնաջնջելով հայկական քաղաքակրթութիւնն իր բնիկ տարածքի մեծ մասից, խլեց աւելի քան 2.000.000 հայերի կեանք (շուրջ 300.000 հայ ոչնչացուեց 1894–96 թթ., 30.000՝ 1909 թ., 1.5 միլիոն՝ 1915–16 թթ., շուրջ 300.000՝ 1918–1922 թթ.):

1920-1921 թթ. Արեւելեան Հայաստանի կենտրոնական մասում հռչակուած Հայկական խորհրդային փոքրիկ հանրապետութիւնը, վայելելով յարաբերական խաղաղութեան եւ կայունութեան 70-ամեայ մի շրջան՝ կարողացաւ արձանագրել տնտեսական-մշակութային լուրջ առաջընթաց: Բայց, ի յաւելումն ցեղասպանութեան պատճառած մարդկային կորուստների, հայերը մեծ զոհեր տուեցին նաև Խորհրդային Հայաստանում. 1920-21 թթ. ոչնչացուեց անկախութեան շրջանում ազգային ոգով կոփուած գրեթէ ողջ հայ սպայակազմը, իսկ 1930-ական թթ. բոլշեւիկեան խաւարամոլութեան զոհ գնաց հայ մտաւորականութեան ծաղիկը՝ հազարաւոր շարքային քաղաքացիների հետ: 1941–1945 թթ. պատերազմին մասնակցութիւն բերած շուրջ 600000 հայորդիներից զոհուեց շուրջ 300 հազարը:

Պատկերացնելու համար, թէ սա ինչ ահաւոր թիւ է փոքրաքանակ հայ ազգի համար, բաւական է ասել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմում Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Մեծ Բրիտանիան տուել են գրեթէ ճիշտ նոյնքան սպանուած՝ համապատասխանաբար 291.557 ու 357.116 զինուոր:

1949 թ. Հայաստանից կազմակերպուած բռնագաղթը հազարաւոր նոր զոհերի պատճառ դարձաւ: Կայուն ու տնտեսական զարգացման աննախադէպ բարենպաստ ժամանակահատուած էին 1954-ից մինչև 1988 թ. ընկած տարիները: Սակայն սկսած 1988 թ.՝ Հայաստանի այս վերջին բեկորում հայ ազգի գոյատեւումը դարձեալ հարցականի տակ առնուեց. 1988 թ. Սպիտակի երկրաշարժը խլեց 25–30 հազար կեանք եւ ամբողջութեամբ աւերեց Հայաստանի մօտ մէկ երրորդը, ներառեալ Երեւանից յետոյ ամենամեծ հայկական քաղաքները՝ Գիւմրին ու Վանաձորը: Դրան հետեւած դարաբաղեան պատերազմում զոհուեցին եւս շուրջ մէկ տասնեակ հազար հայեր: Այս ամէնին ուղեկցած արտագաղթը, որը կանգ չի առել ու շարունակուում է, Հայաստանից արդէն տարել է 1–1.5 միլիոն մարդ:

Ցաւօք, ցեղասպանութեանը հետեւեց մի երկարատեւ շրջան, որի ընթացքում հայութեանը պարզապէս արգելուեց ազատօրէն անդրադառնալու իր կորուստներին, մտածելու ապաքինման ուղիների մասին: Ամենակարեւորն այն է, որ Խորհրդային Հայաստանը հայկական պետականութեան ձեւ չէր (որքան էլ փորձեն դրան այդպիսի գործառոյթներ վերագրել), այլ ազգային արժէքներին ու նպատակներին խորթ, գաղափարապէս գաղութացուած կուսակազմական վարչական միաւոր էր, հզօրագոյն կայսրութեան մի մասնիկը՝ իր մշակութապէս հետզհետէ ռուսականացող կուսակցական եւ մտաւորական վերնախաւերով:



Խորհրդային Հայաստանն ի վիճակի չէր ու բնաւ էլ կոչուած չէր յաղթահարելու ցեղասպանութեան հետեւանքները, ներառեալ ամենակարեւորը՝ հայկական բնիկ տարածքներին կամ դրանց գոնէ մի մասին վերատիրացումը (լինի Արեւելեան թէ Արեւմտեան Հայաստանում), որը եւ միայն կարող էր ապահովել հայ ազգի անվտանգ զարգացումը Խորհրդային կայսրութեան հնարաւոր փլուզման դէպքում:

Չլուծուեց եւ չէր կարող լուծուել նաեւ ցեղասպանութեան միւս՝ շարունակաբար ուժաբափող հետեւանքը՝ սփիւռքում մշտապէս ընթացող ու այժմ էլ աւելի արագացած ձուլումը՝ «սպիտակ ջարդը»: Ազգային իրաւունքների վերականգնման ուղղութեամբ հնարաւոր եղաւ կազմակերպուած պայքարի դիմել շատ աւելի ուշ՝ միայն 1960–ական թթ. սկսած: Ժամանակի այդ կորուստը եւս թանկ նստեց. այդ ընթացքում տասնեակ հազարաւոր հայեր զոհ գնացին սպիտակ ջարդին, իսկ թշնամին է՛լ աւելի ամրապնդեց իր նուաճած դիրքերը:

Շատ բնական ու հասկանալի է, որ այսպիսի աներեւակայելի տարածքային, հոգեւոր, մշակութային, նիւթական ու մարդկային կորուստները պէտք է ազդէին նաեւ ազգի ընդհանուր մտաւոր ու բարոյական ներուժի վրայ: Մակայն հե՛նց այս նոյն ցաւալի փաստերը մեզ պէտք է նաեւ ուժ ու հաւատ ներշնչեն, որովհետեւ, թերեւս ոչ մի ազգ չէր դիմանայ այսպիսի հարուածների եւ բառիս բուն իմաստով կ'անհետանար աշխարհի երեսից: Ուրեմն մեր ազգն ունի նաեւ անօրինակ տոկոսնութիւն եւ ապրելու կամք, որը եւ պէտք է շուտափոյթ գործի դնել՝ ի հեճուկս պարտաւորականութիւն, երբեմն էլ՝ անկախութիւնից կամովին հրաժարում քարոզող բոլոր ուժերի եւ տրամադրութիւնների:

Արմէն Այվազեան, ռազմական պատմաբան, քաղաքական գիտութիւնների դոկտոր

ԻՆՉՈ՞Ւ ԿՐ ԼՈՒՔ ՄԱՅՐԵՆԻՆ ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ. ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ԵՒ ՄԻՋՍԵՐՆԴԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

ԱՐՏԱ ՃԷՊԷՃԵԱՆ

Ընկերայնագումարանութեան դոկտոր



Երբ հայ ընտանիքի մը մէջ, ուր հայր եւ մայր հայ են, մայրենիի հաղորդակցութիւնը կը նուազի, եւ լեզուն դուրս կը մնայ տնային խօսակցութիւններէն, լեզուի բնականոն զարգացման ընթացքը կը դիմագրաւէ նոր մարտահրաւերներ՝ գայն մղելով զգայուն վիճակի: Լեզուական այս տեղաշարժը ցոյց կու տայ, որ մարտահրաւերը հասած է մեր ինքնութեան կարեւորագոյն բջիջին՝ տան:

Այսօր ընտանեկան յարկերէ ներս արեւմտահայերէնը կը սկսի տեղի տալ այլ լեզուներու, ինչ որ կը համարուի լեզուապահպանման կարեւորագոյն փուլը: Յատկանշականը այն է, որ այսօր արեւմտահայերէնին կրած փոփոխութիւնները բացառիկ չեն. անոնք կը համապատասխանեն վտանգուած լեզուներու ընդհանուր օրինաչափութիւններուն, զորս պիտի քննարկենք ստորեւ:

Այս յօդուածը, ընդառաջելով ընթերցողներու փափաքին եւ հետաքրքրութեան, կը քննէ **հայկական** (ուր հայր եւ մայր հայ են) ընտանիքներու մէջ լեզուի միջսերնդային



փոխանցման նահանջը եւ այդ երեւոյթին խորքային պատճառները: Այս երեւոյթը կը դիտարկենք ընկերալեզուաբանական տեսանկիւնէ՝ հիմնուելով ճոշուա Ֆիշմընի «Միջսերնդային խաթարման աստիճանաչափին» (Graded Intergenerational Disruption Scale-GIDS) վրայ, որ կը պարզէ արեւմտահայերէնի կենսունակութեան պատկերը:

Յաջորդիւ պիտի անդրադառնանք այս իրավիճակի հետեւանքներուն ու հնարաւոր լուծումներուն, սակայն նախ անհրաժեշտ է հասկնալ բուն երեւոյթը:

Պատմական եւ Աշխարհաքաղաքական Փոփոխութիւններ

Արեւմտահայերէնի գոյատեւումը սփիւռքի մէջ պատմականօրէն խարսխուած էր Մերձաւոր Արեւելքի յետեղեռնեան օճախներուն մէջ: Լիբանանի եւ Սուրիոյ հայ համայնքները, գործելով որպէս «ազգ՝ ազգի մէջ», ստեղծեցին կրթական եւ մշակութային խիտ ցանցեր, ուր հայերէնը ունէր բարձր հասարակական արժէք: Սակայն տեղական պատերազմներն ու տագնապները քայքայեցին այս «ամրոցները»՝ պատճառ դառնալով դէպի Արեւմուտք զանգուածային արտագաղթի:

Արեւմուտքի մէջ (Ամերիկա, Եւրոպա, Աւստրալիա) ընկերալեզուաբանական ճնշումները տարբեր են: «Ձուլարանի» գաղափարախօսութիւնը յաճախ փոքրամասնութիւններու լեզուները կը ներկայացնէ որպէս խոչընդոտ՝ ընկերային վերելքի ճամբուն վրայ: Օրինակ՝ Միացեալ Նահանգներու «Միայն անգլերէն» շարժումը ստեղծեց այնպիսի մթնոլորտ մը, երբ ծնողները կը վախնային, որ տան մէջ մայրենին խօսիլը պիտի յապաղեցնէր զաւակներու ուսումը: Այս առասպելը, թէեւ՝ գիտականօրէն հերքուած, տակաւին կ'ազդէ ծնողներու որոշումներուն վրայ:

1950-1960-ականներուն «Ամերիկեան երագին» հասնելու ձգտումը յաճախ կը պահանջէր սեփական ինքնութեան թօթափում: Ասիկա ոչ թէ օրինական պարտադրանք էր, այլ գոյատեւման ռազմավարութիւն՝ խտրականութենէ խուսափելու համար: Անուններու անգլիականացումը (Յովհաննէսը՝ Ճոն, Վարդուհին՝ Ռոզ) նախապաշարումները շրջանցելու միջոց էր: Նոյն տրամաբանութեամբ, յունական Փափատոփոլոս անունը դարձաւ Փափաս, իտալական Մարթիլիոնէն վերածուեցաւ Մարթինի, իսկ լեհական Պելինսքին՝ Պելի: Սկանտինաւեան երկիրներէն եկածներու պարագային, Շէօպերկը վերափոխուեցաւ Սիպորկի, իսկ իրլանտական Շանեսին՝ Չէյսի:

Լեզուական Տեղաշարժի Ընկերալեզուաբանական Պատճառները

Այս երեւոյթը բացաւ նոր էջ մը, բայց նաեւ ստեղծեց սերնդային անջրպետ: Զաւակները մեծցան իրենց ժառանգութենէն կտրուած անուններով, իսկ մայրենիի պահպանումը կրեց մեծ անկում, քանի որ ընտանիքներ դադրեցան տան մէջ մայրենին խօսելէ՝ վախնալով, որ «օտար շեշտը» (foreign accent) կրնայ արզելք հանդիսանալ յառաջդիմութեան: Վերջին վիճակագրութիւնները ցոյց կու տան, որ թէեւ առաջին սերունդի ներգաղթողներուն 20 տոկոսը կրնայ տիրապետել մայրենիին, բայց եւ այնպէս, երրորդ սերունդին անգլերէնի տիրապետումը յաճախ կը հասնի 90 տոկոսի կամ անելիի. միտում մը, որուն այժմ կը հետեւի արեւմտահայերէնը:

Լեզուական ուժացման ճնշումները սահմաններ չեն ճանչնար: Այս միտումը ոչ միայն չէ մարած Արեւմուտքի մէջ, այլ նաեւ նոր թափով կը տարածուի Միջին Արեւելքի եւ այլ գաղութներու մէջ: Այսօր հայերէնի նահանջը տան մէջ այլեւս միայն Արեւմուտքի «ձուլարանի» հետեւանքը չէ, այլ վերածուած է համաշխարհային հոգեբանական ճնշումի:



Այս տեղաշարժի գլխաւոր դրդապատճառը լեզուի ընկալումի գործնական արժէքն է: Համաշխարհայնացած տնտեսութեան մէջ հայ ծնողները յաճախ նախապատուութիւն կու տան անգլերէնին կամ տեղական հեղինակաւոր լեզուներուն՝ արաբերէն, ֆրանսերէն, գերմաներէն, սպաներէն, որպէս իրենց զաւակներու յաջողութեան հիմնական միջոց: Ընկերալեզուաբանները ասիկա կը կոչեն «Լեզուի տնտեսագիտութիւն»: Եթէ լեզու մը չ'ապահովէր յստակ տնտեսական կամ ակադեմական առաւելութիւն, անիկա յաճախ կը լքուի ի նպաստ աւելի «շահաւէտ» լեզուի մը: Այս կացութիւնը կը բարդանայ հայկական կեանքի «երկլեզուակարգ» բնոյթով, ուր տան լեզուն կը մրցի տիրող մշակոյթի լրատուամիջոցներու, համացանցի եւ հասակակիցներու խումբերու ճնշող հեղինակութեան հետ:

Մրցունակութեան Տագնապը

Միջին Արեւելքի գաղութները (Լիբանան, Սուրիա, Եգիպտոս) միշտ եղած են բազմալեզուութեան օրինակներ: Այսօր, երբ ծնողները բնականաբար կը ձգտին իրենց զաւակներուն համար ապահովել միջազգային մրցունակութիւն, կարելոր է վերյիշել, որ հայերէնը երբեք խոչընդոտ չէ եղած օտար լեզուներու տիրապետման: Ընդհակառակը, անիկա ծառայած է իբրեւ ամուր հիմք, որուն վրայ աւելցած են արաբերէնը, անգլերէնն ու ֆրանսերէնը:

Տասնամեակներ շարունակ Միջին Արեւելքի այս գաղութները հայապահպանման ամենէն ուժեղ բերդերն էին, ուր հայերէնը կենցաղային բնական լեզու էր: Սակայն այսօր հոն եւս ծնողները կը գտնուին «առաւելագոյն մրցունակութեան» տագնապին մէջ: Օտարամոլութիւնը եւ անգլերէնի կամ ֆրանսերէնի գերադասումը՝ որպէս «յաջողութեան միակ գրաւական», կը մղեն հայ ընտանիքները՝ տան մէջ հայերէնը փոխարինելու օտար լեզուով:

Թուային Դարաշրջանի Մարտահրաւերները եւ Միակ Համոզումները

Այսօրուան թուայնացած աշխարհին մէջ, ուր համացանցն ու ժամանցի միջոցները գրեթէ բացառապէս անգլերէն են, ստեղծուած է այն սիւալ համոզումը, թէ մայրենի լեզուն «աւելորդ բեռ» է, կամ՝ «սահմանափակող հանգամանք»: Ծնողները կը կարծեն, թէ ժամանակ խնայած կ'ըլլան՝ զաւակներուն հետ միայն տիրապետող լեզուով խօսելով, մինչդեռ իրականութեան մէջ զանոնք կը զրկեն երկլեզուութեան ընձեռած մտաւոր առաւելութիւններէն:

Լեզուաբանական բազմաթիւ հետազօտութիւններ կը փաստեն, որ մայրենիին տիրապետող երեխան շատ աւելի դիւրութեամբ կը սորվի երկրորդ կամ երրորդ լեզուները, սակայն «լեզուական շփոթի» կամ «ուշ լեզուի ելլելու» առասպելները կը մնան տիրական: Այս «վախերը» այսօր կը սնուցանուին նաեւ ընկերային միջավայրի կողմէ, ուր փոքրամասնութեան լեզուն կը դիտուի որպէս «յետամնաց», իսկ օտար լեզուն՝ «յառաջադէմ»:

Արեւմտահայերէնի Կենսունակութեան Պահպանումը եւ Միջսերնդային Փոխանցման Հեռանկարները (2025-2026)

«Միջսերնդային փոխանցման մակարդակը» այն առանցքային ցուցանիշն է, որ կը չափէ հայ ընտանիքներու ներուժը՝ լեզուն որպէս հաղորդակցութեան հիմնական միջոց զաւակներուն աւանդելու գործին մէջ: Ըստ ԵՈՒՆԵՍԿՕ-ի եւ սփիւռքեան վերջին հարցախոյզներուն, աշխարհագրական տարբեր գօտիներ կը ներկայացնեն ինքնատիպ մարտահրաւերներ եւ յաջողութեան օրինակներ:



Արեւմտահայերէնի Կենսունակութիւնը ըստ Շրջաններու (2025-2026)

Շրջան	Փոխանցման Մակարդակ	Կացութեան Բնորոշում
Միջին Արեւելք	65-75 տոկոս	Կայուն եւ Առանցքային Գօտի
Եւրոպա	20-30 տոկոս	Վերաշխուժացման Կարօտ
Թուրքիա	~18 տոկոս	Դիմադրողականութեան Ճիգ
Հիւսիսային Ամերիկա եւ Աւստրալիա	10-20 տոկոս	Նոր Ռազմավարութեան Հրաւեր
Հարաւային Ամերիկա	<10 տոկոս	Ժառանգութեան Պահպանման Փուլ

Միջին Արեւելքի 65-75 տոկոս փոխանցման մակարդակը ցոյց կու տայ, որ լեզուական միջավայրի պահպանումը լիովին իրագործելի է, երբ առկայ է համայնքային սերտ գործակցութիւն: Արեւմտեան երկիրներու (Եւրոպա, Ամերիկաներ) պարագային, տուեալները կը ծառայեն որպէս կառուցողական ազդակ: Ասիկա առիթ մըն է՝ վերանայելու կրթական եւ ընտանեկան լեզուական քաղաքականութիւնը: Փոխանակ տեսնելու լեզուի տկարացումը՝ մենք կը հրաւիրուինք կասեցնելու «լեզուական տեղահանութեան» գործընթացը: Հարաւային Ամերիկայի փորձառութիւնը մեզի կը սորվեցնէ, որ լեզուական աւիշը պահելու համար անհրաժեշտ է երիտասարդ սերունդը կապել իր արմատներուն՝ նորարարական հարթակներու միջոցով:

Այս պատկերը ոչ թէ վերջակէտ մըն է, այլ՝ նոր սկիզբ: Անիկա կը շեշտէ հայկական օճախներու մէջ լեզուական վերակենդանացման հրատապութիւնը: Երբ հայ համայնքները բարձր խտութեամբ կեդրոններէն կը տեղափոխուին դէպի արեւմտեան ցրուած միջավայրեր, լեզուն պարզապէս չի խամրիր, այլ կ'ենթարկուի «Լեզուական տեղահանութեան», որ կրնայ հանգումի տանիլ լեզուն՝ երկու սերունդի ընթացքին:

Ֆիշմընի Աստիճանաչափը՝ Ո՞ր ենք Մենք

Արեւմտահայերէնի այս ներկայ վիճակը ակնհայտաբար համար պետք է դիմել ճշուա Ֆիշմընի «Միջսերնդային ընդհատումի աստիճանաչափ»-ին (Graded Intergenerational Disruption Scale – GIDS): Այս սանդղակը ընկերակազմաբանական հիմնական կառոյց մըն է, որ կ'օգտագործուի որոշելու համար լեզուի մը կենսունակութիւնը եւ այն յատուկ ռազմավարութիւնները, որոնք անհրաժեշտ են «Լեզուական տեղաշարժը



շրջել»-ու (Reversing Language Shift – RLS) համար: Ֆիշմընի աստիճանաչափը ունի ութ փուլ, ուր ութերորդը կը նշանակէ լեզուի մահը, իսկ առաջինը՝ անոր լիակատար ապահովութիւնը:

Առաջին փուլ.- Լեզուն կը գործածուի պետական բարձր մակարդակներու եւ բարձրագոյն կրթութեան մէջ: Այս մակարդակին վրայ լեզուն կը վայելէ քաղաքական լիակատար պաշտպանութիւն եւ կը հանդիսանայ գիտական ու վարչական հիմնական հաղորդակցութեան միջոց:

Երկրորդ փուլ.- Լեզուն կը գործածուի տեղական լրատուամիջոցներու եւ պետական ծառայութիւններու մէջ: Այստեղ լեզուն դուրս կու գայ նեղ շրջանակներէն եւ կը դառնայ հանրային կեանքի ու տեղեկատուութեան անբաժանելի մասը:

Երրորդ փուլ.- Լեզուն ունի տնտեսական արժէք եւ կը գործածուի աշխատավայրերու մէջ: Լեզուի տիրապետումը կը դառնայ նախապայման՝ մասնագիտական յաջողութեան եւ առեւտրական յարաբերութիւններու համար:

Չորրորդ փուլ.- Լեզուն կը գործածուի պաշտօնական կրթութեան եւ դպրոցներու մէջ: Կրթական համակարգը կ'ապահովէ լեզուի քերականական ու գրական գիտելիքներու հետեւողական փոխանցումը աշակերտութեան:

Հինգերորդ փուլ.- Լեզուն կը գործածուի գրաւոր ձեւով՝ տան եւ համայնքին մէջ: Համայնքային մամուլը եւ գրաւոր մշակոյթը կը ստեղծեն այնպիսի միջավայր մը, ուր լեզուն կը պահպանէ իր մտաւորական կայունութիւնը:

Վեցերորդ փուլ.- Վճռորոշ շեմը. Լեզուն բնական ձեւով կը խօսուի տան մէջ եւ կը փոխանցուի զաւակներուն: Ասիկա ամենակարեւոր փուլն է, ուր լեզուն կը վերածուի կենդանի ժառանգութեան՝ առանց արհեստական ջանքերու կամ պարտադրանքի:

Եօթներորդ փուլ.- Լեզուն կը խօսուի միայն տարեցներուն կողմէ, բայց այլեւս չի փոխանցուի որ սերունդին: Այս փուլին լեզուն կը սկսի կորսնցնել իր գործնական դերը եւ կը վերածուի սոսկ յիշողութեան ու յարգանքի տուրքի:

Ութերորդ փուլ.- Լեզուն կը խօսուի միայն քանի մը մեկուսացած տարեցներու կողմէ. լեզուի մահը: Առանց անմիջական միջամտութեան եւ վերաշխուժացման ծրագիրներու՝ լեզուն կը դադրի գոյութիւն ունենալէ որպէս հաղորդակցման միջոց:

Բացատրենք:

Արեւմտահայերէնի Կենսունակութեան Ուղին. Հայ Ընտանիքը՝ որպէս Յաղթանակի Գրաւական

Ճոշուա Ֆիշմընի լեզուական աստիճանաչափին վրայ վեցերորդ փուլը կը հանդիսանայ այն վճռորոշ շեմը, ուր լեզուի մը ապագան կա՛մ կը փայլի, կա՛մ կը նահանջէ: Ասիկա այն կէտն է, ուր մայրենին տան մէջ բնականօրէն կը փոխանցուի յաջորդ սերունդին. եթէ այս շղթան ամուր մնայ, լեզուն կը շնչէ, իսկ եթէ խզուի, նոյնիսկ դպրոցն ու համայնքը անգոր կը դառնան զայն փրկելու: Պատմականօրէն Միջին Արեւելքի հոծ համայնքներուն մէջ արեւմտահայերէնը կը վայելէր չորրորդ եւ հինգերորդ փուլերու կայունութիւնը: Շնորհիւ հայաշատ թաղամասերու «թաղային ազդեցութեան» (ինչպէս՝ Պուրճ Համուտը կամ Հալէպի Նոր Գիւղը), լեզուն սահմանափակուած չէր միայն տան մէջ, այլ առեւտուրի, դպրոցի ու համայնքային կեանքի հիմնական գործիքն էր՝ ունենալով բարձր գործնական արժէք եւ պաշտպանուած ինքնութիւն:

Այսօր, սակայն, մեր լեզուական յաղթանակի դաշտը տեղափոխուած է բուն իսկ ընտանեկան յարկին տակ: Թէեւ օտար լեզուներու «ձգողականութիւնը» զօրաւոր է, սակայն վեցերորդ փուլը վերակենդանացնելու հնարաւորութիւնը միշտ առկայ է, եթէ գիտակցինք, որ հայերէնը պարզապէս «դասանիւթ» չէ, այլ՝ ինքնութեան բանալի: Ընտանիքը վերածելով

լեզուի բնական դարբնոցի՝ մենք կը կանխենք մայրենիի նահանջը դէպի լոկ տարեցներու յիշողութիւն եւ կ'ապահովենք նոր սերունդի մը յառաջխաղացքը, որ ո՛չ միայն կը զգայ իր հայութիւնը, այլեւ տիրապետելով լեզուին՝ կրնայ զայն հպարտութեամբ փոխանցել յաջորդներուն:

Արեւմտահայերէնի Համաշխարհային Հորիզոնը՝ Յոյսի եւ Վերելքի Տեսլական

Այսօր արեւմտահայերէնը կը գտնուի ճակատագրական փուլի մը մէջ. Միջին Արեւելքի մէջ՝ ամուր, Թուրքիոյ մէջ՝ վերածնող, իսկ Արեւմուտքի մէջ՝ ձուլման դեմ պայքարող: Սակայն այս իրավիճակը ոչ թէ դատավճիռ է, այլ՝ նոր զարթօնքի հրաւեր:

Մայրենին պահպանելը նահանջ չէ արդիականութենէն, այլ՝ մրցակցային առաւելութիւն: Տան մէջ հայերէն խօսելով՝ մենք մեր զուակներուն կը ջամբենք ինքնավստահութիւն եւ բազմակողմանի աշխարհահայեացք: Այսօրուան աշխարհը կը գնահատէ բազմազանութիւնը: Թուային դարու ընձեռած կարելիութիւններով արեւմտահայերէնը կը դադրի լոկ «պահպանուող» մասունք ըլլալէ եւ կը վերածուի ստեղծագործ ու կենսունակ ուժի: Լեզուի ապագան գրուած չէ մութ գոյներով. անիկա կը գտնուի իւրաքանչիւր ծնողի շրթներուն եւ իւրաքանչիւր երիտասարդի կամքին մէջ: Արեւմտահայերէնի յարատեւութիւնը մեր հաւաքական յաղթանակն է:

Յաջորդի պիտի քննարկենք կրաւորական ժառանգութենէն դէպի կենսունակ ընտանեկան ռազմավարութիւն անցնելու գործնական քայլերը:

Նիկոսիա, մայիս 2026

ՏԵՍԱԿԷՏ

ՀՀ Ընտրութիւններուն Առիթով, Զատանցանք Մը

«ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ, ԱՄԵՆԱՄԵԾ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ԱՆՅԱԶՈՂ ԱՌԱՋՆՈՐԴՆ Է»

ԸՏՈՂԸ... ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆՆ Է



ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ

Հայաստանի խորհրդարանական (Ազգային Ժողովի) ընտրութիւններու կայացման մնացած է շուրջ մէկ ամիս, բայց, պայքարի թափը այնքան սաստկացած, բորբոքած ու բռնկած է, որ մարդ կ'ապշի, թէ այդ բոլորը



ի՞նչ է.

- Օրինապահութի՞ւն
- Կարգապահութի՞ւն
- Ժողովրդավարութի՞ւն
- Մրցակցութի՞ւն
- Քաղաքացիութի՞ւն
- Իշխանահզօրութի՞ւն
- Ինքնավերանորոգութի՞ւն
- Հնազանդութի՞ւն
- Հաւատարմութի՞ւն
- Ժողովրդականութի՞ւն

Այս հաւանականութիւններէն իւրաքանչիւրը ունի իր պատմութիւնը, թեզը, ծրագիրը, նպատակը, օրակարգը, թղթածրարը, ուղղութիւնը, հաշուեցանկը, թիրախաւորումը, բոլորն ալ, առաւել կամ նուազ չափանիշներով, մօտաւոր թէ հեռակայ նկատառումներով, արկածախնդրական թէ կամայական հնարքներով, քաղաքական թէ ընդլայտական ոլորապտոյտներով, փորձելով ինքզինք նկատել կամ ներկայացնել որպէս, ամենէն... իտէլականը, ամբողջականը, օրինականը, ժողովրդականը, ծառայողականը, հայրենասիրականը, ազգայնականը կամ... անկրկնելիականը:

Անշուշտ, անոնցմէ, ՈՄԱՆՔ (քիչ թիւով), թէեւ դատարկապորտական ցանկին մաս չեն կազմեր, սակայն, ուշադիր ու հետեւողական ակնարկ մը, կը բաւէ, տեսնելու ու համոզուելու համար, որ այս մրցակից-անգլուխներուն մէջ, չեն պակսիր այնպիսիներ, որոնք ոչի՛նչ կը ներկայացնեն, ոչ ալ կրնան դասուիլ որեւէ թեկնածուականներու շարքին:

Մակայն, ասիկա գիտցուած ու ճանչցուած անկախակա՛ն Հայաստանն է, ուր ամէն ինչ հաւանական է, պարագայական կամ թէական, ոչինչով յիշեցնելով այն Հայաստանը, որ 70 տարուան փառքի ու պատիւի լոգունգներով պարուրուած էր, հսկայական աւանդ, մշակոյթ, գիտութիւն, կրթութիւն, գրականութիւն, արուեստ եւ մասամբ նորին, կտակելով ու ժառանգելով հայ ժողովուրդին (հոգ չէ թէ՛ այդ ժամանակաշրջանին ալ կային... կաղացումներ ու թերացումներ, բայց, վերջին հաշուով, լաւը՝ վատէն, բարիքը՝ չարիքէն, սպիտակը՝ մութէն, լոյսը՝ խաւարէն երբեք չշփոթելով):

Չափազանցութի՞ւն է այս մէկը, քա՛ւ լիցի, այլ՝ չոր ու ցամաք իրականութիւն, երբ անկախութեան տարիները կը խորաչափուին, անմիջական անցեալին հետ, ուր համարեա ամէն ինչ լուսաւոր էր, յուսադրող եւ աւետաբեր (որքան ալ՝ հակառակը պնդողներ ըլլան, հեզնողներ, շրջանցողներ կամ խեղաթիրողներ, սակայն, ատոնք ոչ մէկ նշանակութիւն



ունին կամ կը ներկայացնեն, այնքան ատեն որ՝ ճշմարտութիւնը, հայելիի մը հօգորութեամբ ու թափանցիկութեամբ, ինքզինք... կը պարտադրէ):

Այս դիտարկումները ինչի՞ կը միտին (երէկ, հիմա թէ վաղը), եթէ ոչ ցոյց տալու, թէ անկախ Հայաստանը, որուն մասին երագուած է, ահաւասիկ, աւելի քան երեսնամեակ մը ինքզինք չէ գտած, չէ կրցած ինքզինք վերագտնել, ոչ ալ դուրս գալ լճացումներէն ու կը ծփծփայ հոս ու հոն, ոչ միայն ներքին ծալքերուն մէջ, այլ՝ արտաքին յորձանուտներուն:

Դժուար է տեսնել ու զգալ, թէ Հայաստանը կը գալարի իր ցաւերուն մէջ, ժողովուրդը մոլորեալ վիճակ մը կը պարզէ, իսկ երէկուան եւ այսօրուան «օլիկարխ»ները տակաւին կը դեգերին աջ ու ձախ, իրենց թալանները իւրացնելով, դղեակները վայելելով, գոյքերը սեփականացնելով, պիլիարներուն վրայ բազմելով, այլեւ՝ իրենց գաւակներուն փոխանցելով զանոնք, մինչ, ժողովուրդը, մանաւանդ միջակ դասակարգի հատուածները (ըսե՞նք նաեւ անկարները, տեղահանները, կարօտեալները, անտէրները), կը մնան անպատասպար եւ անօթեւան եւ անճարակ:

Լաւ, մինչեւ ե՞րբ այս փնթիութիւնն ու թուլամորթութիւնը, մինչեւ ե՞րբ այս խտրականութիւնն ու միակողմանիութիւնը, մինչեւ ե՞րբ այս անտարբերութիւնն ու թափթփածութիւնը:

Չե՞ որ կը խօսուի, կը կրկնուի ու կը պահանջուի.

- Զգօն պատասխանատուութիւն
- Ամբակուռ գերիշխանութիւն
- Ուժեղ պետականութիւն
- Անվիճելի արդարութիւն
- Ժողովրդանուիրական օժանդակութիւն

Բայց, ի՞նչ կապկութիւններու ու միմոսութիւններու առջեւ կը գտնուինք, երբ կը տեսնենք ու կը լսենք ժողովուրդի կարեւոր մէկ մասին դժգոհութիւնները, բողոքները ու հոգերը, տիրող անմխիթար կացութիւններէն, հակառակ որ՝ շատեր ալ գոհ են ու լաւատես ապագայէն, սակայն, երբ հարցը կու գայ նախաՎարչապետական ընտրութիւններուն, հոն մեր առջեւ կը յայտնուին ցիցեր ու ձողեր, որոնք բնաւ ալ չեն ներշնչեր յուսադրելիութիւններ, այնքան ատեն որ՝ երէկուան «հրէշ»ները եւ «արիւնարբու»ները հրապարակի վրայ են, մէկը՝ իր ծուռ ծնօտով, միւսը՝ իր կատուի «մլաւին»ով:



Պտոյտ մը ընտրական արահետներուն ու շաւիղներուն, պողոտաներուն ու հրապարակներուն մէջ, արդէն ցոյց կը տրուի, թէ որքան երթուդարձ, շարժում, ժխտը եւ ամբոխում կայ, համարեա Հայաստանի ամբողջ տարածքին:



Անշուշտ, ուրախալի ու բերկրալի է տեսնել այն հետաքրքրութիւնը ու ժողովրդականութիւնը, որ կը տիրէ հասարակութեան տարբեր շրջանակներուն մօտ, ընդունելի, ընտրելի, յարգելի, յաղթանակելի ու դրոշմելի ԳՈՐԾԱԴԻՐ իշխանութիւն մը ունենալու հեռանկարով, որպէսզի հայրենի ժողովուրդը զայն վայելէ, մեծարէ, պաշտպանէ ու պատուէ, անոր մէջ տեսնելով իր երջանկութիւնը, զօրակցութիւնը ու հպարտութիւնը, միանգամայն:

Հայրենի ժողովուրդին ազնուագոյն նպատակն է, որ նշանակելի կառավարութիւնը, իր վարչապետութեամբ ու նախարարութեամբ եւ, ընդհանրապէս, իր խոստմնալի, անարատ, բանիմաց, մաքրամաքուր, ծառայասէր ու հայրենասէր տարրերու կազմութեամբ, փայլատակեն, ուր պետականութիւնը, ժողովրդավարութիւնը, մանաւանդ՝ իրենց արժանաւորութեամբ ու ձեռներէցութեամբ նշանաւորուին:

Պահանջքներ եւ առաջադրանքներ, տեսիլքներ ու սկզբունքներ, որոնք նոր վարկով եւ ուրոյն վարքով, համոզիչ յառաջդիմութեամբ եւ ընկալելի նախաձեռնութեամբ, կրնան նորօրեայ «Նոյեան Տապան» մը կենդանացնել եւ առաջ մղել:

Ասոնք սակայն, կրնա՞ն հեզասահութեամբ, անպարտելիութեամբ, անաչառութեամբ, անքակտելիութեամբ կամ լիարժեքութեամբ գործադրուիլ, երբ «բուռ մը» հայրենիքի առջեւ ցցուած են արուեստախառն բարդ բազում խոչընդոտներ, որոնց մեծ մասը ներքին պառակտումներու եւ անջատումներու արդիւնք են:

Զարմանալի այլանդակութիւնը այն է, երբ հայրենիքի գերակայութիւնը մոռցած (կամ ոտնակոխա՞ծ) արկածախնդիրներ ու բախտակիրներ, տակաւին հայրենիքը կը շփոթեն անձնական կամ անհատական կրպակներու հետ, ուր ամէն ոք կրնայ զայն կտցահարել կամ խայթել, միշտ փնտռելով իր սին շահերը կամ հետեւելով սնտիապաշտ խուժաններու հեքին եւ կամ՝ հնագանդիլ իր պատեհապաշտական (յ)զգացումներուն:

Դժբախտաբար, ինչպէս հայրենի ժողովուրդին զգալի մաս մը, նաեւ՝ Սփիւռքէն, ի տես հոս ու հոն ծաւալած անկայունութիւններուն եւ տափակութիւններուն, խառնակչութիւններուն եւ այլամերժութիւններուն, ցաւ ու մորմոք ապրելով, խոր վիշտով ու կսկիծով կը հետեւին այն իրադարձութիւններուն եւ երեւոյթներուն, որոնք պատած են հայրենիքը, իսկ այդ բոլորը կը հիւժեն զիրենք, որովհետեւ այն երազներով եւ իդձերով ուզած էին փարատել կամ ամոքել իրենց հոգերը, մինչ այսօր, դէմ յանդիման կը գտնուին, բոլորովին ուրիշ աղէտներու եւ անակնկալներու դիմաց:

Ահաւասիկ, այսօր, մարտահրաւեր մը կայ հայրենի ընտրող զանգուածներուն առջեւ, պիտի կրնա՞ն շրջանցել կամ յաղթահարել անցարգելները, երբ իրենցմէ ոմանց մօտ կան, կ'երեւան, խմբաւորումներ, հոսանքներ, բեւեռներ, որոնք, այս կամ այն տեսանկիւնէն ու կողմնորոշումէն ինքզինքնին կը նկատեն յարմարագոյն թեկնածուներ, իրաւացի մրցորդներ եւ բնական յաւակնորդներ:

Այս ընտրանքները կամ թեկնածուները, թերեւս ոչ մէկ ձեւով քննադատելի կամ անընդունելի են, յատկապէս՝ երբ անոնց մէջ կան այնպիսիներ, որոնք արժանիքներ են,



անշահախնդիրներ ու հաւատաւորներ, ծառայելու իրենց հայրենիքին ամենայն պարկեշտութեամբ եւ անկեղծութեամբ, սակայն, պայմանները եւ առիթներն են, որոնք կ'որոշեն անոնց երթն ու ճակատագիրը:

Սակայն, ի՞նչ կարելի է ըսել, երբ հրապարակի վրայ կը յայտնուին (ոչ-անակնկալ), այնպիսի հաստգրուիւններ, որոնք անպատկառութեամբ համակուած, առաւել՝ իրենց մօտիկ անցեալին մէջ գործած են աննկարագրելի եւ աննախընթաց եւ աններելի գործարքներ:

Ատոնցմէ մէկը, անտարակոյս, է՛ ու կը մնայ... «Ռոբ» անունով, անուղղայ մը, որ չի բաւեր իր գործած աւերներով դարձաւ համաշխարհային տականք մը, իսկ հիմա, դոյզն մարդկութենէ ու հայութենէ զուրկ կմախքանման արձան մը, որմէ հայ ժողովուրդը միայն նողկանք կ'ապրի:

Այս մարդուկը, որ արժանի ալ չէր նախագահ կոչուելու կամ դառնալու (ականջը խօսի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին), իսկական մարդասպան մը դարձաւ, Հայաստանը հայաթափելով, երկիրը հրահարելով, ժողովուրդը հաշուեյարդարելով եւ, առհասարակ, ՄԵԻ անուն մը ձգելով իր ետին, հայոց պատմութեան դաւաճաններուն, դաւաղիրներուն եւ յուղաներուն մօտ, հոչակուելով, յաւերժական... հայապիղծ մը:



Այս սրբապիղծը, վերջերս, ընտրական շրջապտոյտի ելած էր, առանց զգացումի (կարծես թէ ունէր), այցելութիւն տալու որոշ շրջաններ, իր վարչապետական թեկնածութիւնը ծախելու այն հայերուն, որոնց գումարները շորթած էր, այլեւ՝ ընտանիքներն ու տուները քանդած:

Ես պիտի չխօսիմ այս անարժանին եւ անպատշաճին մասին, որ միայն սրտխառնուք կը պատճառէ, բայց, հետեւեալ իր մէկ ցինիկ յայտարարութիւնը կը բաւէ, համոզուելու համար, որ՝ ով է ինք իր էութեամբ, ինքնութեամբ ու պատկանելիութեամբ:

«Իւրաքանչիւր երկրի համար ամենամեծ սպառնալիքն անյաջող առաջնորդն է»:

Ով որ այս ձաբոտութիւնը վայելելու ու համտեսելու ախորժակ ունի, կրնայ զայն փորձել, որովհետեւ, նման անդէմք-դէմքէ մը, աւելի անմարդկային ցնորամտութիւն մը, չի կրնար դուրս գալ:


Յամենայն դէպս, հայրենի ընտրող համակարգերը, իրենք թող որոշեն, այսպիսի գիշատիչ մը կրնա՞յ նորէն յայտնուիլ բարձունքի մը վրայ, որմէ զայն վար նետելն ու զցելը պէտք է ըլլայ՝ «փրկարարութիւն մը»:

(Պէյրութ)

7/5/2026

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ Հ.Հ. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Գեորգ Պետիկեան



Շուտով մեր հայրենիքէն ներս տեղի պիտի ունենան նոր Ազգային Ժողովի ընտրութիւններ:

Արդ, այս տողերով կ'ուզեմ դարձեալ կամուրջ մը նետել, եւ կապուիլ անխտիր բոլոր ընթերցողներուս, որպէսզի օրուան խորհուրդին մէջ փաթթուած, կրկին պարզեմ միտքս:

Նախ ըսեմ որ մտահոգ բառերով կ'առաջնորդուին այս տողերս, որովհետեւ, ներկայիս Հայաստանէն ներս խառնաշփոթ վիճակ մը գոյութիւն ունի: Տեսակ մը անհամ եւ անստոյգ մթնոլորտ: Իր կարգին, աշխարհն ալ մօտիկէն եւ ապշահար մեզ կը դիտէ:

Վերելը յիշեցի, որ մեր հայրենիքէն ներս ԱԺ-ի նոր ընտրութիւններ տեղի պիտի ունենան ու ա՛յս կ'ենթադրէ նոր առիթ եւ անոր կողքին ալ՝ նոր յոյսեր: Գիտենք, որ ապագայի ծրագրերով ապրող մարդը, առ հասարակ պէտք է աչքի առաջ ունենայ ոգեշնչող եւ անսակարկ նուիրումի օրինակը: Մակայն, մեր հայրենիքի ստեղծագործական աշխատանքը կը պահանջէ ո՛չ միայն նուիրում, այլեւ՝ բոլոր մեր ներքին եւ արտաքին հարցերէն եւ խնդիրներէն ձերբազատուած ուղեղ:

Ու ինչպէս ամէն երկրէն ներս, մեր մօտ ալ «ընտրութիւնը» նոր յոյսեր կը շարէ մարդկային կեանքի հորիզոններուն վրայ: Ուստի, քուէարակող իւրաքանչիւր անհատ, պարտաւոր է ինքն իր դիմաց նստած, տեսակ մը հայելիի առջեւ, ինքզինքին հարց տայ, լաւապէս քննէ, լաւ կամ գէշ ճշդորոշէ, կշիռքի զարնէ ընտրութեան մասնակից թեկնածուն եւ անոր հրամցուցած առաջադրութիւնները: Բայց, արդե՞օք քուէարակող հայրենակիցը, այս առթիւ քաջութիւնը պիտի ունենայ ինքզինք դիտելու եւ վերաբժեւորելու իր ինքնութիւնը:

Անկեղծօրէն ըսեմ, որ հաւատքս պարզապէս երազի ու գեղեցկութեան փնտռտուք մըն է, որովհետեւ, պէտք է գիտնալ, որ մանաւանդ ընտրութիւններու շրջանին եւ ամէն տեղ, բառը եւ անկէ կախուած խոստումը, միշտ ձրի եղած է...:

Նաեւ աւելցնեմ, որ զանազան պատճառներով, յայտնի եւ անյայտ պայմաններու բերումով, շատեր կրնան խուսափիլ նման աշխատանքէ մը: Իսկ ճիշդ հակառակը, ուրիշներ ալ իրենց դիմաց ներկայացուած առաջադրութիւններուն մէջ, յանդգնութիւնը կ'ունենան իրենց ներաշխարհը պեղելու՝ սեն ու ճերմակը դուրս բերելու համար:

Լաւ յիշենք.- աննպատակ գոյութիւն մը, «անուն» մը, աւելի ճիշդ՝ դեմք մը ընտրելը անօգուտ է, թէ՛ անհատին, եւ թէ՛ հայրենիքին համար:



Արդ, կը յուսամ, որ այս ընտրութիւնները անցնին խաղաղ, արդար ու նաեւ ոգեպնդիչ մթնոլորտի մէջ: Որովհետեւ, կարգ մը նախկին երեւոյթներ, որոնք դարձած են ցցուն եւ աչքառու, անհանգստացուցած են մեր բոլորին մտածումներն ու զգացումները:

Ու եթէ յանկարծ ինծի հարցնելու ըլլաք թեկնածուի հայու կերպարի մասին, ըսեմ, որ իմ կարծիքով այդ թեկնածուն, իբրեւ զարգացած միտք, ազգային գիտակցութեան հասունութեան կողքին հաշտուած պետք է որ ըլլայ մեր երկրի ներկայ ցաւալի եւ վշտալի իրականութեան հետ: Նաեւ ա՛ն ըլլայ մտածող, եւ արդարօրէն տրամաբանող, եւ անպայման յաղթահարող մարտահրաւերներուն մասնակից դարձող անհատ: Աւելին՝ ամէն հարցի քաջատեղեակ, ե՛ւ մասնագետ, ե՛ւ շրջահայեաց: Հայրենի մշակութային կեանքին ոչ միայն իրազեկ, այլեւ՝ զարգացնող միտք: Նոր շունչով եւ բոլոր ներքին ու արտաքին հարցերուն ազգային արժանապատուութեան զգացումով մօտեցող անհատ:

Պատասխանատու եւ վստահելի անձ: Ճիշդն ու սխալը զանազանող եւ դիրքորոշող քաղաքացի: Արժանին՝ արժեւորող, եւ արդարը՝ արդարացնող պատգամաւորը: Այլ խօսքով, ազգային մեր կեանքի հեւքը նորոգող մը, որ միշտ նոր առիթներ, եւ նոր յոյսեր պիտի բերէ իր հետ: Մէկը, որ պիտի փորձէ եւ ճգնի անպայմանօրէն եւ գործնականօրէն մասնակցիլ ազգին եւ պետականութեան նոր փայլք տուող եւ պահող ծրագիրներու իրականացումներուն:

Ապա, միւս կողմէ, եթէ ինծի հարց տրուի, թէ ընտրող քաղաքացին ի՞նչ պետք է ընէ.- ըսեմ, պարզապէս նախ պետք է, որ վերահաստատէ սեփական իր արժանապատուութեան զգացումը, եւ ապա անցնի քուէարկութեան: Նաեւ պետք է գիտնայ, որ ներկայ համակարգի փոփոխութեան պահանջը, ո՛չ նախագահէն եւ ո՛չ ալ վարչապետէն կամ ընդդիմութենէն, կամ իշխանութենէն կախեալ է, այլ՝ միայն ու միայն իրմէ, ընտրող, կամ քուէարկող քաղաքացիէն:

Նաեւ կը կարծեմ, որ այս ընտրութիւնը ճակատագրական պիտի ըլլայ բոլորիս համար, որովհետեւ, այսքա՛ն երկար ու շատ մարդկային եւ տարածքային կորուստներէ ետք, կը հաւատամ, որ ան պիտի կարենայ մեր երկրին վերադարձնել իր իրաւ ազգային դիմագիծը: Ու այս մէկը միայն կրնայ իրականանալ մեր հայրենի քաղաքացիին սթափումի ճիգով, անոր՝ մտքի նոր կոփումով, անոր՝ արդար ղեկավարի մը ճշգրիտ ընտրութեան ճամբով: Մէկ խօսքով՝ անոր հայու արդար խղճի ձայնէն ծնած քուէով:

Այս մասին, միշտ խօսած, գրած, կարդացած եւ զրուցած ենք:

Կ'աղօթեմ եւ նոյնքան ալ կը յուսամ որ մեր ժողովուրդը իր արդարամտութեամբ պիտի կարենայ հաստատել իր իրաւ ինքնութիւնը: Մակայն՝ ինչ որ ալ ըսենք եւ ցանկանք, անիմաստ է, որովհետեւ, նման մտքի շարունակութիւնը կախեալ իրմէ, մի միայն հայրենի քուէարկող քաղաքացիէն:

Արդ, բոլորիս համար, այս ընտրութիւնը էական նկատուած է, որովհետեւ, անոր արդիւնքէն կարելի պիտի ըլլայ որոշել աշխարհի ազատամիտ ու զարգացած ժողովուրդներու շարքին մեր գոյութեան շարունակութիւնը:



Վերջ ի վերջոյ, ա՛լ կը բաւէ այսքա՛ն չարչարանք, այսքան զրկանք, ե՛ւ նախատինք, ե՛ւ ֆիզիքական ու հոգեկան կորուստ: Ժամանակն է, որ հայը վերադառնայ իր նախկին «պարին»: Ու իբրեւ սփիւռքահայ, մեծապէս կը բաղձամ, որ այս ընտրութիւնները պիտի կարենան իրականացնել բոլորիս սրտէն բխող այս գլխագիր «բաղձանքը»:

bedig43@aol.com

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ (CRITICAL THINKING) ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ

✉ ՎԱՐՈՒԺ ԹԷՆՊԷԼԵԱՆ



16/4/2026



Կասկածէ վեր է, որ որեւէ ընկերութեան կամ ազգի ողնայարը կը հանդիսանայ երիտասարդութիւնը: Եթէ ընկերութիւն մը առողջ է, անպայման ունի երիտասարդութիւն մը, որ զայն կ'առաջնորդէ դէպի յառաջդիմութիւն, ընկերային փոփոխութիւն եւ գաղափարական նուաճումներ:

Սակայն, երբ ընկերութիւն մը կը պարզէ հիւանդագին վիճակ մը, հիմնական պատճառներէն մէկը պէտք է փնտռել երիտասարդութեան դրսեւորած հոգեմտաւոր իրականութեան մէջ: Երիտասարդութիւնը բնախօսական տուեալ չէ միայն. ան նաեւ դաստիարակութիւն է, փոխանցում է, միջավայրի ձեւաւորում: Անոր բնորոշ ըմբոստութիւնը եւ փոփոխութեան հակամէտ բնաւորութիւնը կրնայ դառնալ կառուցողական ուժ, բայց նոյնքան նաեւ՝ քայքայիչ, եթէ զայն չուղղուի եւ չխարսխուի առողջ արժէքներու վրայ:

Այս հոլովոյթին մէջ, պահպանողական եւ իշխանատենչ կառոյցները՝ պետական թէ կուսակցական մակարդակներու վրայ, բնականաբար կը հակադրուին մտածող եւ տեսլապաշտ երիտասարդութեան, որովհետեւ նման երիտասարդութեան մը գոյութիւնը ենթահողը կը պատրաստէ փոփոխութիւններու, յառաջդիմութեան, հաշուետուութեան համակարգի յառաջացման եւ յեղաշրջումներու, որոնք բնականօրէն կը հակադրուին իշխանամոլական խաւարամտութեան եւ աւատապետական մաֆիականութեան: Այդ պատճառով ալ, իշխանամոլ եւ աւատապետական մտածողութիւնը յաճախ կը փորձէ չեզոքացնել կամ աղաւաղել երիտասարդութեան ներուժը:

Իսկ ի՞նչ վիճակ կը պարզէ հայ երիտասարդութիւնը մեր իրականութեան մէջ:



Հայ երիտասարդութիւնը, ինչպէս ամէն հասարակութեան մէջ, խորապէս կ'ազդուի իր շրջապատէն: Հայաստանի անկախութենէն ետք ձեւաւորուած նոր իշխանատենչ եւ նիւթապաշտ միջավայրը զգալիօրէն ներգրաւեց երիտասարդութեան լայն շրջանակներ, որոնք աստիճանաբար որդեգրեցին նոյն արժէքային համակարգերը: Մփիւռքը, իր կարգին, շատոնց ենթակայ էր նման միտումներու:

Այս հոսանքին կողքին, նշմարելի է նաեւ գոյութիւնը այլ հոսանքի մը, որ կը պահուրտի գաղափարին ետեւ, իր արարքները կ'արդարացնէ գաղափարով, բայց այս կեղծիքին ետեւ հիմնականօրէն առկայ է իշխանամոլութիւնը: Այս հոսանքը նոյնքան այլասերող եւ ապաքաղաքականացնող իրավիճակ մը կը ստեղծէ, որովհետեւ կ'արտադրէ տիպարներ, որոնք գաղափարականութիւնը աղարտելու կողքին, կը վարակեն ժխտականութիւն եւ վանողականութիւն՝ ապաքաղաքականացնելով հաւաքական կեանքը:

Այս բոլորին մէջ կայ սակայն գաղափարական առողջ երիտասարդութիւն մը, որ կը պայքարի պահելու համար իր առհաւական դիմագիծը: Այս երիտասարդները, սակայն, ներկայ իրավիճակին մէջ կը ներկայացնեն փոքրամասնութիւն մը եւ իրապաշտ ըլլալու համար, առայժմ չունին քաղաքական, ընկերային եւ տնտեսական մեր կեանքը բարեփոխելու տուեալներ, որովհետեւ դէմ յանդիման կը գտնուին անպատասխան հարցադրումներու: Ինչպէ՞ս կենսաւորել տեսլապաշտութիւնը իշխանատենչական անբարոյութեան այս մթնոլորտին մէջ: Տեսլապաշտութիւնը վերածել միջոցի՞, թէ՞ նպատակի: Եթէ միջոց է, ինչպէ՞ս պայքարիլ հակառակ հոսանքի ահարկու զէնքերուն դէմ:

Այս հարցումները հայ երիտասարդութիւնը դէմ յանդիման կը դնեն հրամայականի մը՝ մտածողութեան եղանակի մը, քննական մտածողութեան զարգացման, որ ունի գիտական, վերլուծական եւ հետաքննական հիմք ու լաւագոյնս կը պատշաճի ներազգային եւ միջազգային իրավիճակներուն, մասնաւորաբար համացանցի, ընկերային ցանցերու եւ ԱԲ-ի անհակակշիռ զարգացման մթնոլորտին մէջ: Պէտք է փոխենք մեր մտածելու ձեւը, ոչ թէ խորքը: Մեր մտածելաձեւը պէտք է յարմարի 21-րդ դարու արհեստագիտական արագընթաց նուաճումներու հոլովոյթին, ինչու չէ տեսնելու, տուեալներ հաւաքելու, վերլուծելու եւ եզրակացնելու թուային եղանակին: Վերջ ի վերջոյ, պայքարը, շարժումը գիտութիւններն են, իրենց քաղաքական, տնտեսական եւ զինուորական բոլոր երեսներով:

Քննական մտածողութիւնը պարզ մտային վարժանք մը չէ, այլ՝ գիտական, վերլուծական եւ հետաքննական մեթոտաբանութիւն մը, որ առիթ կը ստեղծէ հասկնալու իրականութիւնները իրենց ամբողջ բարդութեամբ:

Մեր մշակութային ժառանգութիւնը եւ ազգային ասանդութիւնները մեզի կրնան շնորհել հաւատք եւ ինքնութիւն, սակայն անոնք չեն կրնար առանձինն ապահովել արդի գոյապայքարի միջոցները: Այդ պատճառով, առանց հրաժարելու մեր արմատներէն, պէտք է զարգացնենք նոր մտածելակերպ մը, հիմնուած շրջապատի իրականութիւնները ճանչնալու եւ անոնց բացուելու քննական մօտեցումի մը վրայ:



Հաւաքական կեանքին մէջ առկայ թերութիւնները չեն սրբագրուիր դատարկ քննադատութեամբ, ճառերով կամ բամբասանքով ու հայհոյանքով: Անոնք կը պահանջեն խորքային ըմբռնում, պատասխանատու մօտեցում եւ գիտակցուած հակազդեցութիւն:

Այսօրուան աշխարհին մէջ, ուր պահպանողական հոսանքներ կը փորձեն կլանել հասարակութիւնները, մենք չենք կրնար չճանչնալ մեր խնդիրները եւ չփնտռել համապատասխան միջոցներ: Իսկ այդ միջոցներէն գլխաւորը առողջ, քննական մտածողութեամբ ձեւաւորուած միտքն է, որ կը ծնունդ առնէ իրականութեան առարկայական գնահատումէն:

Պայքարը անցեալին կառչիլ չէ. ան ապագայակերտ գիտութիւն է: Գիտակցութիւնը այսօր սերտօրէն կապուած է գիտութեան: Հաւատքը կը մնայ կարելոր, սակայն առանց գիտական ըմբռնումի՝ ան կը դառնայ անբաւարար:

Ուստի ժամանակն է տարակուսելու: Ժամանակն է հարցադրելու:

Տարակուսանքը քննական մտածողութեան սկիզբն է: Եթէ չկասկածինք մեր տեսածին ու լսածին, եթէ չվերաքննենք մեզի մատուցուած «ճշմարտութիւնները», չենք կրնար մօտենալ իրականութեան:

Ժամանակն է, որ մեր կարդացածը, տեսածը եւ լսածը չընդունինք պատրաստի ձեւով:

Տարակուսի՛նք, հարցադրե՛նք, քննե՛նք:

Որովհետեւ ճշմարտութիւնը միշտ չէ, որ կը գտնուի այնտեղ, ուր մեզի կը հրամցուի:

Վ. Թէնպէլեան

ԹՇՆԱՍԻՆ՝ ԹՇՆԱՍԻ Է՛, ՑՆՈՐ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

ԱՅԼԱՊԷՍ՝ ՉԻՔ ՃԱՆԱԶՈՒՄ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ

Իսրայէլը կը մնայ Միջին Արեւելքը կեղեքող, բզբտող ու ճգնող թունաւոր կարիճը, որ չի բաւեր եկած ու ծուարած է անոր ծոցին մէջ, այլ կը շարունակէ փորձել զայն առնել իր ճիրաններուն ու մագիլներուն մէջ:

Եթէ ըսուի (կամ առարկուի), որ ան՝

- ՊԵՏՈՒԹԻՒՆ է, ո՛չ, չէ ու չի կրնար ըլլալ, կոչուիլ ու դրսեւորուիլ այդ որակաւորումով, պարզապէս անոր համար, որ ո՛չ մօտէն, ո՛չ ալ հեռու՛ էն, ան նման բարեմասնութիւններով օժտուած է, ընդհակառակը, աւելի քան բարբարոսական վայրենիներու խուժանախումբ մըն է լոկ:



- ԺՈՂՈՎՈՒՐԴ է, դարձեալ ո՛չ, որովհետեւ նման անուանում մը, երբեք չի պատշաճիր այդ պատկանելիութեան, քանի անիկա ոչ միայն համակ սրբապիղծներու վոհմակներէ կազմուած է, այլ՝ զուրկ է սովորական ու քաղաքակիրթ երկիրներու վարմունքներէն ու վերաբերմունքներէն, առաւել՝ անոր իւրաքանչիւր քայլն ու վարկը միայն արիւնարբութեան աղբիւր է, մարդկութիւն

լլկելու եւ յօշոտելու անասնութեամբ:

- ԱԶԳՈՒԹԻՒՆ է, դարձեալ ու դարձեալ ո՛չ, չէ՞ որ հասնելու կամ ճանչցուելու այդ մակարդակով ու բովանդակութեամբ, անհրաժեշտ է որ ան ունենայ ազգային գիտակցութիւն եւ ազգակերտ սկզբունքներ, մինչդէռ ատոնց հետքն իսկ չկայ, չերեւիր ու չզգացուիր, որեւէ պարագաներու, համակարգներու ու գործընթացներու մէջ, մինչ հոն տիրողն ու գերիշխողը միայն ու միայն զաւթումն ու ոչնչացումն են:

- ՀԱՐԵՒԱՆՈՒԹԻՒՆ է, ո՛չ մէկ պարագայի, որովհետեւ այն օրէն սկսեալ, երբ Իսրայէլը մխրճուեցաւ (աւելի ճիշդ՝ զինք մխրճեցին), իր այժմու սահմաններուն մէջ, պարզ դարձաւ, որ անիկա ոչ միայն չէր կրնար դառնալ բարի (°) հարեւան, այլ պիտի դառնար բազմազլխանի ու բազմատանի հրէշ մը, նշանաւորուելով իր ճամարտակութիւններով, ճոռոմաբանութիւններով, բայց, ամենէն աւելի, իր հակամարդկայնութեամբ:

- ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ է, ատիկա միայն առասպել է, յերիւրանք ու ցնորք, անոր ետին թաքնուած ըլլալով ամէն տեսակի վատաբանութիւն, դիակալութիւն, մեծամտութիւն ու ցեղասպանութիւն, իսկ ո՞վ չի տեսներ (կամ չէ տեսած), որ Իսրայէլը ոչ թէ ժողովրդավար է (անոր քովէն իսկ չանցնիր), այնքան ատեն որ՝ ան վարակուած է ժողովրդավաճԱՌութեամբ, ստորաՔԱՐՇութեամբ ու մարդԱՏԵԱՅութեամբ:

Այս բոլորի լոյսին տակ, երբ բազմատասնեակ տարիներ, ան ասպատակեց ու կ'ասպատակէ, հրոսակեց ու կը հրոսակէ, սպաննեց ու կը սպաննէ, քանդեց ու կը քանդէ, անճիտեց ու կ'անճիտէ, ո՞ր մէկը ըսենք եւ յիշենք, զի անոնք շա՛տ են, խայտաբղէտ ու փշաքաղիչ, ուստի, մարդ չի կրնար դիմանալ անոնց ահաւորութեանց ու մարդապղծութեանց:

Այսպէս՝ «փերեզակութեամբ տոգորուած» հոգեբանական հիւանդներ եւ այլամերժներ, ինչպէ՞ս կրնան բնորոշուիլ որեւէ տրամաբանական, դրական, քաղաքական բարեկամական ու քաղաքակրթական կոչումներով:

Անբարեխիղճ, անբարոյ, անպարկեշտ եւ անուղղայ աշխարհը, յատկապէս իր կարգ մը յաւակնոտ «փաշա»ներով, ինչպէ՞ս կրնայ զօրավիզ կանգնիլ Իսրայէլի մը, որ միայն կը յուշէ այլանդակային գործարքներ, մարդկային սպանդներ, քաղաքային վայնասուններ, ամբոխային դերասանութիւններ, անպատկառային զառանցաքներ, իսկ ատոնք ի՞նչ կը նշանակեն, ի՞նչ կը յիշեցնեն եւ ի՞նչ կ'ապացուցանեն:



Դո՛ւք, տեսանելի կամ անտեսանելի միջազգային դէտեր եւ, այո՛, նաեւ արաբական որոշ ուժեր, չէ՞ք տեսներ, որ ձեր դիմաց ո՞վ կանգնած է ու կը փետտէ թէ՛ մարդկութիւն, թէ՛ ժողովրդավարութիւն, թէ՛ քաղաքականութիւն, թէ՛ երեխասպանութիւն եւ չէք համարձակիր փոխանցել ձեր պինդ եւ արդար խօսքը՝ առ որ անկ է, անշուշտ, եթէ ունիք արժանապատուութիւն:

Իսրայէլը, անկասկած, չարիք մըն է աշխարհին, որ ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ստեղծուեցաւ, մեծապետական կարգ մը երկիրներու կողմէ, ընդ հովանեաւ՝ Մեծն Բրիտանիոյ, ոչ թէ Իսրայէլի «սեւ աչքերուն» սիրոյն, այլ՝ շահագործելով անոր նկարագրային յոռի կողմերը - չարագործութիւն թէ սպանդագործութիւն, չարամտութիւն թէ սպանդամտութիւն:

Սակայն, այդ բոլոր անիրաւութիւնները ճակատագրուեցան ընդդէմ Արաբական աշխարհը եւ մասնաւորաբար անօրինաբար եւ արուեստականօրէն Իսրայէլի աշխարհագրական տարածքին շուրջ գտնուող երկիրներուն (Սուրիա, Լիբանան, Եգիպտոս, Պաղեստին, Յորդանան) դէմ, մնայուն եւ յարատեւ օղակներ պահելով ու զանոնք գործածելով, ըստ պէտք:

Ամենէն ահաւոր կացութեաները վիճակուեցան, իրենց լայնածաւալութեամբ, աւերուածութեամբ ու բռնատիրութեամբ, 1967ի եւ 1973ի արաբական-իսրայէլեան պատերազմներուն, նոյն սատանայածնունդ օտար պետութիւններու (Ամերիկա-Եւրոպա) լուռ ու գոհունակ հայեացքներուն տակ, զարթելու համար արաբական կարգ մը հողամասեր:

Միջազգային գերագոյն կազմակերպութիւնը՝ ՄԱԿը (Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն), որ կոչուած է նման յարձակողական եւ անիրաւական հարցեր հանգուցալուծելու, ինչպէս միշտ, մնաց դիտող-խամաճիկի դերին մէջ, ճիշդ նոյն հունաւորումով, կողմնակալութեամբ, ինչ որ ներկայիս կը պատահի, անգամ մը եւս ապացուցելով, որ ինք պարզապէս անպետք եւ անիմաստ գործիք մըն է, հլու-հնազանդ ստրուկը դառնալով իր տերերուն:

Թիւ 425 յօդուածը, որ կը վերաբերէր Լիբանանի Հարաւէն իսրայէլեան ահաբեկիչներու հեռացման, ոչ միայն չիրագործուեցաւ, այլ շարունակուեցան թիրախաւորումները անոր ուղղութեամբ, մինչեւ որ՝ 2000ին, ան ստիպուեցաւ նահանջել հոնկէ, ի դէմս լիբանանեան դիմադրական շարժումներու հակադարձող գործողութեանց:

Սակայն, վերջին շուրջ երկու տարիներու դաւադրական միջամտութիւնները, մերթ արտաքին կողմերէ, մերթ ներքին ազդակներէ, մերթ շրջանը փոթորկող ալիքներէ եւ իսրայէլեան վարձկաններէ, բոլորովին նոր ու վտանգաւոր կարգավիճակներ ստեղծեցին ամենուր, մանաւանդ որ՝ Իրանն ալ ինդրոյ առարկայ դարձաւ, որովհետեւ Ամերիկայի նախագահը, որ ինքզինք «Նոպելեան ու դրախտային» թեկնածու կը նկատէ, կարծեց ու հաւատաց որ ատիկա է ճշմարտութիւնը, հետեւաբար, իր իրաւունքը, աշխարհը գրպանելու, չանդրադառնալով որ ատիկա... «պիտի թրջէ» զինքն ալ, իր վարած ու ՎԱՌԵԼԻՔ քաղաքականութիւնն ալ:



Մեզ հետաքրքրողը, այս հանգրուանին այն է, որ Իսրայելը պատեհ առիթը գտած է, ոչ միայն հաշուեյարդար տեսնելու դիմադրական շարժումին դէմ (իմա՝ Հրգպալա), այլ՝ Լիբանանը մասնատելու, իր ուզած ձեւով եւ ոճով, իր սահմանային ընդարձակումներով ու մերձեցումներով, հարաւր մարդաթափելէ ու հիմնապէս կործանելէ ետք, չվարանելով, մայրաքաղաքն ու այլ կարգ մը շրջաններ ալ գրաւելով:

Կարիք կա՞յ յիշելու կամ շեշտելու, թէ այս դաւադրական համապատկերներու ետին կան արտաքին ուժեր (ոչ-թաքնուած, այլ՝ տեսանելի), արաբական թուլակազմեր եւ, ամենէն ողբերգականը, ներքին դիտորդներ կամ արձանիկներ, որոնք միաձոյլ ամբողջութեամբ մը, ուղղակի թէ անուղղակի ցուցադրականութեամբ կ'ապրին թունաւոր մթնոլորտը զայն ծառայեցնելով ապականութեան ու փորձութեանց անձնակերպոն ծրագիրներուն:

Լիբանանցիք, որոնք իսրայելեան ոսնձգութիւններուն, միջամտութեանց ու խառնակչութեանց բոլոր ձեւերու անկայունութիւնները ապրեցան, իրենց դառն ու անձուկ տարափներուն տակ, բայց, դիմացան ու հակազդեցին, հոգ չէ թէ բազում զոհողութիւններու գնով ու վնասներով, այսօրուան իսրայելեան յարձակումներուն նմանը չտեսան, զայն նմանցնելով երրորդ համաշխարհային պատերազմի մը հաւանականութեան:

Ամենէն վտանգաւորն ու մտահոգիչը այն է, երբ «աղտոտ ջուրի մէջ ձուկ որսացող» սոգրուկներ, կը փորձեն «մէխ խրել» այս կամ այն բեւեռին մէջ, կամ ծառայելու համար օտարին կամ ալ աժան շահոյթներ ապահովելու, վերջին հաշուով տուժողը ըլլալով Լիբանանը եւ ժողովուրդը անոր:

Այս ընդարձակ ու փշոտ թղթածրարը, երբ աչքի առաջ կ'ունենանք, իր զանազան գունաւորումներով եւ երանգներով, պահ մը պէտք է սթափիլ ու խոկալ, թէ այս սահանքներն ու ոլորապտոյտները, ո՞ր կրնան առաջնորդել Լիբանանը եւ ինչի՞ կը մղեն լիբանանցիները:

Դժուար է պատասխանել, որովհետեւ, իրօք, խրթին է անիկա, իր բովանդակ տարողութեամբ:

Դիրին է, որովհետեւ, համարեա տեսանելի ու թափանցիկ է անիկա, սակայն, միշտ շփոթեցնող ծալքերով:

Ի հեճուկս գոյութիւն ունեցող տուեալներուն կամ զարգացումներուն, ինքնին, խօսուն իրականութիւն մը կայ այս փաթեթին մէջ, երբ Իսրայել կը յամառի, որ Լիբանան իր հետ խաղաղութեան դաշինք պէտք է կնքէ, որպէսզի ամէն ինչ վերջանայ (արդեօ՞ք):

Կ'երեւի թէ ականջամեծ Բենիամինը չի ճանչնար լիբանանցիները եւ անոնց մեծ մասին կառչածութիւնը իր հայրենիքին, իր անկախութեամբ ու գերիշխանութեամբ:

Այդ ականջներով (խուլ թէ փակ), անգամի մը համար, թող լսէ (կամ լսցնեն իրեն), որ լիբանանցիք երբ կը խօսին Իսրայէլի մասին. գայն կը նկատեն ԹՇՆԱՄԻ, ՀԱԿԱՌԱԿՈՐԴ, մինչեւ որ ստանան իրենց արդար իրաւունքները:

Ահաւասիկ, չոր ու տաք իրականութիւն մը, Պրն. Բենիամին, որմէ չեն հրաժարիր լիբանանցիք եւ չեն ուրանար իրենց ինքնութիւնը, աչք ծակող փաստերէն մէկն ալ այն է, որ չեն հրաժարիր իրենց հողերէն ու տարածքներէն, վերադառնալու իրենց օճախները ու փլատակներուն վրայ ալ ապրելով, մինչեւ վերադարձ սեփական իրենց տունն ու հողը:

Եթէ այս ճշմարտութեան հաղորդ չեն Բենիամինն ու Տոնալտը (մի գուցէ որոշ հազուագիւտներ), իրենց գիտնալիքն է, կ'ըսեն շատեր:

Այդուհանդերձ, ի պատիւ այն լիբանանցիներուն (նաեւ լիբանանահայերուն), որոնք քաղաքացիական գիտակցութեամբ, ողջմտութեամբ ու խոհեմութեամբ կը մօտենան այս զգայուն, այլապէս էական հարցախնդրին, կը մնայ միայն ողջունել, իսկ անոնք, որոնք հայելիին ետեւէն կը խորաչափեն երեւոյթները, ատիկա ցաւալիութիւն մը կրնայ նկատուիլ... ցնոր տնօրինում:

Յամենայն դէպս, ինչ ալ ըլլան պայմանները, երեւոյթները կամ զարգացումները, իսրայէլեան ընչաքաղցութիւնը եւ ծակաչքութիւնը չեն կրնար Լիբանանը մեկուսացնել ու լիբանանցիները կաթուածահարել, որքան ալ դուրսի հողմերը ու ներսի հովերը փչեն, մինչեւ հնչեն... արդարութեան զանգերը:

Ինչպէս կ'ըսուի. եղա՞ւ, ուրեմն, եղա՛ւ, չեղա՞ւ, ուրեմն, պիտի ըլլայ...:

(Պէլրութ)

23/4/2026

ՀԱՅԱՍՏԱՆ ԴԷՊԻ ՈՒՐ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏՏՄԵԱՆ



Պետութիւն մը անխուսափելիօրէն խաղաթուղթի կը վերածուի այլոց ձեռքին, երբ կը կորսնցնէ իր ռազմավարական կողմնորոշման յստակութիւնը:

Այսօրուան Հայաստանը, աւելի քան երբեք, կը գտնուի այս վտանգաւոր սահմանագծին վրայ՝ Եւրոպա–Արեւմուտք–Ռուսաստան հակադրութեան խաչմերուկին մէջ: Անոր դերակատարութիւնը շատ յաճախ կ'որոշուի ոչ

թէ Երեւանի մէջ, այլ՝ արտաքին ուժերու հաշիւներով:



Երեւանի մէջ կայացող Եւրոպական Քաղաքական Համայնքի վեհաժողովը, իր արտաքին փայլով հանդերձ, խորքով բացայայտեց այս իրողութիւնը: Վեհաժողովը ոչ այնքան Հայաստանի մասին էր, որքան՝ մեծ ուժերու փոխադարձ մրցակցութեան բեմ մը, ուր Հայաստանը ներկայ էր իբրեւ տարածք, ոչ՝ ինքնուրոյն դերակատար:

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի յայտարարութիւնները՝ թէ Հայաստանը ութ տարի առաջ կը դիտուէր Ռուսաստանի «Տէ ֆաքթօ արբանեակ»ը, իսկ այսօր կը բացուէր Եւրոպայի առջեւ, քաջալերանք կրնար նկատուիլ առաջին հայեացքով: Սակայն այսօրինակ ձեւակերպումները նաեւ կը մատնանշեն աւելի խոր իրողութիւն մը. Հայաստան կը ստեղծուի մէկ ազդեցութեան գօտիէն միւսը, առանց որ այդ անցումը ամբողջապէս ձեւաւորուած ըլլայ ազգային ռազմավարութեան հիման վրայ:

Աւելի մտահոգիչ է այն երեւոյթը, որ երկիրը կը յայտնուի հակադրութիւններու ճեղքուածքներուն վրայ: Ուրբանիոյ նախագահ Վլաստիմիր Զելենսկիի հրաւերը եւ անոր նախորդած քայլերը՝ մանաւանդ Ազրպէյճանի հետ ռազմական գործակցութիւնը, կը յառաջացնեն լուրջ բարոյական եւ քաղաքական հարցադրումներ: Հայաստանը, որ կը դիմագրաւէ գոյութենական սպառնալիքներ, չի կրնար անտեսել այն փաստը, որ իր հրաւիրած կամ ընդունած ղեկավարներէն ոմանք սերտ յարաբերութիւններ կը պահպանեն իր թշնամիներուն հետ:

Այս մէկը արդէն դուրս կու գայ դիւանագիտական նրբութիւններէն եւ կը մտնէ ազգային արժանապատուութեան եւ քաղաքական հետեւողականութեան դաշտ: Երբ պետութիւնը կը կորսնցնէ իր կարմիր գիծերը, ան կը դառնայ բաց դաշտ՝ արտաքին շահերու համար:

Միւս կողմէ, Եւրոպական Միութեան՝ մասնաւորաբար Ֆրանսայի ցուցաբերած «հովանաւորութեան» պատրաստակամութիւնը պէտք է դիտուի ոչ իբրեւ զուտ բարեկամական քայլ, այլ՝ աշխարհաքաղաքական հաշուարկներու լոյսին տակ: Եւրոպա կը փնտռէ նոր յենարաններ, նոր ազդեցութեան գօտիներ: Հայաստան կրնայ այդ ծրագիրին մէկ օղակը դառնալ: Սակայն հարցը կը մնայ բաց. արդե՞՞ք այս «հովանաւորութիւնը» կը ծառայէ Հայաստանի պետական շահերուն, թէ՞ Եւրոպայի աշխարհակարգային նպատակներուն:

Պատմութիւնը կը յուշէ, որ մեծ ուժերու «պաշտպանութիւնը» յաճախ ունեցած է իր գինը: Արցախը արդէն եղած է նման գին մը: Այսօր կը հնչէ աւելի ծանր հարցում մը՝ արդե՞՞ք ամբողջ Հայաստանը կեցած է նոյն վտանգին առջեւ:

Պիտի չանդրադառնամ Արցախի ճակատագրին եւ հայ գերիներու հասցէին Ազրպէյճանի նախագահին հռետորաբանութեան: Դժբախտաբար, Ալիեւի խօսքը ծափահարութեամբ դիմաւորուեցաւ, որոնց մէջ՝ մեր վարչապետն ու Հայաստանին նոր «հովանաւորութիւն» առաջակող Մաքրոնը...

Հայաստանի ներքին քաղաքական կեանքը ամբողջովին զերծ չէ վերոյիշեալ զարգացումներէն: Վեհաժողովի օրակարգին վրայ վերահսկողութեան պակասը, հիւր ղեկավարներու ազատ գործողութիւնները Երեւանի մէջ, կը ստեղծեն տպաւորութիւն մը, թէ



ինքնիշխանութիւնը յաճախ կը սահմանափակուի հոշակագրերով, բայց ոչ՝ գործնական իրականութեամբ:

Երբ պետութիւնը չի կրնար ձեւաւորել իր իսկ հարթակին օրակարգը, ան դժուար թէ կարենայ ձեւաւորել իր ապագան:

Այս բոլորին մէջ կը ձեւաւորուի հիմնական վտանգը. Հայաստանը կը դառնայ ոչ թէ կամուրջ, այլ՝ ճեղքուածք: Իսկ ճեղքուածքներու վրայ կանգնած պետութիւնները հազուադէպ կը դիմանան երկար ժամանակ:

Հայաստանի համար հրամայական է վերադառնալ քաղաքական իրապաշտութեան: Ո՛չ Արեւմուտքի ամբողջական վստահութիւն, ո՛չ ալ Ռուսիոյ լիակատար մերժում: Այլ՝ հաւասարակշռուած, ինքնուրոյն, ազգային շահերէն բխող քաղաքականութիւն:

Պետութիւնները չեն գոյատեւեր զգացական ընտրութիւններով: Անոնք կը գոյատեւեն լուրջ հաշուարկներով, յստակ առաջնահերթութիւններով եւ անզիջում պաշտպանութեամբ իրենց շահերուն:

Հարցումը պարզ է, բայց վճռորոշ.

Հայաստանը կը շարժի դէպի ինքնուրոյն պետականութիւն, թէ՞ դէպի նոր կախուածութիւն:

Պատասխանը կախեալ է ոչ այնքան արտաքին աշխարհէն, այլ՝ Երեւանի քաղաքական կամքէն:

5/5/2026

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔԻ ՊԷՍ

Արեւալո՛յս արդար ու հեզ,
Հե՛ւք մը տուր ինձ քու կրակէդ,
Նշո՛յլ մը կայծ ճենճերումէդ,
Բո՛ց սիրակէզ հեղեղումէդ,
Լուսավարար քու բաշխումէդ,
Ինքնանուէր մատուցումէդ,
Միրոյ անափ հրկիզումէդ...

Լոյսդ սե՛ր է որ կը վառի
Դար ու դարեր ու չի հատնիր,
Լոյսդ՝ բարի՛ք ամէնեցուն,
Որ կը տրուի մշտացնծուն,
Լոյսդ կեանք է ինքնապարզէ
Որ կը ստեղծէ ու կ'արարէ
Տիեզերքն համակ ու աշխարհներ...

Ո՛չ վարձք կ'ուզես, ո՛չ երախտիք
Լուսացնցող վարարումիդ,
Ո՛չ աղերսանք, ո՛չ աղաչանք
Լուսաբերկրուն ինքնընծայմանդ...

Բարեաց աղբիւր հրալոյսէդ



Թող տոչորի՛մ լուսածարաւ,
Ըմպե՛մ անյագ ճաճանչներէդ
Եւ մնա՛մ միշտ ես անսուադ:
6/4/2025

.....

ԵՐԳԵՐՈՒՄ ՄԷՋ

Երգերուս մէջ սիրոյ թրթի՛նն էր մեղեղի,
Անբառ, անխօս ու անաղմուկ երգ մը վճիտ,
Ձոր միշտ ցանկաց իր էութեամբ երագ հոգիս,
Բայց շատ անգամ դպաւ քարէ կարծր պատին...

Երգերուս մէջ բարութեան ցո՛ւքն էր հայելիս,
Վճիտ, մաքուր ինչպէս վարար աղբիւր սարի,
Որուն նետուած քարը անգամ մաղձով դեղին՝
Մընաց անուժ, պղտորելու հոսանքը ջինջ...

Երգերուս մէջ գո՛ւթն էր անծիր մարդ էակին,
Յաւին անոր, տառապանքին ու մորմոքին,
Ու որքան ալ տքնեցաւ ան սփոփել զանի,
Մընաց անկար, եղաւ անոնց լոկ բաժնեկից...

Ի՛նչ ալ ըլլայ ցնծերգութի՛ւն մ'եր երգս լոյս,
Բիւր օրհնութի՛ւն Արարիչին որ կա՛մ, կ'ապրի՛մ
Եւ հաղո՞րդ եմ տիեզերքին՝ խորին խորիո՞ւրդ,
Խոկումներով, երազներով լուսատեսիլ...
13/1/2022

.....

ՄԷՆ ՄԻ ՏԱՌԸ

Մէն մի տառը այբուբենիդ
Հայ հոգիին կանչն ու ձայնն է,
Մէն մի տառը այբուբենիդ
Արարչական լոյսի կայծ է...

Ու քովէ քով երբ կը շարուին
Հայաստանն է որ կեանք կ'առնէ,
Հայոց հողը, անոր ոգին
Կը թելածեն բառերուն հետ...

Ու դարերը կը թանձրանան,
Կը ծիածանուին միջոցին մէջ,
Ժամանակը կը չքանայ,
Յաւերժութիւնն է որ շնչէ...

Մէն մի տառդ կեռոն մըն է,



Մթութեան մէջ վառ փարոս է,
Մէն մի տառդ ճառագայթ է,
Արեգակներ ունի իր մէջ:

Եւ տառ առ տառ, տիեզերքն անբաւ,
Անպարագիծ ու անսահման
Կը պարփակուի ու կը ցոլայ
Տառերուդ մէջ լուսահոսան:
24/2/2021

.....

ՏԱՐԻՆԵՐՈՒՄ ՄԷԳԷՆ

Երբ մենակ եմ ու տխուր, խաբուած կեանքի խաղերէն,
Թերթի՛ կ-թերթի՛ կ կը թերթեմ կեանքիս էջերը հինգած,
Ու կը փնտռեմ անոնց մէջ պայծառ շողեր լուսեղէն,
Որոնք հեռուէն դեռ սփռեն ճաճա՛նչ մը լոյս դալկահար...

Տարիներու հաստ մեզէն կը յայտնուին գերթ երազ
Դէմքերն անոնց որ սիրոյ ու կարօտի շունչով տաք
Թրթի՛ ո մը լոյս ցողեցին լուսածարաւ հոգիիս,
Որ զայն ըմպեց ու մնաց սիրալոյսի ծարաւի...

Թերթիկներուն մէջ հիմա բոյր ու թոյրեր կան ծաղկի,
Որ թառամած ու թօշնած դեռ կը սպասէ տենդագին
Շոյանքը մեղմ ձեռքերուն որոնք օր մը գգուեցին
Ձայն քնքշօրէ՛ն, նրբօրէ՛ն որ ան մնար կենսալից...

Ժամանակը սակայն բիրտ չխնայեց ծաղիկիին,
Ու տերեւին պէս աշնան ան դալկացաւ տրտմագին,
Բայց սրտին մէջ ան պահեց յուշն օրերուն անցեալի,
Որ կ'առկայծի մերթ ընդ մերթ գերթ անթեղը կրակի:
9/1/2026

.....

ՀՈԳԻՍ

Հոգիս շող էր արեւալոյս,
Երբ կը խայտար ան զուարթուն,
Արեւն անոր մնաց անտես
Բութ սիրտերուն արեւամերժ...

Հոգիս ծուխ էր կրակածին,
Հրաբորբոք բոցավառէր,
Կրակն անոր ինչպէ՞ս հասնէր



Հոգիներուն անկրակ, անսեր...

Հոգիս՝ խորհուրդ անքննելի,
Լոկ ինձ համար խորզգալի,
Առեղծուած մը յար մնաց
Ծանծաղամիտ մարդոց համար...

6/5/2021

.....

ՄՕՐՄ ՊԱՏԿԵՐԻՆ ԱՌՋԵՒ

Յոգնած դեմքիդ լոյսի ցոլքն է,
Որ առկայծեց տի՛ւ ու գիշե՛ր,
Ամպի ծուէնն չգտաւ տեղ,
Յոյսի լոյսը զայն միշտ վանեց...

Խորշումներուդ մէջ լուսեղէ՛ն
Տարիներու վաստա՛կըդ է,
Ակօ՛ւ-ակօ՛ւ հուն է բացեր
Բարի հունտով զայն լեցուցեր...

Աչքերուդ մէջ ժպիտդ է,
Որ միշտ մարմանդ յուսավառեց,
Դժուար ճամբուդ՝ վառ աստղալոյս,
Ոգի պայծառ՝ տքնանքիդ լուռ...

Սրբապատկե՛ր դարձած իմ մայր,
Ամէն գիշեր չքնացած
Քու լուսեղէն կերպա՛րդ է,
Որ կ'այցելէ ինձ լուսերե՛ս,

Ոգեշնչման աղբիւր վարար,
Լուսոյ խորան ուր մշտարձարծ
Դեռ կը վառի կանթե՛ն զն անմար
Ազնուութեա՛ն ու բարութեա՛ն...

Դեռ յորդորէ անխօս, անբառ
Մնալ վեհսիրտ ու վեհ հոգի,
Ո՛ւր ալ փչէ կեանքի քամին,
Մնալ հաստա՛տ ու մնալ մա՛րդ:

3/5/2022

ՏՈՒՆ՝ ՔԱՂՑՐԻԿ ՏՈՒՆ

ՄԻԼՎԱ ԻՍԿԻԿԵԱՆ ՄԱՀՐԵՃԵԱՆ



-Տիկի՛ն, սիրեցի՞ք տան առաստաղը, գեղեցիկ եղաւ չէ՞ :

-Ներողամիտ կը գտնուիք, կարծեմ թէ զիս ուրիշ մէկու մը հետ կը շփոթէք. ես տանս առաստաղը փոխել չտուի:

-Չէ՛, չեմ շփոթեր. ես լաւ գիտեմ ձեզի, դուք ամէն օր այստեղէն քալելով կ'անցնիք: Ձեր տան մասին չեմ խօսիր, տեսէ՞ք, իմ տանս առաստաղին կ'ակնարկեմ:

Անկեղծ ըլլամ ըսելու, որ ես ոչ առաստաղին նորոգութիւնը նկատած էի, ոչ ալ ընդհանուր տան՝ մաս- մաքուր ու նոր ներկուած տեսքը: Ես միշտ հիացմունքով դիտած եմ այս տան երկայնքին ցանուած վարդերը, որոնց գոյներն ու թուփին փարթամութիւնը ամէնօրեայ ուշադրութիւնս գրաւած են: Անձանօթին

խանդավառութիւնը եւ լայն ժպիտը տեսնելով կ'անդրադառնամ, որ պէտք է հետաքրքրութիւն ցոյց տամ եւ քանի մը քաղցր խօսք արտասանեմ. « Օ՛հ, շատ գեղեցիկ եղեր է, ամէն բան նոր, մաքուր ու ճաշակով: Բարի երդիք ըլլայ, առողջ եւ երջանիկ օրեր դիմաւորեցէք»:

Կը շարունակեմ ճամբաս եւ շարան մը խոհեր կը խճողեն միտքս: Ահա այս մարդը, տիպար հայու օրինակ մըն է, բարի նկարագիրով քաղաքացի մը: Հայը ուր որ երթայ տուն կը շինէ, զայն յարակից պարտէզներով կը գունագարդէ, ընդհանուր շրջանը կը շէնցնէ եւ իր կենցաղով ու բնակարանով կը զանազանուի տեղույն բնակիչներէն ու տուներէն: Լաւագոյն օրինակն է գեղեցիկ եւ հայահոծ Թահանկան, ուր մօտաւորապէս հինգ տարիէ կ'ապրիմ:

Ցանկութիւնս է, որ հայերը այլեւս ունենան կայուն ու խաղաղ կեցութիւն եւ յանկարծ օր մը ակամայ «փոխադրուելու» պատճառ մը չունենան: Դժբախտաբար երկար տարիներ, Հայը ուր որ ապրեցաւ, ժամանակ մը ետք, կա՛մ բռնի տեղահանուեցաւ, կա՛մ անապահով ու անբարենպաստ պայմաններու բերումով հեռացաւ: Հայը միշտ նուիրաբար գրկած է իր հողը, արիւն ու քրտինք հոսեցուցած է անոր մէջ, բայց նախանձոտ ոտխն ու պատերազմները անողոքաբար խլած են անոր արդար հողն ու կառուցած տունը, ենթարկելով զինք տարագրութեան ու աննկարագրելի թշուառութեան:

Հայը իր ապրած դառն փորձառութիւններէն ետք միշտ կարօտով յիշած է իրմէ խլուած հողն ու տունը: Հետեւաբար, ան ուր որ հաստատուած է, հողին կառչած է ու իր կառուցած տան



մէջ հոգին դրած է: Տան սիւներն ու աղիւսները իր երազներով հիւսած է ու պատերը՝ աղօթքով ծեփած: Քիչ չեն այն բանաստեղծութիւններն ու երգերը, որոնք կ'արձագանգեն Հայուն ողիսականը ու նուիրուած են հայրենի հողին ու տան: Պատանի հոգիս սարսուռներ ապրած է, երբ Սիամանթոյի «Ափ մը մոխիր հայրենի տուն» բանաստեղծութեան ծանօթացած եմ: Բանաստեղծին մօտ, իր ծննդավայրին՝ Ակնի անկումը աղերս ու սուգ պատճառած են, սակայն ան հաւատացած է, որ իր կապը անքակտելի ու յաւերժական է եւ որ նոյնիսկ իր մահէն ետք, տատրակի տեսքով իր հոգին պիտի յայտնուի հայրենի հողին ու տան աւերակներուն վրայ...:

2014- ի ամբան, երբ Կարսի մէջ այցելեցի Եղիշէ Չարենցին տունը, արցունքով վերյիշեցի անոր «Տաղ անձնականը»՝

«Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինուած անտաշ քարով,

Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով...»: Անդարմանելի է պարտադրաբար լքուած տան պատճառած վերքը, հետեւաբար ան անվերջ պիտի արինահոսի ու վիրաւորին սիրտը մղկտացնէ:

Խոհերս պահ մը կ'ընդհատուին, երբ կողքէս սեւ թռչուն մը թռչելը թափահարելով վեր կը բարձրանայ ու ելեկտրական լարերուն վրայ կը տեղաւորուի: Այս թռչունին տեսակն ու անունը չեմ գիտեր, բայց պահ մը ինծի կը յիշեցնէ մեր «Կռունկը», պանդուխտին սիրտին բալասան առթող կռունկը, որուն ոտքերուն ան կապեց կարօտի ու սիրոյ նամակները եւ բուն անձկութեամբ սպասեց խապրիկի մը: Կորսնցուցած հարազատէն գէթ խապրիկ մը իմանար, որպէսզի հովանար իր կարօտակէզ ու մորմոքող սիրտը:

Ես սփիւռքահայու՝ Արեւմտահայաստանի «շապիկը» հագած եմ ծիներով : Շապիկ մը, որ սիրտիս ու մաշկիս ամենէն մօտիկն է, բայց անոր կոճակները խեղդելու չափ սեղմած են կրծքավանդակս ու վիզս: Շապիկ մը, որմէ ժառանգած եմ ինքնութիւն, լեզու, մշակոյթ, պատմութիւն, սովորութիւններ եւ ահռելի մեծ ցաւ մը, որ կը պարփակէ՝ զոհի ջանգող մորմոքը, արդարութեան փնտռտուքը, տունդարձի երազը...:

Լաւանտի (lavender) հոտաւետ փնջիկ մը կը փոխադրէ զիս Լիբանանի կանաչապատ ու հովասուն լեռները: Ծննդավայրս՝ Լիբանանը, իմ երկրորդ «շապիկս» է: Հագած եմ զայն ծնած օրէս, որ նոյնքան սիրելի ու ցաւոտ է ինչպէս առաջինը: Անքակտելի սիրոյ կապ մը կը միացնէ մեզի, ուր հեռաւորութիւնները ոչինչ կը ներկայացնեն, կամ կ'ազդեն: Մեծ հայրս ու մեծ մայրս, նման այլ վերապրողներուն, Տեղասպանութենէն հազիւ ճողոպրած, ապաստան գտան Լիբանանի մէջ: Անոնց սերունդը՝ Հայու չնահանջող ոգիով, անկոտորում կամքով ու անխոնջ աշխատասիրութեամբ շինեց տուներ, նախ թիթեղաշէն, փայտաշէն, ապա քարաշէն գեղեցիկ բնակարաններ: Վերապրողները անձնական տուներ շինելէ անդին իրենց գտնուած միջավայրը շէնցուցին, ծաղկեցուցին եւ հաւատարմօրէն նուիրուեցան անոր: Միաժամանակ չմոռնալով մեծ շէշտը դնելու իրենց ազգային, կրօնական, կրթական ու մշակութային ժառանգութեան պահպանման ու բարգաւաճման վրայ: Լիբանանի պարգեւած բարի պայմաններուն մէջ անոնք տարագիրի ու պանդուխտի «բաճկոնը» իրենց



վրայէն շարտեցին ու հագան հպարտ Հայու «գրահը»: Երախտագիտութեան ոգիով սիրեցին Լիբանանը եւ այդ սէրը կտակեցին յաջորդ սերունդներուն:

Դժբախտաբար 1975 - ին Լիբանանի քաղաքացիական պատերազմը սկսաւ եւ կէս դարեան պանծալի նուաճումներ իրագործած լիբանանահայերը ցիր ու ցրիւ ըրաւ: Ոմանք գաղթեցին անմիջապէս պատերազմին սկիզբը, իսկ յաջորդող կէս դարու ընթացքին, անվերջանալի պատերազմին ու անապահով պայմաններու բերումով շարունակուեցաւ արտագաղթը: Չմոռնամ շէշտելու, որ այսօր Լիբանանի մէջ կայ շատ տոկուն ու աշխոյժ համայնք մը, որ թէեւ տարուէ տարի կը ստուարանայ իր թիւով, բայց կը պահպանէ իր ազգային, հոգեմտաւոր, մշակութային ասանդը եւ գոյատեւման ներուժը: Ան կը մնայ, որպէս սփիւռքեան հպարտալի համայնք: Սակայն կարելի չէ հարեւանցի անցնիլ ու չկեղորոնանալ դատարկուած, որբացած, իրենց պարունակէն պարպուած տուններուն իրականութեան: Մեծաթիւ են նման տուները, որոնք վերապրող սերունդին զաւակները կառուցեցին որպէս իրենց հաստատուն ու մնայուն կանգառը, բայց աննախատեսելի պատերազմը եկաւ յիշեցնելու սփիւռքահայուն, որ օտար հողին վրայ կարելի չէ ամրանալ...:

Դատարկուած տուներէն մէկն ալ իմս է, որուն զաւակները «խաղաղ երկիր» եւ ապրուստ ապահովելու համար լքեցին զայն: Տո՛ւն, քաղցրիկ տուն, Կարօտով կը յիշեմ քու կենսախինդ մթնոլորտդ, եռուզեռդ , սիրով խայտացող օրերդ , նոյնպէս խոր կակիծով կանդրադառնամ այսօրուան անշունչ, անբնակ ու անտէր իրավիճակիդ:

-Տիկի՛ն, սիրեցիք տանս առաստաղը, գեղեցիկ է չէ՞:

ՆԿԱՐԷՆ ԿԱԽՈՒԱԾ ՊԱՏԳԱՄԸ

Գէորգ Պետիկեան

28/4/2026



Ճիշդ շաբաթ մը առաջ էր, երբ երկրորդ մանչ զակիս՝ Արամին հետ, երկար եւ յոգնատանջ աշխատանքէ մը ետք, վերջապէս, միասին կարողացանք տեղաւորել-կախել, ճիշդ գրասեղանիս դիմաց, սենեակիս պատերէն մէկը լման ծածկող, ինծի, իր նուիրած Արարատի հսկայ գծանակարը (4 x 8՝):

Իսկ հիմա, դարձեալ առանձնացած, նստած եմ համակարգիչիս դիմաց ու չեմ գիտեր որքան ժամանակէ ի վեր կը դիտեմ,

ինքնաճանաչմանս դռները բացող այդ մեծ ու ծանր նուէրը:

-Սքանչելի գծանկար,-կը կրկնեմ անզգալաբար,-հիանալի աշխատանք, եւ յիշատակելի նուէր: Ու կը փորձեմ յամառօրէն վերադառնալ հին երազներուս: Նաեւ կը փորձեմ հոգիս գրելով քակել: Կը վախնամ բառերէս, բայց կը շարունակեմ զինք դիտել:



Հիմա որ ինք իմ աչքերուս մէջն է, արդէն յափշտակուած եմ: Հիացած: Դիմացս է ան, պատէն կախուած սպիտակած իր գագաթով այդ «հսկան», որ կարծես կ'ուզէ ինքն ալ մասնակից դառնալ, եւ այս ձեւով իր արդար բաժինն ունենալ սենեակէս ներս տիրող մթնոլորտին: Ու իր տեղէն, իր ձիւնապատ մատը երկարելով ժամերուս բազկերակին, անշարժ կը շարունակէ զիս դիտել: Ան է որ զիս կ'հիմա առաջնորդէ: Մտածումներս կ'ուղղէ: Կ'երեւի ըսելիքներ ալ ունի...:Ձիս կը լսէ: Կը տեսնէ:

-Հարկաւ կը տեսնէ հոգեվիճակս,- կը համոզեմ ինքզինքս ու կը փորձեմ հսկել գաղափարներս, միեւնոյն ատեն յուսալով որ մտածումներս չյոգնին, եւ զինք դիտելու ախորժակս ալ մէջս չմարի: Ու մտածածիս բեռնան տակ, սահմոկած ու անխօս, կը մնամ դարձեալ երկար ու անշարժ: Հաւատացէ՛ք...նման «բաներու» դիմաց, յաճախ սիրտդ կը մաշի, բայց միւս կողմէ ալ նոր մտածումներ, իբրեւ անփոշի խոհեր, այդ լեռնէն վար իջնելով, արդէն հասած են սեղանիս վրայ տեղ գտած սեւագրատետրիս էջերուն:

Գիտեմ, որ բոլորին նման, օրերս ալ կապուած են առօրեայ մտահոգութիւններուն: Ու թէեւ կը զգամ որ օրերուս նման անտող են նաեւ ժամերս ու տրամադրութիւններս, բայց մեծ ցանկութիւն ունիմ յիշելու հինը, անուշը, սէրն ու թախիծը, որոնց պատերուն տակ պատանեկութիւնս ու վաղ երիտասարդութիւնս մեծցած էին:

Ու կը շարունակեմ զինք դիտել ազահօրէն՝ չտեսի մը նման հիացած: Բայց, հակառակ յառաջացած տարիքիս, հիմա յստակօրէն կը յիշեմ: Թէեւ ներկայիս անցեալը փնտռելը այնքան ալ դիւրին չէ, բայց կը զգամ որ տակաւին մանուկի մը յափշտակութիւնը կայ աչքերուս մէջ: Թերեւս այս ձեւով յիշողութիւններուս մէջէն սփոփանքս ալ պիտի կարենամ գտնել,-ինքզինքս կը համոզեմ միամտօրէն:

Ու բոլոր տարեկիցներուս նման, ես ալ ընտանիքէս ետք, հայրենիքովս, ծննդավայրովս եւ սրբազան այս լեռով կը խանդավառուիմ: Արդէն իսկ խանդավառուած ալ եմ:

Գիտեմ, որ ինք մինչեւ հիմա տեսած է եւ տակաւին կը տեսնէ, թէ ինչպէ՞ս մեզմէ շատ-շատեր, ունայնութիւններով արբեցած են: Ուրիշներ՝ յոգնած են սուտերէն: Իսկ ոմանք ալ յուսահատ եւ այլափոխուած: Մէկ խօսքով...հայ մարդիկ երջանիկ չեն:

Արդ, ո՞ր կ'աճի այս երջանկութիւն ըսուածը...ո՞ր ծառին վրայ...ո՞ր երկինքէն կրնայ վար իյնալ...ո՞ր խանութը կը ծախուի...ո՞ր ցամաքամասին վրայ...:

Ճիշդ անոր համար բոլորս ալ եւ ամէն օր, խաղաղութիւն կը տենչանք: Բայց խաղաղութիւն ըսուածը նուէր մը չէ որ դիւրին ստանանք: Որովհետեւ լաւապէս գիտենք որ խաղաղութիւնը, մեր հայրենիքի ճակատագիրն է:

Արդեօք իրապէ՞ս խաղաղութիւն է մեր ուզածը...կամ պարզապէ՞ս կը ցանկանք...կամ կ'երագե՞նք... չեմ գիտեր: Միայն այն գիտեմ որ իւրաքանչիւր հայու զխաւոր նպատակը մեր երկրի խաղաղութեան ապահովումն է: Բայց այսքանը բաւարար չէ...



Բոլորս ալ ա՛յս հոգեվիճակը ունինք: Որովհետեւ, մեր գլխաւոր թերութիւնը, մեր հանրային մտածելակերպն ալ է: Նաեւ տեսանելի է թէ՛ ինչպէ՛ս կորսնցուցած ենք մեր մտքի բանալին եւ այս իսկ պատճառով կորսնցուցած՝ անոր շրջագիծը:

Յանկարծ կ'անդրադառնամ: Իրականութիւնը չես գիտեր քեզ ուրտեղերը կը տանի:

Կը զգամ որ դարձեալ ինքզինքս անզգալաբար հարցազրոյցով մը կը զբաղեցնեմ:

Կ'անդրադառնամ: Ու այսպէս նստած, մեղք մը գործողի նման, եւ նոյնքան ալ ինքզինքս յանցաւոր զգալով, ինքնագրոյցիս ուրախ-տխուր հետեւանքները կը չափեմ:

Արդէն սկսած եմ դեգերիլ ժամանակին մէջ, լեցուիլ ու նոյն հաւատքով ալ ներկայութիւնս գօտեպնդող դէմքերով եւ դէպքերով հպարտանալ: Իսկ հիմա, ահա այս հսկայ գծանկարը: Գիտակցութեանս առջեւ ներկայ է էութիւնս: Ու կը յիշեմ...

Շնորհիւ իրեն հանդէպ մեր ունեցած սիրոյն, պաշտամուքին եւ յարգանքին, տարիներով քալեցինք գաղափարի եւ գեղեցկութեան ուղիներով: Շատ յաճախ ալ, իբրեւ ուխտապահ մարդոց հաւաքականութիւն, հաւատացիք եւ երագեցիք: Ո՛չ մէկ օտար գեղեցկութիւն կրցաւ կաշառել մեր ազգային ապրումները: Ու այսպէս շարունակեցինք կեանքին հետ զալող եւ զուգահեռ սրտով, ապրիլ: Փորձեցինք մեր հայու կեանքը մեզի հետ պահել: Հաւատացիք, որ օր մը երեւոյթները կրնան փոխուիլ: Նայեցանք իրականութեան հարազատի աչքերով, զննող եւ թափանցիկ մտքով, խորունկ հետաքրքրութեամբ, շիտակ եւ արթուն պահելով մեր մտքերը, արդարութեան եւ սիրոյ գաղափարներով: Ու կեանքի վատ խաղերու օրէնքներուն տակ, յոյսը լաւին ու բարիին մեր մէջ պահեցինք իբրեւ սրբութիւն:

Գիտեմ որ ներկայիս մեր ազգային կեանքը նստած է տրտմութեան աղբիւրին մօտ:

Նաեւ կը զգամ որ այսպէս հանդարտ ու հաճելի եւ խորք ունեցող բառերով, դիմացի այդ նկարը, արդէն կամաց-կամաց սողալով, մտած է մտքիս մէջ, մտածումներու անթիւ փշրանքներ լեցնելով անոր ակօսներուն:

Հայ կեանքը տեղքայլի մէջ է,-կը կարդամ իր ձիւնապատ ճակտին վրայ արձանագրուած անտեսանելի տողերը: Ու կը սրտնեղիմ: Որովհետեւ,-կը շարունակեմ,- ամէն տեղ հայուն մօտ տակաւին վարանում կայ: Հարցեր ունինք անլուծելի, որոնք կ'ապրին հայու մեր երկնակամարին վրայ, իրիկնամուտի ստուերներու նման, գիրկ-գիրկի:

Համոզուած եմ, ինչպէս միշտ, այս սրբազան լեռը իր տեղէն, իր վերէն, իր ստորոտին ապրող զաւակներու քայլերուն կը հետեւի, վերապրեցնելով յիշատակները ինծի նման հազարաւոր ուխտաւորներուն ու ինքն է դարձեալ յատակօրէն կը պատգամէ.-

Սրբազան պատգամ մը, որ ուրիշ բան չէ եթէ ո՛չ, նորոգել ազգային կեանքի մեր հետքերը միաժամանակ հաւատարիմ մնալով մեր հաւատքին ու կամքին:

Լերան մեզի հասնող պատգամը, նաեւ մաքուր կանչ մըն ալ է...հաստատօրէն:

bedig43@aol.com

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՍ՝ ՀԱԼԷՊԻ ՀԱԶԱՐԱՄԵԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ Է.

Լալա Միսկարեան-Մինասեան



Դիմացի դրացիներուս առօրեան աչքերուս առջեւ կը բացուէր, քանի որ նեղ էր թաղը ու մարդիկ, մանաւանդ տաք ամիսներուն, բաց կը ձգէին դուռ ու լուսամուտ, առտուան ու երեկոյեան ընթրիքը (եւ օդին) կը վայելէին պատշգամբ: Անոնց հետ որեւէ յարաբերութիւն չունէի, ընդհանրապէս համեստ արհեստաւոր մարդիկ էին: Իւրօրինակութեամբ կը զատուէր ճիշդ դիմացի ընտանիքը: Միջին տարիքի կին մըն էր, ծխող կիներու յատուկ խոպոտ ձայնով: Շատ լուրջ ամուսին մը ունէր, որ երբեք հայեացքը չէր բարձրացներ այլ կողմ նայելու: Սակայն տիկինը շատ աշխոյժ էր, ու բացի ականդակաւ ուրբայթներէ, երբ Նոր Գիւղը ոտքէ գլուխ լոզանք կ'ընդունէր, այս տիկինը ամռան տաք օրերուն գովանալու իւրօրինակ կերպ ունէր. ծխախոտը բերանը, ջուրի խողովակը (խորթում) ձեռքը, ամէն յետմիջօրէ կը լոզներ ամբողջ բնակարանը՝ կը լուար յատակ ու ...պատերը: Մարդը ազատ էր իր տունին մէջ, քանի դեռ քովինին չէր վնասեր:

Անտարակոյս ազատ էր նաեւ անոր քովի ընտանիքը: Հոն ապրող արհեստաւոր երիտասարդը ըստ էութեան սիրահարուած էր դրացիին աղջնակին ու իր բաղձանքները յաճախ պատճառ կը դառնային դժբախտութեանս, քանի որ յանկարծ թաղով մէկ կը սկսէր ոռնալ թուրք երգիչ մը, որուն կողկողագին երգով մեր տղան սէր կը բացատրէր աղջկան: Ես դէմ չէի անոնց երջանկութեան, սակայն տակաւին մանկութենէս անբացատրելի հակակրօնք ունեցած եմ թրքերէն երգին հանդէպ: Թերեւս այն պատճառով, որ մայրս գուսանական երգերը կը լսէր (Շերամ, Ջիւանի, Աշոտ) ու ինք ալ յաճախ կ'երգէր իր հիանալի ձայնով, որմէ ճաշակս կը ձեւաւորուէր: Աւելի ուշ, ատոր միացած էր ամէն թրքականի հանդէպ գիտակցուած թշնամանքէն եկող մերժումս: Ուղղակի հիւանդանալու չափ կ'ազդէր վրաս այդ կլկլոցը: Որքան ալ որ ամուր գոցէի դուռ ու պատուհան, որքան ալ որ տունին խորքերը փորձէի ապաստանիլ, նոյն ուժգնութեամբ կը հնչէր երգը ու կը սողցէր ջիղերս: Դրացուհիիս միջնորդութեան դիմելու քանի մը փորձէ ետք, զայրոյթս մղուած, խենթ միջոցի մը կը դիմեմ՝ պատշգամ կը հանեմ նուազարկիչը, վերջին բարձրութեան կը դնեմ ձայնը, կը միացնեմ ծանր դասական կտոր մը, ներս կ'անցնիմ, կը գոցեմ դուռ ու պատուհան ու կը սպասեմ «վրէժիս» արդիւնքին: Ի վերջոյ, երբ ինքս չեմ դիմանար այդ խլացուցիչ ձայնին, կ'անջատեմ գործիքը ու կը լսեմ թրքերէն հայիոյանքներ, որոնց իմաստը դրացիի որդւոյն «նուրք» ձայնի որակէն կը հասկնամ...: Հասունացումի աստիճան մը կը բարձրանամ, հասկնալով, որ տգէտին իր լեզուով, չարին չարով պատասխանելը որեւէ իմաստով ի օգուտ քեզի չէ: Մանաւանդ ամէն պարագային լռելուս անհրաժեշտութիւնը կը



հասկնամ, երբ առաւօտ մը կ'արթննամ փոխադարձ երգասացութենէ: Պատկերը գոր տեսայ, վայել էր իտալական ֆիլմերու. դիմացի վերջնայարկի ու մեր վերջնայարկի ընտանիքներուն անդամները ամբողջ կազմով հանդիպակաց պատշգամները դիրքեր գրաւած՝ փոխադարձ հայեցողութիւններ կու տային իրարու, անշուշտ՝ թրքերէնով համեմուած:

Ու յիշեցի հնդկահայ բանաստեղծ-մանկավարժ Մեսրոպ Դաւիթի Թադիսադեանի (1803 - 1858) աղաղակ-տողերը, որ գրած էր Էջմիածնայ Մայր տաճարի խղճուկ վիճակը տեսնելէն ետք՝ «...Ի՞նչ ալ քեզ հոս մնալ, փախի՛ր շուտով, Մեսրո՛պ Դաւթեան»: Բայց ո՞ր էր փրկութիւնս... բարեբախտաբար Սփիւռքի Կոմիտէն արդէն նաւով դրկած էր մեր մեծ գրադարանը, կային նաեւ ձայնապնակները՝ Հայաստանէն մեր բերած հարստութիւնը: Կը կարդայի նաեւ Հայաստան ինծի չհանդիպած՝ Սփիւռքի մէջ հրատարակուած արեւմտահայ ու սփիւռքահայ գրականութիւն՝ դասական ուղղագրութեամբ: Նոր բան շատ կար, քանի որ 70-ականներուն Հայաստանի մէջ արեւմտահայ գրողները ընտրութեամբ կը տպուէին, իսկ սփիւռքահայերը՝ գրեթէ ոչ: Սովետ իշխանութեան երբեք պէտք չէր հայերու ազգային գիտակցութեան ընդլայնումը:

Մի կարծէք, թէ նպատակադրուած եմ միայն ժխտական դիտանկիւնէ ներկայացնել այն օրերու իմ ապրածները. բնա՛ւ. շատ բարեացակամ մարդիկ ալ կային հոն, ոմանք յիշեցի եւ շատերը պիտի յիշեն: Պարզապէս դրականը չի ցնցեր մարդս, աւելին՝ մեր չափանիշերը գոհացնող դրականը մենք բնական կը գտնենք ու յաճախ շատ չենք կեղծանար անոր վրայ, մինչդեռ վատը ներագոյելու ու հաստատուելու մեծ կարողութիւն ունի: Ուզեմ կամ ոչ՝ հալէպեան իմ կեանքին այդ վեց տարիները ինչպէս որ դրոշմուած են մտքիս մէջ, նոյնը պիտի գրեմ ու մտադիր չեմ զարդարել:

Պիտի խոստովանիմ որ, հակառակ իմ վերապահ ու գոցուած պահուածքիս՝ «հայաստանցի հարսին» հանդէպ մարդոց վերաբերմունքը դրական հետաքրքրութեան ծիրին մէջ էր: Ես էի որ տակաւին պիտի ճանչնայի Սփիւռքը, անոր շերտերը, մարդոց շարժառիթներու խորքային պատճառները, հաւաքական ու անհատական հոգեբանութիւնը: Մինչդեռ շրջանակս տակաւին շատ նեղ էր, գրեթէ միայն Նոր Գիւղը իր շուկայով ու մզկիթով: Նոր Գիւղը այն օրերուն բոլորովին տարբեր տեսք ու բովանդակութիւն ունէր: Բնակչութիւնը առաւելապէս հայ էր, հետեւաբար առանց արաբերէն իմանալու շուկայի գնումներ ընելուս միշտ օգնողներ կը գտնուէին: Առաջին անգամ տեսայ մզկիթ, որ փոքր ու անշուք շինութիւն մըն էր: Հայկական թաղամասին մէջ անոր ներկայութիւնը շատ ալ բնական չէր, իսկ հայերը զայն կը կոչէին «Հայաստանի դագուիւր»: Այդ արտայայտութիւնը ու թրքերէն բառին իմաստը հասկնալու համար, բերանացի տեղեկութիւններ ստացայ, թէ մզկիթը կառուցուած էր, երբ Հայաստան ներգաղթի հետեւանքով զուտ հայկական թաղամասը նօսրացած ու տեղը այլադաւաններ բնակած էին:

Հայրենակարօտ հայերու այդ օրերու յոյսերը, ուրախութիւնն ու հիասթափութիւնը կ'արժեն, որ կարճ ընդմիջումով մը յիշենք պատահած հիմնական իրադարձութիւնները:

Պետական թղթաբանութեան մէջ 1946 - 1948 թուականներու ներգաղթը Խորհրդային Հայաստան «Մեծ հայրենադարձութիւն» կոչուած է: Երեւոյթը, որ օրին խորապէս ցնցած էր ամբողջ Սփիւռքը, տարբեր երեսներ ունէր՝ Հայաստանը կը փայփայէր Առաջին Աշխարհամարտին կորուսեալ հայրենիքի գէթ մէկ մասը վերադարձնելու յոյսը, Սովետական Միութիւնը, յաղթելով Բ. Աշխարհամարտին, իր իշխանութիւնը աւելի մեծ տարածքներու վրայ հաստատել կ'ուզէր: Ստորեւ նոյնութեամբ, միայն ուղղագրութիւնը փոխելով՝ կը տեղադրեմ ու իքիփետիայի «Մեծ Հայրենադարձութիւն (1946-1948)» յօդուածէն հատուած մը՝



«Բ. աշխարհամարտէն յետոյ յաղթանակած Խորհրդային Միութիւնը ուզում էր իր ազդեցութեան գօտիներն ընդլայնել ոչ միայն Արեւելեան Եւրոպայում, այլ նաեւ՝ Թուրքիայում եւ Իրանում: Մեծովեան նեղուցներ դուրս գալու ծրագրում կար նաեւ Կարս-Արտասիանի նահանգները Հայաստանին եւ Վրաստանին միացնելու հարցը: Պահանջն աւելի համոզիչ դարձնելու համար որոշուել էր օգտագործել հայկական խաղաքարտը: Դաշնակից պետութիւններին՝ Մեծ Բրիտանիային եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներին պետք էր բացատրել, որ Թուրքիայի նկատմամբ հողային պահանջը ոչ թէ ակրեսիա է, այլ՝ Ա. աշխարհամարտի հետեւանքով հայերի կորցրած իրաւունքների վերականգնում: Դաշնակից պետութիւնները Պոստդամի քոնֆերանսում բնականաբար չընդունեցին Խորհրդային Միութեան ծրագիրը»:

Մինչդեռ հայերը արդէն յուսավառ էին: 1945-ի աշնան, Ստալինի համաձայնութիւնը ստանալէ ետք, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ. կոնդակով մը կը դիմէ դաշնակից պետութիւններու դեկավարներուն՝ հայկական հողերը Հայաստանին վերադարձնելու եւ հոն հայրենադարձները բնակեցնելու խնդրանքով: Խնդրանքը մերժուեցաւ, սակայն ներգաղթը սկսան կազմակերպել: Ստեղծուեցան ներգաղթի կոմիտէներ՝ սփիւռքահայոց մէջ (յատկապէս՝ ԱՄՆ, Յունաստան, Սուրիա- Լիբանան, Իրան) քարոզչութիւն տանելու նպատակով:

Կ'երեւակայեմ թէ Սփիւռք առաքուած համայնավար քարոզիչները ինչպիսի՞ գունաւոր սուտերով նկարագրեցին Խորհրդային Հայաստանը, որ սփիւռքահայը զայն դրախտ կարծեց: Մինչդեռ Հայաստանը պատերազմին գրեթէ 300.000 զոհ տուած, անօթի, վիրաւոր էր եւ մինչեւ վերջին կաթիրը քամուած տնտեսութիւն ուներ: Ընդհանուր խանդավառութեան մէջ՝ արձանագրուողներուն թիւը շատ մեծ էր, բայց զանոնք ամէնքը ընդունելու, տունով ու աշխատանքով ապահովելու Հայաստանի կարելիութիւնը՝ խիստ չափաւոր: Այդ ներգաղթին Հայաստան կրցաւ ընդունիլ միայն

90.000 սփիւռքահայ, որ, ամէն պարագայի, դրական երես ալ ուներ՝ պատերազմի հետեւանքով առաւել եւս սակաւաթիւ մնացած բնակչութեան համալրում էր:

Իսկ հետեւանքը...

-Բաղձալի հայրենիք երթալու սիրոյն տուն-տեղ ծախսած, իրերը կապած ու ապա մերժում ստացողներու հիասթափութիւնն ու կրկին վերականգնումի ճիգերը,

-Ընտանիքներու պառակտում, երբ մէկ մասը գացեր, մնացածը մերժուեր է, ու իջեր է երկաթէ վարագոյրը,

-Սփիւռքի մէջ գժտութիւններու մեծ պատճառ, քանի որ սթափ միտք ունեցողներ չէին կրնար հաւատալ առասպելներու, թէ «Հայաստանի մէջ աղբիւրներէն կաթ կը հոսի» կամ «Հայաստանի մէջ ցանկապատերու տակ հաւկիթ լեցուն է» ... ու դէմ էին անգամ մը գաղթած ժողովուրդի կրկին գաղթելուն:

-Մեծ երազանքով Հայրենիք գաղթածներու կրած անպատմելի հոգեբանական, նիւթական ու ֆիզիքական գրկանքներ: Անոնք շուտով հասկցան, թէ երկիրէն կամ իրենց կեանքէն որեւէ դժգոհութիւն յայտնելը Սիպերիոյ դռները կը բանար, ու ոչինչ գաղտնի կը մնար, ուստի Սփիւռքի իրենց հարազատներուն դրկուող նամակները այլաբերութեան նմոյշներ դարձան: Բարեւներ կը դրկէին շատոնց մեռած հարազատներու՝ «Ես քիչը ըսեմ՝ դուն շատը հասկցիր» յուշելով:

Այնուամենայնիւ՝ արդէն 1949-ին անոնցմէ հազարաւորներ գաղափարապէս անյուսալի (այսինքն՝ լրտես) նկատուելով՝ արքորուեցան Սիպերիա...:

<https://kantsasar.com/news/61652-2/>

ԽՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ



Օ՛, անչափ կ'ուզէր հեռանալ ամէն ինչէն, նոյնիսկ չմտածել, յանձնուիլ լոկ բնութեան տարերքին եւ հանգստանալ զինք խռովող, մտատանջող հարցերէն: Անջատուիլ առօրեայէն, աշխարհի ու մարդկանց տաղտուկէն, թոհուրոհէն եւ պարզապէս ապրելու խորհուրդը զգալ ու վայելել...

Գուցէ սա էր պատճառը որ պաշտելու չափ կը սիրէր պոեզիան, բանաստեղծութիւնը, ուր կ'առանձնանայ գրողը ինքն իրեն հետ եւ կը գրուցէ սեփական հոգիին հետ, կը հնարէ բառեր այդ գրոյցը արտայայտելու եւ ներքին գոհունակութիւն մը կը զգայ այդ հնարողական կամ ստեղծագործական ընթացքին մէջ...

Իսկ եթէ կարենայ խոհ-ապրումի կամ գաղափար-յոյզի ամբողջ աշխարհ մը խտացնել տողի մը կամ տողերու մէջ, որչա՛ փ երջանիկ կը զգայ ինքզինք, մտածեց, այդ գիտին համար, կարծես ամբողջ աշխարհի հարստութիւնը պարզեւած ըլլային իրեն...

Պատրա՛նք էր սա, թերեւս: Բայց կրնա՞յ պատրանք ըլլալ այն երջանկութիւնը զոր կը զգայ ստեղծագործողը, ո՛վ ալ ըլլայ ան, թէկուզ ամէնէն խոնարհ մշակը գիրի:

Գիրի, պոեզիայի կախարդանքը ուրիշ է,- մտորեց, սեփական փորձով հաստատելով իր մտորումը:

Իր յիշողութեան գանձարանէն դուրս բերաւ այնպիսի տողեր, պոետական տողեր, որոնք կեանքի, իր ազգի, մարդ էակի ամբողջ փիլիսոփայութիւն մը կը խտացնէին իրենց մէջ...եւ անչափ թանկագին էին...

Հետեւեալ տողերը յատկապէս տողանցեցին մտքին մէջ.-

-Տո՛ւր ինձի Տէ՛ր ուրախութիւնն անանձական: (Միսաք Մեծարենց)

-Հայ յեզուն տունն է հայուն աշխարհի չորս ծագերուն: (Մուշեղ Բշիսան)

-Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգւոյս: (Վահան Թէքէեան)

-Ի՛նչ որ գնաց ուրիշին վերադարձաւ անուշցած ու զօրացած՝ հոգիիս հետ մնալու յաւիտեան: (Վահան Թէքէեան)



-Մէտրո՛ւյ, հայ դարերու ղիմաց կեցող դուն աղամանդեայ ապառաժ»...(Միամանթօ)

-Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկայ»...(Եշիշէ Չարենց)

-Թէ որ մայրը կայ, խիղճը չի մեննի, թէ որ խիղճը կայ, Աստուած կը յառնի»։ (Յովհաննէս Շիրազ)

-Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է գուարթ»...(Միսաք Մեծարենց)

Վերջ չունէին նման տողերը՝ մեր հարուստ գրականութեան մէջ, տողեր որոնք աղօթքի պէս կը հնչէին եւ խորունկ պատգամ ունէին իրենց մէջ։

Եւ կը մտածէր թէ արդե՞օք Նախախնամութեան օրհնութիւնը չէ՞ր որ իր ուշ տարիքին, յանկարծօրէն, իր սրտի ու մտքի անյայտ ընդերքներէն բխէր, աւելի ճիշդ ժայթքեր էին բանաստեղծական տողեր, գեղեցկացնելով իր մայրամուտը ոսկեհուր ճաճանչներով...

Ի՞նչ երկնապարգեւ գանձ պիտի կարենար զինք աւելի ուրախացնել, քան այն բառերն ու տողերը որոնք կը շարէր թուղթին թէ համացանցի պաստառին վրայ եւ որոնք հարագատ ցոլքն էին իր հոգիին, կը մտմտար երախտագին ապրումներով։

Այդ տողերը, կը շարունակէր ան, կը փարատէին իր մենութիւնը, գոյութենական իր վախերը, արտայայտութիւն կու տային իր ներաշխարհին, խոստովանանքի պէս էին իր խղճի խորանին առջեւ, միաժամանակ սիրոյ ու կարեկցանքի խօսք էին մարդ էակին, իր ժողովուրդին, համայն աշխարհին։ Բայց ամէնէն շատ ու ամէնէն աւելի, անոնք բալասան էին իր խռովայոյզ սրտին...

Օ՛, մարդիկ, ի մասնաւորի գործնապաշտ մարդիկ, պիտի մտածէին գուցէ որ հիմա բանաստեղծութիւնը եւ նման զիրեր ա՛լ կարդացող չունէին, «ուտուելիք» ալ չէին, հետեւաբար անպէտք էին...Է՛հ, մարդ էակը, տակաւ դառնալով նիւթապաշտ ու ընչաքաղց, մոռացութեան մատներ էր հոգիի քաղցը...Բայց «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ», կրկնեց Աստուածաշնչեան պատգամը եւ անդրադաձաւ անոր խորագոյն ճշմարտութեան, յետոյ ալ կրկնեց մեծ բանաստեղծ Աւետիք Բսահակեանի տողերը. «Ես ձեզ ասում եմ կը գայ ոգու սով եւ դուք կը քաղցէք ճոխ սեղանի մօտ, Կ'ելլէք մուրալու յափրած որկորով, հրեղէն խօսքի, վեհ խօսքի կարօտ»։ Ի գուր չէ, մտածեց, որ մարդիկ հոգեկան անձկութեան ապրումներ կ'ունենային, երջանիկ չէին էապէս, նոյնիսկ նիւթական անսահման բարիքի մէջ յղփացած, հեռացած ըլլալով հոգին լիացնող ու զայն հիացնող սնունդէն, հոգեսնունդէն։

Ի՛նչ լաւ պիտի ըլլար, մտորեց, եթէ հոգին եւ մարմինը ներդաշնակօրէն ապրէին իրար հետ։ Յայնժամ գուցէ լռէին հրանօթները եւ մուսաները խօսէին։ Իսկ եթէ լռէին մուսաները, եթէ գեղեցիկ խօսքը դադրէր, պոեզիան դադրէր, արուեստները դադրէին...Օ՛, այն ատեն մարմինն ու հոգին կը հեռանային իրարմէ եւ ՄՄՀ կը տիրէր ամէնուր...Չէ, չէ, այդպիսի բան անկարելի է, ըսաւ ան ինքն իրեն։ Նոյնիսկ եթէ հրանօթները որոտային, մուսաները պիտի երգէին, այլապէս աշխարհը ի՛նք կ'ոչնչանար...



Հետեւաբար եզրակացուց որ նոյնիսկ եթէ կարդացող չըլլար, ինք հոգեկան կարիքը կը զգար գրելու, լիցքաթափուելու, սիրտը պարպելու իր տողերով...թէկուզ ինք իր առջեւ: Այդքանն ալ բաւարար չէ՞ր: Հոգիին հետ այդ գրոյցն էր էականը, վերջ ի վերջոյ, կը մտորէր: Անշուշտ ենթագիտակցաբար կը զգար որ առնուազն քանի մը հոգի կը գտնուէր, որոնք կարդային իր գիրը...եւ ինք՝ գրելով, գիտակից թէ անգիտակից, կամայ թէ ակամայ, կը գրուցէր անոնց հետ՝ ամենայն անկեղծութեամբ եւ սրտբացութեամբ...Կը գրուցէր ի մասնաւորի իր հոգիին եւ խղճին հետ:

Եւ դարձեալ երջանիկ զգաց այս հազուագիտ առանձնաշնորհումին համար, հազար փառք տալով Բարձրեալին, որ շարունակ բառեր կը յուշէր իրեն՝ իր ամենէն դժուար պահերուն, իր կեանքը բազմակի հարստացնելով Ոսկեղենիկ մեր լեզուին անզուգական հմայքով:

Երան Գույումճեան

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Հայ ըլլալը դժուար բան է, մաքառիլ ու պայքարիլ է, երբեմն գլուխը պատին տալ է, մորմոքիլ բայց ժպտիլ է, ցաւը կուլ տալ ու խնդալ է, ներքին կրակով մղկտալ է, ներքին լոյսը վառ պահել է, միշտ յուսալ ու հաւատալ է: Հայ ըլլալը ոգի ու կամք է, թռիչք ու սլացք է, հայ ըլլալը առեղծուած է:

.....

Յաղթանակները միայն մարտի դաշտին վրայ չեն ըլլար...ՅԱՂԹԱՆԱԿ է երբ ամէն օր քրտնաջան աշխատանքով կը կառուցես երկիրդ, կ'արարես, հող կը մշակես, ընտանիք կը պահես, բարի գործ

մը կ'ընես...ՅԱՂԹԱՆԱԿ է երբ գլուխ չես ծռեր, չես յուսալքուիր, կը մաքառիս ու կը պայքարիս կեանքի դժուարութիւններուն, խոչընդոտներուն դէմ...ՅԱՂԹԱՆԱԿ է երբ կը յաղթես դուն քեզի, քու մութ կիրքերուդ, մոլութիւններուդ, սին ու մանր նկատառումներուդ, յանուն հեռահար պայծառ նպատակի, կեանքի լայնախոհ ըմբռնումի...Եւ այսպէս , կեանքի ամէն վայրկեանը կարելի է ՅԱՂԹԱՆԱԿԻ վերածել...

.....

ՀՈԳԻՆԵՐՈՒ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄ...Սա ամենէն սարսափելին է, երբ մարդ անհատը՝ ազատութեան պայմաններուն մէջ իսկ, կը ստրկանայ օտար եւ խորթ բարքերու, կուրօրէն կը կապկէ ուրիշինը, կը ստրկանայ նիւթին ու դրամին, կը կլանուի հակամշակոյթի չարժէքներով, անձնատուր կ'ըլլայ լոկ մարմնական անցողիկ վայելքներուն...ամբողջովին կորսնցնելով իր հոգիի եւ մտքի ԱՆԿԱՄՈՒԹԻՒՆԸ, ներքին ԱԶՍՏՈՒԹԻՒՆԸ.: Եթէ



կարենաս հոգիդ ու միտքդ ազատ պահել, յայնժամ ոչ մէկ բան կրնայ ստրկացնել քեզ...: Հագուագիւտ հոգիներ կան, որոնք՝ նոյնիսկ բանտային պայմաններու տակ, կրցած են պահել իրենց ազատ անհատականութիւնը...Ի՛նչ վսեմութիւն՝ արդարեւ:

.....

Ամէն ապրող էակ թերեւս ունի անպայմանօրէն իր ԽԱՉԸ, իր ԽԱՉԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ՝ երեւո՛յթ թէ աներեւո՛յթ...Ոմանք այդ խաչը կը տանին արժանապատուութեամբ, անգանգատ, որքա՛ն ալ ծանր ըլլայ ան...Ուրիշներ տեսաբար կը գանգատին, նոյնիսկ եթէ համեմատաբար թեթեւ ըլլայ իրենց խաչը...Խաչի ճանապարհը շատ խորհրդանշական է: Իյնալով եւ ելլելով, տառապելով եւ չարչարուելով՝ գուցէ կ'անցնինք կեանքի ամէնէն մեծ դպրոցը եւ կը սորվինք՝ ամէնէն յետին բանին մէջ իսկ ուրախութիւն զգալու հագուագիւտ ԻՄԱՍՏՈՒԹԻԻՆԸ...Առանց տառապանքի եւ դժուարութեան, կա՞յ արդեօք երջանկութիւն:

.....

Կան ԱՆՍԱԿԱՐԿԵԼԻ ու ԱՆԿԱՇԱՌԵԼԻ սրբութիւններ, արժեքներ, գաղափարներ, որոնք մեր հաւաքական ինքնութեան էական բաղադրիչ են եւ չեն կրնար բանակցութեան գործիք ծառայել որեւէ մէկ պետութեան կամ կառոյցի հետ: Անոնցմէ են մեր ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ, ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԸ, ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ, ՄՇԱԿՈՅԹԸ, ՀԱՅՈՑ ՊԱՍՏՈՒԹԻԻՆԸ, ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՈՒԹԻԻՆԸ եւ այսպէս շարունակ:

.....

Երբ մինակ եմ, մարդկանց կարօտը կը խեղդէ զիս...լաւ մարդկանց, բարեկամի, ծանօթի, հարազատի...Երբ շրջապատուած եմ մարդկանցով, կարօտը կը զգամ միայնութեանս, ես ինձ հետ ըլլալու, մտածելու, խորանալու...Բայց մարդ էակը խորքին մէջ միշտ ալ առանձին է՝ իր մտորումներուն, զգացումներուն, յոյզերուն եւ տագնապներուն հետ...

.....

Առանց ՔՆՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ, մարդիկ ամբողջովին կ'ենթարկուին լրատուամիջոցներու թէ այլ միջոցներու քարոզչութեան, անոնց ուղեղալուացումին (brainwashing), կը կորսնցնեն սեփական միտքով հարցերը դիտելու, դատելու, ինքնուրոյն մտածելու կարողութիւնները: Այսպիսով, անոնք կը դառնան խամաճիկներ, որոնք թութակաբար կը կրկնեն իրենց հրամցուած տեղեկութիւնը, գովազդը կամ քարոզչութիւնը, հետզհետէ կորսնցնելով ԲՈՒՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻԻՆԸ տեսնելու իրենց աստուածապարգէ կարողութիւնը: Ներկայիս ամբողջ աշխարհիս մէջ, ներառեալ ցաւօք մեր երկիրը, երկիրը կառավարող վերնախաւը կը փորձէ ձեռնավարել (manipulate) հանրային կարծիքը ի նպաստ իր սեփական շահերուն: Սա ոչ թէ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻԻՆ է, այլ ԲՈՆԱՊԵՏՈՒԹԻԻՆ բոլոր առումներով: ՍԹԱՓԵԼՈՒ ՊԱՀՆ Է ԲՈԼՈՐԻՆ ՀԱՄԱՐ ԱԼ:

.....



Ամէն մէկ հայ անհատապէս անչափ տաղանդաւոր է, բանիմաց, բազում կարողութիւններով օժտուած, բայց ինչպէ՞ս է որ նոյն այդ հայր միւս հայուն հետ չի համագործակցիր ընդհանրապէս, չընդունիր անոր արժանիքները, հոգեմտաւոր թէ այլ ընդունակութիւնները, չընդունիր իր ես-էն բան մը զիջիլ յանուն հաւաքականին, յանուն ընդհանրականին, կը պնդէ ի՛րը, իրենի՛նը, եւ կը բռունցքովի միայն ծայրայեղ պարագային, երբ մահու կենաց սահմանին վրայ է...իսկ այդ սահմանը երեւոյթ թէ աներեւոյթ կայ ներկայիս ալ եւ գրեթէ բոլոր ժամանակներուն:

.....

Նիւթապաշտ եւ շահամոլ այս աշխարհիս մէջ, դեռեւս կան ճշմարտութեան եւ արդարութեան հաւատացող, զանոնք պաշտպանող, բարձրաձայնող անվեհեր մարդիկ, որոնց վրայ յենուած է աշխարհի ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ...առանց որուն փուլ կու գայ ան, որքա՛ն ալ հզօր ըլլան արհեստագիտութիւնը, գիտութեան խելայեղ նուաճումները, ռազմական-տնտեսական ոյժը...Աշխարհը ոտքի պահողը, զայն գեղեցկացնողը, զայն իմաստաւորողն ու արժեւորողը ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ է...այսօր եւ ընդմիջտ...: Աւաղ, սակայն, անիկա՝ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, շատերու համար, միայն ՀԵՔԻԱԹ է ու ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ:

.....

Պետականութեան կայացում...Ճիշդ է որ գերխնդիրը այս է մեր բոլորին համար ալ: Բայց հարց տալու չե՞նք, թէ Ի՞նչ ՏԵՍԱԿ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ Կ՛ՈՒՋԵՆՔ ՍՏԵՂԾԵԼ...Այդ Պետութիւնը ի՞նչ արժեհամակարգով պիտի ապրի ու գործէ...: Ակնյայտ փաստ է որ չի բաւեր լոկ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ պետութիւն ունենալ, եթէ այդ ժողովրդավար պետութիւնը պիտի կառավարուի «արեւմտեան դեմոկրատիայի» մոտէլով, որուն կենդանի պատկերը մեր աչքերուն առջեւ է...այսինքն այն, որ իր քաղաքակրթութեան ՇԱՀԱՄՈԼ նկարագրով հասած է իր զարգացման վախճանակէտին...: Այս մասին պէտք է բարձրաձայնել, քննարկման լուրջ թեմա դարձնել...: Մեր նոր որակի ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ պէտք է հիմնուի մեր ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՅԹԷՆ բխող ԱՐԺԷՔՆԵՐՈՒ համակարգին վրայ, եւ ոչ՝ ԳԵՐՇԱՀՈՅԹ ապահովելու միայն միտող ՍՊԱՌՈՂԱԿԱՆ, ՕԳՏԱՊԱՇՏ ՈՒ ԵՄԱՄՈԼ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ «ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ» վրայ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Ժամանակի թաւալումով, տեսայ ա՛յն ինչ չէի տեսած,
Տեսայ խորքը մակերեսին տակ թաքնուա՛ծ ու պահուրտա՛ծ,
Դիմակները տեսա՛կ-տեսա՛կ տակաւ ինկան, փշրուեցան,
Մերկ հոգին ինձ յայտնուեցաւ անքօղածա՛ծկ ու անշղա՛րշ:
.....

Ժամանակը իր գգուանքո՛վ իմաստութեան նշոյլ բերաւ,
Բացաւ աչքս, սիրտս, հոգիս խորհուրդին մեծ կեանքի-մահուան,
Որոնք զատուած են իրարմէ բարակ մազէ մը միմիայն,
Այսօր կ'ապրիս շէնշող, գուարթ, վաղը գուցէ եւ մահանաւ:
.....

Եւ հասկցայ թէ ոչի՛նչ էր իմ սորվածը դպրոցներէն,
Քանզի կեանքը ապրելո՛վ լոկ կը հասկնաս շատ մը բաներ,
Մորթիդ վրայ պիտի զգաս տաքն ու պաղը, ցաւն ու վիշտը,
Այնպէս ինչպէս լոյսը զգաս տեսնելով լոկ իր ճաճանչը:
.....

Ծաղկէ ծաղիկ, նեկտարի պէս, հիւթեղ բառեր եմ հաւաքեր
Հայ դպրութեան ոսկի հանդէ՛ն, արեւայտրդ պարտեզներէ՛ն,
Որ տող հիւսեմ մեղրի նման, ընթերցողիս զայն մատուցեմ,
Երջանկանամ լոկ տեսնելով մեղրին համը ճաշակողներ...
.....

Ու՛ր ալ ըլլաս, ի՛նչ ալ ըլլաս, ԴՌԻՆ պիտ' ընտրես կեանքիդ ուղին,
Կամքով ազատ գոր Աստուած է քեզ ընծայած գերթ գանձ անգին,
Պիտի կերտես քու ապագադ հաւատարիմ քու ընտրութեան,



Որ կը բխի նկարագրէդ, ներքին ես-էդ, տեսիլքէդ ալ:

.....

Խառնաշփոթ աշխարհիս մէջ,
Մի՛րտ իմ, որո՞ւն պիտ' հաւատաս,
Մարգարէներն այնքատ շատ են,
Իրա՛ւն ինչպէ՞ս պիտի ճանչնաս...

.....

Եթէ Ես-դ տկար ու սին
Դուն կարենաս ձուլել Մենք-ի,
Կը բազմանա՛ս, հզօ՛ր դառնաս,
Զերթ ապառաժ ադամանդեայ:

.....

Ուժի լեզուն կը հասկնայ
Աշխարհը նենգ, խաբեպատիր,
Ողորմութիւն է մնացեալը,
Ուժի լեզուով պիտի խօսինք:

.....

Գիրդ եթէ չհասկնան, մի՛ գայն վատներ չիմացողին,
Խօսքդ եթէ չուզեն լսել, անցի՛ր, գնա՛, ա՛լ մի խօսիր,
Կամովին կոյր ու փակ միտքը ինչպէ՞ս բանալ պիտ' կարենաս,
Թէ ունենաս հրաշք բանալի, փականն ժանգոտ ինչպէ՞ս բանալ...

.....

Մեր շերեփը մնաց թղթեայ,
Մեր սիրտերը՝ միամիտ անչափ,
Մինչ թշնամին մեզ սպառնաց
Եաթաղանովն իր երկաթեայ:

.....

Եւ զարմացայ այս աշխարհի բիւր խաղերէն,
Դիմակներէն, բիւր դաւերէն, խարդաւանքէն,
Իմն անդիմակ, պարզ ու շիտակ, մերկ դէմք մըն էր՝
Թատրոններուն մէջ աշխարհիս խայտաբղէտ:

.....

Միրոյ անհուն ովկեանին մէջ,
Մօր սերն է միշտ անդաւաճան,
Միրոյ պէս-պէս լեռներուն մէջ,
Մօր սերն է սուրբ լեռ Արարատ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ